



# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- **ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ**
- **ԴԱՏԱԽԱՉԻՆ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԻՆ ՎԱՐՈՒՅԹԻՅ ՇԵՌԱՅՆԵԼԸ**  
Որպես դատավարական պատասխանատվության միջոց
- **ՊԱՏԺԻ ԴԵՐԸ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**
- **ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՅՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՐ ՎԵՐԱՇՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**  
Էությունը և բովանդակությունը
- **ԻՐԱՎԱԿԱՆ ԳԼՈՐԱԼԻՉԱՅԻՆԱ**



ՀՀ Նախագահի 2014 թվականի հունվարի 8-ի հրամանագրով ՀՀ գլխավոր դատախազ ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ շնորհվել է արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՃՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՃՈՒՄ**

*խորհրդակցություն ՀՀ գլխավոր դատախազությունում*



ՀՀ գլխավոր դատախազ **ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆԸ** 2014 թվականի հունվարի 11-ին հրավիրել էր միջգերատեսչական խորհրդակցություն՝ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների, Երևան քաղաքի և վարչական շրջանների, մարզերի, զինվորական դատախազության կենտրոնական մարմնի և կայազորների ղեկավար դատախազների, ՀԶԾ, ՊԵԿ, ԱԱԾ, ՊՆ և ՀՀ ոստիկանության քննչական մարմինների ղեկավար անձնակազմների մասնակցությամբ:

# №81

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀՐԱՏԱՐԱՎՎՈՒՄ Է 1997 ԹՎԱԿԱՆԻՑ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԷՄԻԼ ԲԱԲԱՅԱՆ - նախագահ  
ԳՈՒՐԳԵՆ ԱՄԲԱՐՅԱՆ  
ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ  
ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ  
ՎԱՅՐԱՄ ՇԱՀԻՆՅԱՆ  
ԳԱՌՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ  
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

## Գլխավոր խմբագիր՝ Գ. ԱՄԲԱՐՅԱՆ

Խմբագրության հասցեն.  
375010, ք. Երևան, Հանրապետության փ., 85  
Հեռախոս՝ 52-33-76, Ֆաքս՝ 56-76-72  
[www.genproc.am](http://www.genproc.am)  
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,  
ոճը, տառաձևերը և էջադրումը՝  
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

Հանձնված է արտադրության՝  
24.02.2014 թ.  
Ֆորմատ՝ 70 X 100 1/16  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 8 պայմ. մամուլ  
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է  
«Պոլիգրաֆ բիզնես» ՍՊԸ տպարանում  
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2014 թ.

# 2014

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների հիմնադրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

# ՂԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

*Խորհրդակցություն ՀՀ գլխավոր դատախազությունում*



Սկիզբը՝ կազմի II էջ

Խորհրդակցության ընթացքում ՀՀ Գլխավոր դատախազը ներկայացրեց ՀՀ գլխավոր դատախազության դիրքորոշումը՝ Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների իրականացման շրջանակներում հանցավորության դեմ պայքարում քրեական քաղաքականության բարելավման, արդյունավետության բարձրացման, աշխատանքների պատշաճ կատարման ու կազմակերպման մի շարք հիմնարար հարցերի վերաբերյալ, դատախազության գործունեության առաջնահերթ խնդիրներից համարելով.

- Կաշառակերության և կոռուպցիոն երևույթների ցանկացած այլ դրսևորման բացառում քրեական վարույթի ցանկացած փուլում.

- քննիչների և դատախազների մասնագիտական ունակությունների բարձրացմանը ուղղված միջոցառումների իրականացում.

- քաղաքացու սահմանադրաիրավական և քրեադատավարական իրավունքների լիարժեք և ամբողջական պաշտպանվածություն՝ նախաքննական մարմնի և հսկողություն իրականացնող դատախազի՝ օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների բարելախիղճ ու մասնագիտական բարձր մակարդակի իրականացման շնորհիվ, անկախ կասկածյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի շահերի պաշտպանությանը փաստաբանի ներգրավվածությունից կամ ոչ որակյալ իրավաբանական օգնության տրամադրումից:

«Իրավապահ մարմինների գործունեությունն առնչվում է մարդու իրավունքների Սահմանադրությամբ և միջազգային կոնվենցիաներով պաշտպանվող այնպիսի ոլորտների հետ, ինչպիսիք են անձի ազատությունները, անձնական կյանքը, սեփականության իրավունքը և այլն: Հետևաբար, դատա-

խազության և նախաքննական մարմինների գործողությունները կարևոր նշանակություն ունեն մարդու իրավունքների պաշտպանության, օրինականության և օրենքի գերակայության ամրապնդման ոլորտներում»,- ընդգծեց ԶԶ գլխավոր դատախազը:

«Կաշառակերության կամ կոռուպցիոն որևէ այլ դրսևորում պատժվելու է օրենքի ողջ խստությամբ, այս հարցում որևէ զիջում չի կարող, խորհուրդ չեմ տա իմ այս խոսքերի ճշմարտացիությունը ստուգել սեփական փորձով»,- նշեց Գ. Կոստանյանը:

Խորհրդակցության մասնակիցներից ներկայացվեց վերոնշյալ խնդիրների լուծման և գործնական կիրառման ապահովման նպատակով կազմված «Գլխավոր դատախազի հրամանի նախագիծը», որը կոնկրետ հանձնարարականներ է պարունակում դեպքերի, պատահարների, հանցագործությունների հաշվառման, օպերատիվ-հետախուզական գոր-

ծուներության և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու ոլորտներում քննչական մարմինների և դատախազության աշխատանքների կազմակերպման վերաբերյալ: Քննարկման արդյունքում փաստաթղթում կներառվեն նաև քննչական ստորաբաժանումների ղեկավարների առաջարկությունները:

Ամփոփելով խորհրդակցությունը, ԶԶ գլխավոր դատախազը նշեց, որ որևէ մեկը, անկախ հասարակության մեջ զբաղեցրած սոցիալական կարգավիճակից, երբևէ չէր ցանկանա, որ իր կամ իր զավակների ճակատագիրը որոշվեր անարդար, կոռումպացված կամ անզրգեստ քննիչի կամ դատախազի կողմից:

ԶԶ գլխավոր դատախազը, ամփոփելով 2014թ. առաջին միջգերատեսչական խորհրդակցության աշխատանքները, ևս մեկ մեկ անգամ շեշտեց հայտնի ճշմարտությունը, որ «ավելի լավ է մի քանի մեղավոր մնան անպատիժ քան մեկ անմեղ մարդ պատժվի»:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

Հ Ր Ա Մ Ա Ն

17 հունվարի 2014թ. Երևան N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ  
327-327.6-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԎԵՐԱՊԱՅՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌՆՉՎՈՐ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԎԵՐԱՊԱՅՆԸՄ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-327.6-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների (այսուհետ՝ **գորակոչից խուսափելու հանցագործություններ**) վերաբերյալ նյութերի նախապատրաստման և քրեական գործերով նախաքննության իրականացման իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը փաստում է, որ այդ դեպքերի զգալի մասով անհրաժեշտություն է առաջանում քրեաիրավական զննատանական տալու նաև զինվորական ծառայության կարգի դեմ ուղղ-

ված, ինչպես նաև զորամասի տարածքում կատարված կամ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնում և կազմակերպություններում (որոնց բաժնետոմսերի կառավարման լիազորությունը հանձնված է պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնին) ծառայություն իրականացնող անձանց վերագրվող հանցագործություններին:

Դրանից ելնելով, շատ դեպքերում զորակոչից խուսափելու հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը միացվում են դրանց առնչվող՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված, ինչպես նաև զորամասի տարածքում կատարված կամ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնում և կազմակերպություններում ծառայություն իրականացնող անձանց վերագրվող առերևույթ հանցագործություններ կատարված լինելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության քննիչների վարույթում գտնվող քրեական գործերին, կամ վերջիններս ի հայտ են գալիս զորակոչից խուսափելու հանցագործությունների վերաբերյալ նյութերի նախապատրաստման կամ քրեական գործերով վարույթի ընթացքում: Այդ նյութերն ու քրեական գործերն ամբողջությամբ, կամ քրեական գործերից անջատված քրեական գործերն ուղարկվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության քննչական ծառայություն, և դրանց հետագա նախապատրաստումն ու քրեական գործերով նախնական քննությունը, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, կատարվում է նույն ծառայության քննիչների կողմից: Համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության քննչական ծառայությունում նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարումն ու դատախազական հսկողությունը, ինչպես նաև դատախազությանը վերապահված մյուս լիազորություններն ու դրանց առնչվող գործառույթները, իրականացնում են Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության դատախազները՝ ըստ համապատասխան իրավասության սահմանների, մինչդեռ, ի սկզբանե, զորակոչից խուսափելու հանցագործությունների վերաբերյալ նյութերը նախապատրաստում և քրեական գործերի նախաքննությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության ՔԳՎ քննիչները, իսկ դրանց կապակցությամբ դատախազությանը վերապահված համապատասխան լիազորություններն ու դրանց առնչվող գործառույթները՝ մարզերի, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունները (**այսուհետ՝ քաղաքացիական դատախազություններ**):

Նման տարանջատումը գործնականում հակասություններ է առաջացնում քաղաքացիական և զինվորական դատախազությունների միջև՝ նրանց կողմից հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության ապահովման, ինչպես նաև դատախազության վերապահված համապատասխան լիազորությունների և դրանց առնչվող գործառույթների, այդ թվում՝ հանցավորության վիճակի, կառուցվածքի, շարժընթացի, քննչական և դատախազական աշխատանքների մասին համապատասխան վիճակագրության վարման, ուսումնասիրությունների, ստուգումների, վերլուծությունների, ամփոփումների, վերահսկողության միասնական իրականացման ու դրանց համար պատասխանատվության անհատականացման առումներով, ինչն էլ, իր հերթին, խաթարում է դատախազության լիազորությունների իրականացման և քրեական միասնական քաղաքականության մշակման ու դրա նկատմամբ վերահսկողության սահմանման գործընթացների պատշաճ և արդյունավետ իրականացումը:

Նկատի ունենալով, որ դեպքերի զգալի մասում միաժամանակ առկա են վերոհիշյալ հանցագործությունների հատկանիշները և այդ կապակցությամբ քաղաքացիական ու զինվորական դատախազությունների կողմից դատախազությանը վերապահված լիազորությունների իրականացումը առաջացնում է հակասական իրավիճակներ, ուստի զորակոչից խուսափելու և դրա հետ կապված՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված, ինչպես նաև զորամասի տարածքում կատարված կամ պաշտ-

պանության բնագավառի պետական լիազոր մարմնում և կազմակերպություններում ծառայություն իրականացնող անձանց վերագրվող առերևույթ հանցագործությունների վերաբերյալ նյութերի նախապատրաստման և քրեական գործերով նախնական քննության նկատմամբ դատավարական ղեկավարման ու դատախազական հսկողության, մեղադրանքի պաշտպանության, դատական ակտերի բողոքարկման, դրանց առնչվող՝ դատախազությանը վերապահված մյուս լիազորությունների և գործառույթների իրականացման արդյունավետությունը, միասնականությունն ու միատեսակությունն ապահովելու, քրեական միասնական քաղաքականություն մշակելու ու դրա նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով, գործնականում անհրաժեշտություն է առաջացել զորակոչից խուսափելու հանցագործությունների վերաբերյալ նյութերի նախապատրաստման և քրեական գործերով վարույթի նկատմամբ դատախազությանը վերապահված համապատասխան լիազորությունների ու դրանց առնչվող գործառույթների իրականացումը վերապահել Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությանը:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ, 6-րդ կետերով, 25-րդ հոդվածի 3-րդ մասով, 30-րդ և 31-րդ հոդվածներով՝

### Յ ու մ ա յ ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-327.6-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ նյութերի նախապատրաստման և քրեական գործերով նախնական քննության նկատմամբ դատավարական ղեկավարման ու դատախազական հսկողության, մեղադրանքի պաշտպանության, դատական ակտերի բողոքարկման, ինչպես նաև դրանց առնչվող՝ դատախազությանը վերապահված մյուս լիազորությունների ու գործառույթների իրականացումը վերապահել Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներին, դատախազություններին (ավագ դատախազներին (դատախազներին))՝ ըստ դրանց համապատասխան իրավասության սահմանների:

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները ղեկավարող դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազներին՝

1) Ձորակոչից խուսափելու հանցագործությունների վերաբերյալ նյութերի նախապատրաստման և քրեական գործերով իրականացվող նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարման ու դատախազական հսկողության, մեղադրանքի պաշտպանության, դատական ակտերի բողոքարկման, ինչպես նաև դրանց առնչվող՝ դատախազությանը վերապահված մյուս լիազորությունների ու գործառույթների իրականացման կապակցությամբ կազմված համապատասխան բոլոր վարույթներն ու մյուս փաստաթղթերը, տարածքային ենթակայության կարգով և ըստ համապատասխան իրավասությունների սահմանների, փոխանցել համապատասխանաբար՝ Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազներին և կայազորների զինվորական դատախազություններին՝ ըստ ներքոհիշյալ բաշխման.

ա. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների դատավարական ղեկավարման ու դատախազական հսկողության տակ գտնվող համապատասխան վարույթներն ու մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննչական բաժնում քննվող գործերի բաժնին, իսկ վե-

րահսկողության, ինչպես նաև Երևան քաղաքի դատախազության վերահսկողության տակ գտնվող համապատասխան վարույթներն ու մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության քրեական հետապնդման ոլորտում կայազորների զինվորական դատախազությունների գործունեությունը վերահսկող բաժնին:

բ. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազների դատավարական ղեկավարման ու դատախազական հսկողության, ինչպես նաև վերահսկողության տակ գտնվող համապատասխան վարույթներն ու մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազներին:

գ. Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, Կոտայքի և Արմավիրի մարզերի դատախազությունների դատավարական ղեկավարման ու դատախազական հսկողության տակ գտնվող համապատասխան վարույթներն ու մյուս փաստաթղթերը՝ Երևանի կայազորի զինվորական դատախազությանը:

դ. Արագածոտնի և Շիրակի մարզերի դատախազությունների դատավարական ղեկավարման ու դատախազական հսկողության տակ գտնվող համապատասխան վարույթներն ու մյուս փաստաթղթերը՝ Շիրակի կայազորի զինվորական դատախազությանը:

ե. Լոռու և Տավուշի մարզերի դատախազությունների դատավարական ղեկավարման ու դատախազական հսկողության տակ գտնվող համապատասխան վարույթներն ու մյուս փաստաթղթերը՝ Լոռու կայազորի զինվորական դատախազությանը:

զ. Գեղարքունիքի մարզի դատախազության դատավարական ղեկավարման ու դատախազական հսկողության տակ գտնվող համապատասխան վարույթներն ու մյուս փաստաթղթերը՝ Սևանի կայազորի զինվորական դատախազությանը:

է. Արարատի և Վայոց ձորի մարզերի դատախազությունների դատավարական ղեկավարման ու դատախազական հսկողության տակ գտնվող համապատասխան վարույթներն ու մյուս փաստաթղթերը՝ Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազությանը:

ը. Սյունիքի մարզի դատախազության դատավարական ղեկավարման ու դատախազական հսկողության տակ գտնվող համապատասխան վարույթներն ու մյուս փաստաթղթերը՝ Գորիսի կայազորի զինվորական դատախազությանը:

2) ենթակա համապատասխան դատախազներին հանձնարարել շարունակել գորակոչից խուսափելու հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով դատարաններում սկսված և նրանց կողմից մեղադրանքի պաշտպանության, դատական ակտերի բողոքարկման, ինչպես նաև դրանց առնչվող՝ դատախազությանը վերապահված մյուս լիազորությունների և գործառույթների իրականացումը:

3. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին՝ առաջարկելով համապատասխան հանձնարարականներ տալ իրավասու պաշտոնատար անձանց և ստորաբաժանումներին:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալների վրա՝ ըստ համակարգման ոլորտների:

5 . Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, գլխավոր դատախազության վարչությունների ու բաժինների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ղեկավարին:

**Գ.Ս.ԿՈՍՏԱՆՅԱՆ**



# ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպանին

ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանն ընդունել է Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Ֆեֆերնին: Խոսելով Հայաստանում դատախազության համակարգի բարեփոխումների մասին, Գևորգ Կոստանյանն առանձնացրել է երկու ուղղություն որոնք, ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնում լինելու են իր հատուկ ուշադրության կենտրոնում, դրանք են՝ անպատժելիության մթնոլորտի իսպառ բացառումը և կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը: Այս երկու ոլորտում շոշափելի արդյունքներ գրանցելու համար անհրաժեշտ միջոցառումներից ՀՀ գլխավոր դատախազը կարևորել է քրեական օրենսդրության կիրառման միասնական մոտեցումների ամրագրումը, արդյունավետ վերահսկողությունը և թերացումների համար պատասխանատվության միջոցների անխուսափելի կիրառումը:



Դեսպանի խնդրանքով, գլխավոր դատախազն անդրադարձել է 2013թ. հունիսի 1-ին Սյունիքի մարզում տեղի ունեցած միջադեպին, ներկայացնելով ինչպես գործող քրեական օրենսդրության պահանջները այնպես էլ՝ նախաքննության մարմնի և պաշտպանա-

կան կողմի իրավական գնահատականները:

Դեսպանը վերահաստատել է ՀՀ դատախազության կողմից իրականացվող բարեփոխումներին աջակցությունը շարունակելու պատրաստակամությունը, հույս հայտնելով, որ ՀՀ դատախազության և ԱՄՆ դեսպանատան միջև համագործակցությանն առաջիկայում նոր թափ կհաղորդվի:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համագործակցությունը: Իրականացվող և իրականացվելիք բարեփոխումներին ԱՄՆ դեսպանատան աջակցության ոլորտների և ծավալների ճշգրտման նպատակով, պարբերաբար կազմակերպել համդիպումներ և խորհրդակցություններ:

## ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՍՏՐԱՄԲՈՒՐԳՈՒՄ

Ստրասբուրգում, 2014թ. հունվարի 29-ին կայացել է ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Դին Շպիլմանի հանդիպումը: ՀՀ գլխավոր դատախազը վերահաստատել է, որ Հայաստանի Հանրապետությունը բարձր է գնահատում Եվրոպական դատարանի դերը մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության և ժո-

ղովրդավարության ամրապնդման գործում:

Հանդիպմանն, ի թիվս այլ կարևոր հարցերի, քննարկվել են ՀՀ դատախազության և Եվրոպական դատարանի միջև ուղղակի համագործակցության, դատարանի նախադեպերի արդյունավետ կիրառման և այդ առումով դատախազների մասնագիտական կարողությունների բարձրացմանն առնչվող հարցեր:

\* \* \*

ՀՀ գլխավոր դատախազ **Գևորգ Կոստանյանը** Ստրասբուրգում հանդիպում է ունեցել նաև եւս մարդու իրավունքների հանձնակատար **Նիլս Մուլթնիեկսի** հետ: Գևորգ Կոստանյանը բարձր է գնահատել եւս մարդու իրավունքների հանձնակատարի հետ համագործակցությունը՝ որպես ՀՀ գլխավոր դատախազ և ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության ներկայացուցիչ, ընդգծելով փոխգործակցության կարևորությունը ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև միջազգային տարբեր ատյաններում ՀՀ քաղաքացիների իրավունքների արդյունավետ պաշտպանության առումով: Հանդիպման ընթացքում զրուցակիցները քննարկել են մարդու իրավունքների պաշտպանությանն առընչվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ:



# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

*Ստրասբուրգում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեծ պալատում կայացել է «Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի» գործի լսումը:*



Գործով հայցվորը նշել է, որ ինքը ստիպված է եղել լքել իր տունը 1992թ-ին Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտության պատճա-

ռով՝ ՄԻԵԴ դիմումատուն եղել է 1929թ-ին ծնված **Մինաս Սարգսյանը**, ով մահացել է 2009թ-ին: Մինաս Սարգսյանի որդին և դուստրը ճանաչվել են գործով

իրավահաջորդներ: Հայցվոր կողմը ներկայացնում էին **Ֆիլիպ Լիչը, Նարինե Գասպարյանը, Արման Ալոյանը և Վահե Գրիգորյանը:**

Ֆիլիպ Լիչը ներկայացնելով գործը՝ նշել է, որ Մինաս Սարգսյանը և նրա ընտանիքը ապրել են Շահունյանի շրջանի Գյուլիստան գյուղում՝ երկհարկանի առանձնատանը՝ իր հարակից շինություններով: Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդյունքում պատերազմի ժամանակ Գյուլիստանը ռմբակոծվել է ադրբեջանական զինված ուժերի կողմից և գյուղի ողջ բնակչությունը՝ ներառյալ դիմումատուն և նրա ընտանիքը, լքել են Գյուլիստանը՝ փրկվելու համար, այնուհետև հնարավորություն չեն ունեցել հետ վերադառնալ:



Ինչպես ընդգծել է Լիչը, Ադրբեջանն ընդունում է, որ Գյուլիստանը գտնվում է իր հսկողության տակ և այս պարագայում նա պարտավոր է ապահովել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով հաստատված սեփականության իրավունքը, այնպես, ինչպես ՄԻԵԴ նախադեպային՝ Իլասկուն ընդդեմ Մոլդովայի գործի դեպքում: Սակայն մինչ այժմ Ադրբեջանը ոչինչ չի արել հայցվորների իրավունքների պաշտպանության համար:

Դիմումատուի բողոքը ՄԻԵԴ-ում այն է, որ նա ստիպված տեղահանվել է Գյուլիստանից, և Ադրբեջանի կառավարությունը շարունակում է մերժել նրան՝ թույլ չտալով վերադարձնել իր ունեցվածքն ու տունը:

Դիմումատուն հենվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի, այն է սեփականության պաշտպանություն, 8-րդ հոդվածի՝ անձնական և ըն-

տանեկան կյանքի իրավունքի հարգում, և 13-րդ հոդվածի՝ արդյունավետ պաշտպանության իրավունքի վրա:

Սագսյանների կողմը՝ հենվելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի վրա, այն է անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելում, 8-րդ և 9-րդ հոդվածների վրա՝ կրոնի ազատություն, բողոքում է Ադրբեջանում հայկական գերեզմանատների նկատմամբ վանդալիզմից և ոչնչացումից:

Սագսյանների ներկայացուցիչ Նարինե Գասպարյանը նշել է, որ Ադրբեջանի կառավարությունը պետք է հոգ տաներ նաև Գյուլիստանում

գտնվող հայցվորների ազգականների գերեզմանների մասին, այնինչ արվել է ճիշտ հակառակը՝ գերեզմաններն ավիրվել և վանդալիզմի են ենթարկվել:

«Սարգսյաններն ընդդեմ Ադրբեջանի» գործով, ըստ հայցվոր կողմի, խախտվել է նաև կոնվենցիայի 14-րդ հոդվածը՝ այն է խտրականության արգելում: Սարգսյանների կողմը պնդում է, որ Ադրբեջանում ապրող միայն էթնիկ հայերն էին դառնում բռնության թիրախ և Ադրբեջանի կառավարությունը «չէր կարողանում» հետաքննել հայերի նկատմամբ հարձակումները կամ տրամադրել համապատասխան փոխհատուցում՝ նրանց սեփականությունն անօրինական զբաղեցնելու համար, ինչպես նաև հայկական գերեզմանների ոչնչացման համար:

Հայցվորները պահանջում են՝ հնարավորություն տալ իրենց վերադառնալ Գյուլիստան և ստանալ համապատասխան փոխհատուցում:

ՄԻԵԴ-ում «Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի» գործով որպես երրորդ

կողմ ներգրավված Հայաստանի կառավարության ներկայացուցիչ **Գևորգ Կոստանյանն** անդրադարձել է կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածին՝ ասելով, որ Հայաստանի կառավարությունը ևս պնդում է, որ տեղի է ունեցել հայցվորների իրավունքների խախտում: Գյուլիստանը, որտեղ ապրել են Սարգսյանները, գտնվում է Ադրբեջանի ամբողջական վերահսկողության տակ:

Ինչպես նշել է ՀՀ կառավարության ներկայացուցիչը, հայկական եկեղեցիները և գերեզմանները վանդալիզմի են ենթարկվում և պատասխանող կողմն այս առումով որևէ հակափաստարկ չի ներկայացրել:

**Գևորգ Կոստանյանը** դատարանին առաջարկել է այս առումով իրականացնել հետազոտական առաքելություն, որը կօգնի նրան գործով որոշում կայացնելու համար:

Հայաստանի կառավարությունը ևս պնդում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում և որ խտ-

րականության հիմքով են Ադրբեջանի կողմից իրականացվել բռնություններ կոնկրետ էթնիկ հայերի նկատմամբ, ինչի վառ ապացույցն էլ Ռամիլ Սաֆարովի կողմից **Գուրգեն Մարգարյանի** կացնահարումն էր, ով հերոսացվեց Ադրբեջանում:

ՄԻԵԴ-ում գործով պատասխանող կողմ հանդիսացող Արբեջանի կառավարության ներկայացուցիչների հիմնական պնդումներն այն էին, որ Ադրբեջանը չունի ամբողջական վերահսկողություն Գյուլիստանում, քանի որ այն գտնվում է հայ-ադրբեջանական շփման գծում և տարածքը ականապատված է: Այս հիմքով ադրբեջանական կառավարությունը նշում է, որ տարածքը խիստ վտանգավոր է քաղաքացիների համար և կառավարությունը չի կարող ապահովել այնտեղ բնակվող քաղաքացիների անվտանգությունը:

Նշենք, որ Սարգսյանների կողմից ընդդեմ Ադրբեջանի հայցը ՄԻԵԴ բերվել է 2006թ-ի օգոստոսի 11-ին:

## **ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

### ***Պաշտոնատար անձանց կոռուպցիոն գործողությունների շուրջ մամուլի հրապարակումների վերաբերյալ***

**2013թ. դեկտեմբերի 23-ին ՀՀ գլխավոր դատախազությունը հանդես է եկել հայտարարությամբ, որում ասված է.**

«ՀՀ գլխավոր դատախազությունը վերահաստատում է իր պատրաստակամությունը, յուրաքանչյուր հաղորդման ընթացք տալ բացառապես իրավական հարթությունում, ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում իրեն վերապահված լիազորու-

թյունների շրջանակում, ինչը իմպերատիվ պահանջ է ցանկացած իրավական, ժողովրդավարական հասարակարգում, նաև դրական է գնահատում Գլխավոր դատախազի առաջարկությանը հետևած արագ արձագանքները:

Խուսափելու համար հանրության շրջանում թյուր կարծիք ձևավորելուց, որ մամուլում տպագրված նյութերը չեն արժանանում պատշաճ ուշադրության և չեն ստանում համապատասխան լուծում՝ պարզաբանում ենք, որ համապա-

տասխան տեղեկատվությունը, հողվածք, տեսաձայնագրությունը, լուրը, որպեսզի առիթ հանդիսանա քրեական գործ հարուցելու համար, պետք է համապատասխանի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական նորմերին:

Մասնավորապես, եթե հաղորդման հեղինակը ֆիզիկական անձ է, ապա, վերջինս նախևառաջ անձամբ պետք է ներկայանա իրավապահ մարմին, գրավոր կամ բանավոր ներկայացնի իր հայտարարությունը, թե ինչի վերաբերյալ է իր հաղորդումը, իրազեկման աղբյուրը և այլ տեղեկություններ, որոնց ինքը տիրապետում է:

Ֆիզիկական անձի ներկայությունը պարտադիր պայման է.

ա/ անձը իր ստորագրությամբ պետք է հաստատի հաղորդումը.

բ/ եթե լրացել է նրա 16 տարին, միաժամանակ նաև նախազգուշացվի սուտ մատուցման համար քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին, ինչը հաստատում է իր ստորագրությամբ:

Եթե հանցագործության առերևույթ հատկանիշներ պարունակող հրապարակման, տեսաձայնագրության, լուրի, հողվածի բովանդակությունը հիմնված է բացառապես ֆիզիկական անձի կողմից ներկայացվող տեղեկատվության վրա, կամ այդ անձը ինքն է առաջին դեմքով հանդես գալիս հրապարակայնորեն, ապա այդ հրապարակային հաղորդումը նույնպես ենթակա է քննարկման ֆիզիկական անձի կողմից ներկայացվող վերոնշյալ հաղորդման կարգին համապատասխան:

Անդրադառնալով, մամուլում, որոշ դատավորների և դատախազության աշխատակիցների վերաբերյալ հրապարակված հողվածների, մասնավորապես՝ «Վիզկոն» ՍՊԸ-ի նախկին տնօրեն Պավել Անդերսոնի 2012թ. հուլիսի 10-ի տեսաձայնագրության, դրա սղագրության, և 1in.am լրատվական կայքում 2013թ.

դեկտեմբերի 13-ին հրապարակած՝ «Կաշառակեր դատավորների և դատախազների անուններ՝ Գլխավոր դատախազին» վերտառությամբ, փաստաբան Հակոբ Ճարոյանի հետ հարցազրույցի վերաբերյալ, տեղեկացնում ենք.

Պավել Անդերսոնի ելույթի տեսագրության բովանդակությունը պատշաճ ուսումնասիրվել է, ստուգվել են քրեական գործ հարուցելու առիթի օրինակությունը և հիմքերի բավարար լինելը, և պայմանավորված Պավել Անդերսոնի բացակայությամբ Հայաստանի Հանրապետությունից, հնարավոր չէ վերջինիցս, որպես հանցագործության մասին հաղորդում տվող ֆիզիկական անձի, վերցնել պատշաճ հաղորդում հանցագործության վերաբերյալ, կատարել անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ, հիմնավորելու կամ հերքելու համար նրա կողմից մատնանշված հանգամանքերը:

Սակայն, ՀՀ գլխավոր դատախազությունը հուսով է և ակնկալում է վերջինիս արձագանքը և երաշխավորում է, որ իրավապահ մարմինների հետ հա-

մագործակցելու դեպքում նրա նկատմամբ կկիրառվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98.1 հողվածով նախատեսված անհրաժեշտ և արդյունավետ պաշտպանության միջոցները:

«Կաշառակեր դատավորների և դատախազների անուններ՝ Գլխավոր դատախազին» հրապարակման վերաբերյալ հայտնում ենք, որ այդ հարցազրույցում նշված հանգամանքները ուսումնասիրման առարկա են դարձել դեռևս 2013թ. օգոստոսի 23-ին «Հրապարակ» օրաթերթում տպագրված «Կոռուպցիան Երևան քաղաքի դատախազությունում» հողվածի և ՀՀ հատուկ քննչական ծառայությանը օգոստոսի 24-ին Հ. Ճարոյանի ներկայացված հաղորդման հիման վրա ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստած նյութերով, որի ընթացքում Հակոբ Ճարոյանը



իր բացատրությամբ ներկայացրել է միայն քրեական գործով ձեռք բերված ապացույցների և կայացված դատավարական որոշումների կապակցությամբ իր վերլուծությունները, չնշելով տեղեկություն կամ փաստ, որը կվկայեր քրեական գործի նախաքննության ընթացքում որոշումներ կայացնելու ժամանակ քննիչի և նախաքննության նկատմամբ դատավարական հսկողություն իրականացնող դատախազների ոչ օրինաչափ նկատառումներ, նյութական շահագրգռվածություն ունենալու մասին:

Անկախ փաստերի բացակայությունից, փաստաբանի ներկայացրած դիտարկումների կապակցությամբ, նյութերի նախապատրաստման ընթացքում հանձնարարություն է տրվել ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչությանը մի շարք հանգամանքներ պարզելու ուղղությամբ ձեռնարկել համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, սակայն դրանց արդյունքում ևս տեղեկություններ ձեռք չեն բերվել քրեական գործի նախաքննության ընթացքում որոշումներ կայացնելու ժամանակ քննիչի կամ դատախազների կողմից կաշառք ստանալու, նյութական այլ շահագրգռվածություն, ինչպես նաև քրեական գործով անցնող անձանց հետ ոչ դատավարական հարաբերություններ ունենալու վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա 2013թ. սեպտեմբերի 25-ին որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին: Կայացված որոշումը Հ. Ճարոյանը քրեադատավարական օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չի բողոքարկել, դրա փոխարեն դարձյալ հրապարակային անդրադարձ է կատարել այն նույն հանգամանքներին, որպիսիք արդեն իսկ քննության առարկա են եղել:

Քրեական վարույթն իրականացնող մարմինը գնահատական է տվել նաև Հակոբ Ճարոյանի արարքին, եզրահանգելով, որ վերջինս, հանդիսանալով քրեական գործով ամբաստանյալի շահերի պաշտպանը, ընդամենն իր ներքին հա-

նոգմունքով գնահատել է պաշտպանյալին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսացած ապացույցների բավարարությունը, ինչպես նաև նրա հետ շահերի հակասություն ունեցող, մեղադրող ցուցմունքներ տված անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու օրինականությունն ու հիմնավորվածությունը, որպիսի պայմաններում, ընդամենը սուբյեկտիվ մեկնաբանություն տալու համար փաստաբանը ենթակա չէ քրեական պատասխանատվության սուտ մատնություն կատարելու համար

Սակայն, 2013թ. դեկտեմբերի 13-ի հարցազրույցում Հակոբ Ճարոյանը, բացի վերոնշյալից, նշել է նաև մեկ այլ քրեական գործի մասին, ինչի վերաբերյալ հայտնում ենք, որ փաստաբանը, իր վերլուծությունները և դատողությունները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացնելու դեպքում, դատախազությունը պատրաստ է պատշաճ ընթացք տալ բարձրացված մտահոգիչ այդ հարցերին ևս:

Այնուամենայնիվ, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում գործելու և իրավունքների ու ազատությունների պաշտպանության ընթացքում օրենքով սահմանված ընթացակարգերը հստակ պահպանելու նպատակով հարկ ենք համարում նաև պարզաբանել, որ հանցագործության մասին սուտ մատնություն կատարելը, եթե անձը գործել է՝ գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է, ինչպես նաև դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին, դատական ակտերի հարկադիր կատարողին զրպարտելը՝ կապված նախնական քննություն վարելու, դատարանի դատավճռի, վճռի կամ դատական այլ ակտի կատարման հետ, ինչպես նաև նույն արարքը, որը կատարվել է դատավորի նկատմամբ՝ կապված գործը կամ նյութերը դատարանում քննելու հետ, ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ և 344-րդ հոդվածներով նախատեսված արարքներ են»:

# ՀՀ ՂԵՍԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԴԱՐՉԱԲԱՆՈՒՄԸ

*Դատախազության նախորդ տարվա գործունեության մասին  
«ՀՀ զլխավոր դատախազի ներկայացրած հաղորդման շուրջ  
Ազգային ժողովի պետաիրավական հարցերի հանձնաժողովի  
հունվարի 22-ի նիստում ծավալված  
քննարկումների և զանգվածային լրատվամիջոցներով  
տարածված հրապարակային մեկնաբանությունների  
վերաբերյալ հայտնում ենք.*



ՀՀ զլխավոր դատախազ **Գևորգ Կոստանյանը**, Ազգային ժողովում, դեռ իր թեկնածության քննարկման ժամանակ է դրական արտահայտվել և ողջունել դատախազության աշխատանքի տարեկան հաշվետվությունը ներկայացնելու վերաբերյալ ԱԺ նախագահ **Հովիկ Աբրահամյանի** հարցադրումը, շեշտելով, որ «չնայած օրենքով սահմանվում է, որ դատախազը հաղորդում է ներկայացնում ԱԺ-ին, ու չի հստակեցվում՝ դա գրավոր է, թե բանավոր, բայց եթե ԱԺ օրենքում համապատասխան փոփոխություններ լինեն, այդ հաղորդումը կներկայացվի ԱԺ նիստին»:

ՀՀ զլխավոր դատախազի դիրքորոշումը չի փոխվել, այլ հակառակը, զլխավոր դատախազությունը կարևորում է այդ ոլորտում իրավահարաբերությունների կարգավորումը, քանի որ ընդհանուր առմամբ, այդ իրավակարգավորումները բխում են պետական իշխանության մարմինների գործունեության հրապարակայնության պահանջներից:

ՀՀ զլխավոր դատախազությունը ներկայացրել է իր նկատառումները «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ, գտնելով, որ Նախագծում առկա են համակողմանի քննարկման կարիք ունեցող էական և սկզբունքային մի շարք հարցադրումներ: Մասնավորապես այդ հարցադրումները առնչվում են սահմադրականության համապատասխանության, նախաքննության գաղտնիքի պահպանման, կոնկրետ քրեական գործերի հրապարակային քննարկմամբ դատավարության կողմերի օրինական շահերի և իրավունքների պաշտպանության և հաշվետվության ներկայացման ժամկետների խնդիրներին:

Նկատի ունենալով ՀՀ զլխավոր դատախազության դիրքորոշման և բարձրացրած հարցերի շուրջ ծագած հակասական մեկնաբանությունները և խուսափելու համար հետագա թյուրըմբռնումներից՝ ստորև ներկայացնում ենք Նախագծի վերաբերյալ ՀՀ զլխավոր դատախազության՝ ՀՀ կառավարությունը ներկայացրած ամբողջական պատասխանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության  
աշխատակազմի ղեկավար-նախարար  
պարոն **Վ. Գաբրիելյանին**

Ի պատասխան ՀՀ կառավարության 2013 թվականի  
հոկտեմբերի 30-ի 02/10.1/16335-13 թվակիր գրության

Հարգելի պարոն Գաբրիելյան

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում քննարկվել է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը:

Կից ներկայացվում է նշված օրենքների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կարծիքը:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,  
արդարադատության առաջին  
դասի խորհրդական **Է.Բաբայան**

## **Կ Ա Ր Ծ Ի Ք**

*«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագիծ) նպատակ ունեն կարգավորելու ՀՀ դատախազության նախորդ տարվա գործունեության մասին ՀՀ գլխավոր դատախազի ներկայացրած հաղորդումը ՀՀ Ազգային ժողովում քննարկելու հետ կապված հարաբերությունները: Հարկ է նշել, որ նախագծի առկա իրավակարգավորումներն, ընդհանուր առմամբ, բխում են պետական իշխանության մարմինների գործունեության հրապարակայնության պահանջներից:*

*Սկզբունքորեն դեմ չլինելով ՀՀ դատախազության նախորդ տարվա գործունեության մասին ՀՀ գլխավոր դատախազի ներկայացրած հաղորդումը ՀՀ Ազգային ժողովում քննարկելու իրավակարգավորմանը՝ այնուամենայնիվ, Նախագծում առկա են համակողմանի քննարկման կարիք ունեցող էական և սկզբունքային մի շարք հարցադրումներ: Այսպես,*

1. ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ: Այս նորմից բխում է, որ այլ օրենքներով Ազգային ժողովին լիազորությունների վերապահումը սահմանադրականության տե-

սանկյունից կարող է համարվել խիստ խոցելի:

Նախագծով առաջարկվում է Ազգային ժողովին վերապահել ՀՀ դատախազության նախորդ տարվա գործունեության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի հաղորդումը քննարկելու լիազո-



րություն: Այս առումով առաջարկում ենք լրացուցիչ անդրադառնալ այն հարցին, թե «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով Ազգային ժողովին նման լիազորություն վերապահելն արդյոք համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Քանզի հարկ է նկատել նաև, որ օրինակ՝ Վերահսկիչ պալատի կողմից վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվության ներկայացումն Ազգային ժողով սահմանված է ՀՀ Սահմանադրության 83.4-րդ հոդվածով:

**2.** Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՀՀ գլխավոր դատախազի հաղորդման շուրջ անցկացվող քննարկումները իրենց հիմքում պետք է ունենան կոնկրետ քրեական գործերով նախնական քննության և օրենքով պաշտպանվող այլ տեղեկությունների ու տվյալների պահպանման իրավաչափ նպատակ: Առանձին քրեական գործերի քննության ընթացքի կամ առանձին դրվագների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազից պարզաբանումներ պահանջելը կարող է դառնալ քաղաքական կուսակցությունների կամ առանձին պատգամավորների կողմից քաղաքական շահարկման առարկա:

**3.** Նախագծում նշվում է, որ հարակից զեկուցմամբ հանդես է գալիս պետաիրավական ոլորտի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը:

Անհասկանալի է, թե պետաիրավական հանձնաժողովն ինչ նպատակով է հարակից զեկուցմամբ հանդես գալու, այդ զեկույցում ինչ հարցեր են քննարկվելու: Բանն այն է, որ ՀՀ գլխավոր դատախազի հաղորդումը ՀՀ Նախագահին և ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու պահից դառնում է վերջնական փաստաթուղթ, որի մեջ որևէ փոփոխություն չի կարող կատարվել, ուստի անհասկանալի է, թե պետաիրավական հանձնաժողովն ինչ տեսանկյունից պետք է քննարկման առարկա դարձնի ավարտուն փաստաթուղթը:

**4.** Նախագծում սահմանված է, որ ՀՀ գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի՝ մինչև մարտի 1-ը ՀՀ Ազգային ժողով և Հանրապետության Նախագահին է ներկայացնում դատախազության գոր-

ծունեության մասին հաղորդում: Հաղորդում ներկայացնելու նման ժամկետ նախատեսելիս, Նախագծի հեղինակները հաշվի չեն առել ՀՀ դատախազության գործունեության ամփոփման ընթացակարգերը: Բանն այն է, որ դատախազության տարեկան գործունեության ամփոփումը ենթադրում է ծավալուն աշխատանքների իրականացում, որն ընդգրկում է մասնավորապես հետևյալ փուլերը՝

- ՀՀ դատախազության համակարգում ընդգրկված դատախազությունները և կառուցվածքային ստորաբաժանումները, ըստ համապատասխան իրավասության սահմանների, տարբեր գերատեսչություններից հավաքագրում, համակարգում և ամփոփում են նախորդ տարվա գործունեության վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը (այդ թվում՝ հանցավորության վիճակի, կառուցվածքի, շարժընթացի, քննչական աշխատանքի, դատախազական լիազորությունների իրականացման և դատախազության գործունեության կազմակերպման մասին և այլն),

- անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացվում է ՀՀ գլխավոր դատախազություն, որտեղ այն համակարգվում, վերլուծվում և ամփոփվում է,

- ամփոփված տեղեկատվությունը և աշխատանքի արդյունքները ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների մասնակցությամբ քննարկվում են ՀՀ դատախազության համակարգում ընդգրկված բոլոր դատախազություններում, որի ընթացքում կանխորոշվում են տեղերում աշխատանքի հիմնական ուղղությունները, հիմնախնդիրները, դրանց լուծմանն ուղղված իրավակազմակերպական կառուցակարգերը,

ՀՀ դատախազության ամբողջ տարեկան աշխատանքի արդյունքները հաջորդ տարվա մինչև փետրվարի վերջն ամփոփվում են ՀՀ դատախազության կոլեգիայի ընդլայնված նիստում, որտեղ կանխորոշվում են առաջիկա համապատասխան ժամանակահատվածների կտրվածքով դատախազական լիազորությունների իրականացման և քրեա-

## ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

կան պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, չափորոշիչները, իրավակազմակերպական միջոցառումների իրականացման ծրագրերը, կանխատեսումները, աշխատանքի ծանրաբեռնվածությունը և այլն: Վերը նշված փուլերից յուրաքանչյուրին, ըստ անհրաժեշտության, նախորդում կան հաջորդում են տարբեր մակարդակներով անցկացվող քննարկումների, կարծիքների, առաջարկությունների, նկատառումների հավաքման, վերլուծության, համադրման և ամփոփման ենթափուլերը: Նշված աշխատանքների իրականացումը ժամանակատար է, ուստի մինչև մարտի 1-ը ԶԶ Ազգային ժողով հաղորդում ներկա-

յացնելու ժամկետն իրատեսական չէ: Հաշվի առնելով վերը նշված հարցադրումների կարևորությունը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է ևս մեկ անգամ քննարկման առարկա դարձնել Նախագծում առաջարկվող իրավակարգավորումները: ԶԶ գլխավոր դատախազությունը պատրաստակամ է մասնակցելու նման քննարկումներին և խնդրո առարկա հարցերի վերաբերյալ առավել հանգամանորեն ներկայացնելու իր դիրքորոշումը:

**Հայաստանի Հանրապետության  
գլխավոր դատախազություն**

## ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ



### ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԶԶ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ է նշանակվել **Գարիկ ԱՎԱԳՅԱՆԸ**:

ԶԶ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրախնտեգրման բաժնի պետ է նշանակվել **Թամարա ՇԱՔԱՐՅԱՆԸ**:

**Արման ԱՍԼԱՆՅԱՆԸ** նշանակվել է թիվ 3 կայազորի զինվորական դատախազ:

# ԴԱՏԱԽԱՁԻՆ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԻՆ ՎԱՐՈՒՅԹԻՅ ՀԵՌԱՅՆԵԼԸ՝ ՈՐՊԵՍ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՅ

## Արթուր ԴԱՄԲԱՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր

## Աիդա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի

ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնական

*Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում իրակա- նացվող դատաիրավական բարեփոխումների առանցքային հիմ- նախնդիրներից է քրեական վարույթի բնականոն ընթացքը երաշ- խավորող քրեադատավարական արդյունավետ կառուցակարգերի օրենսդրական հիմքերի կատարելագործումն ու երաշխավորումը: Տվյալ ոլորտում կարևոր նշանակություն ունի դատավարական սանկցիաների ինստիտուտը, որը նպատակ է հետապնդում ապահո- վել վարույթի համապատասխան մասնակիցների իրավաչափ վար- քագիծը, նրանց վրա դրված դատավարական պարտականություն- ների պատշաճ կատարումը:*

*ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը, (այսու- հետ՝ Նախագիծ) նպատակ ունենալով բարձրացնել քրեական դա- տավարության արդյունավետությունը, էապես կատարելագործել է քրեադատավարական պատասխանատվության միջոցների համա- կարգը: Նախագիծը, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարու- թյան գործող օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քր. դատ. օր.), դատավարա- կան սանկցիաների կիրառումը հնարավոր է համարել ոչ միայն դա- տական վարույթի, այլև մինչդատական վարույթի նկատմամբ: Բացի այդ, ընդլայնվել են դատավարական սանկցիաների ինստիտուտի տարատեսակները. ի թիվս այլոց՝ դատավարական սանկցիաներ են՝ իրավունքի իրականացման սահմանափակումը, կարճաժամկետ ձերբակալումը, դատարան հարկադրաբար ներկայացնելը, վարույ- թից հեռացնելը:*

Սույն հոդվածի շրջանակներում կվեր- լուծվեն «վարույթից հեռացնելու» և «վա- րույթից ազատելու» ինստիտուտների իրավական բովանդակությունը և հարաբե- րակցությունը, անդրադարձ կկատարվի

մինչդատական վարույթում դատախազին վարույթից հեռացնելու իրավակարգավոր- մանը, փաստաբանին վարույթից հեռաց- նելու հիմքերին և դատավարական կար- գին, ինչպես նաև մեղադրյալի պաշտպա-

<sup>1</sup> ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակման ժամանակ առաջարկվել է օրենսգրքով նախատեսել իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքը և մինչդատական վարույթում նախատեսել համապատասխան դատավարական սանկցիաներ: **Ղամբարյան Ա.** «Մինչդատական վարույթի բարեփոխումները ՀՀ քրեական դատավարույթու- նում»: Գիտագործնական ձեռնարկ, 2010, էջ 98:

նության իրավունքի համատեքստում կներկայացվի պաշտպանին վարույթից հեռացնելու ինստիտուտի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) իրավական դիրքորոշումը:

**«Վարույթից հեռացնելու» և «վարույթից ազատելու» ինստիտուտների իրավական բովանդակությունը և փոխհարաբերակցությունը:** ՀՀ քր. դատ. օր-ը «Անձանց բացարկելը և նրանց ազատելը քրեական դատավարությանը մասնակցելուց» վերտառությամբ 11-րդ գլխում նախատեսում է միայն փաստաբանին **վարույթից հեռացնելու ինստիտուտը:** ՀՀ քր. դատ. օր.-ով դատախազի՝ **վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության դեպքում կիրառվում է բացարկի կամ ինքնաբացարկի ինստիտուտը:**

Նախագծում օգտագործվում է երկու իրավական կատեգորիա՝ **«վարույթից ազատելը» և «վարույթից հեռացնելը»:** Վարույթից ազատելու ինստիտուտը սահմանվում է **«վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքներ»** վերտառությամբ 8-րդ գլխում, իսկ **«վարույթից հեռացնելու»** ինստիտուտը՝ **«դատավարական սանկցիաները»** վերտառությամբ 17-րդ գլխում: Նախագծով վարույթից հեռացնելու ինստիտուտը, ինչպես արդեն նշվել է, դիտարկվում է որպես քրեադատավարական սանկցիա (հոդված 148): Քննարկվող ինստիտուտի վերաբերյալ համանման դիրքորոշում բազմիցս արտահայտվել է նաև մասնագիտական գրականության մեջ<sup>2</sup>: Ինչպես նշում է **Ա. Ա. Տարանը**, քրեական դատավարության շրջանակներում բացարկը /վարույթից հեռացնելը/ վարույթին մասնակցելուց ազատելն է, որի արդյունքում օրենքով նախատես-

ված հանգամանքների առկայության դեպքում սուբյեկտը զրկվում է իր դատավարական իրավունքներն իրականացնելու հնարավորությունից և կորցնում իր դատավարական կարգավիճակը<sup>3</sup>: Նշված մոտեցումը միանգամայն արդարացված է, քանզի սուբյեկտի նկատմամբ քրեադատավարական սանկցիաներ կիրառվում են վերջինիս կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու, քրեադատավարական պարտականությունները չկատարելու դեպքում:

Նախագծում վարույթից ազատելու ինստիտուտը կիրառվում է այն դեպքում, երբ առկա են Նախագծի 68-րդ հոդվածով թվարկված վարույթին փաստաբանի մասնակցությունը բացառող հանգամանքներ: Ինչպես ՀՀ քր. դատ. օր-ով (հոդված 88, մաս 2), այնպես էլ Նախագծով (հոդված 64, մաս 2) փաստաբանի վրա դրված է **դատավարական պարտականություն՝** վարույթին իր մասնակցությունը բացառող հանգամանքների վերաբերյալ տեղեկատվության տիրապետման դեպքում այդ մասին հայտնել վարույթի շահագրգիռ մասնակիցներին, իսկ այն դեպքում, երբ առկա է համոզմունք իր մասնակցությամբ վարույթի բնականոն ընթացքի անհնարինության վերաբերյալ ներկայացնել վարույթին մասնակցելուց իրեն ազատելու մասին միջնորդություն: Փաստացի նման միջնորդություն չներկայացնելը, այսինքն՝ իր վրա դրված դատավարական պարտականությունը չկատարելը դիտվում է որպես դատավարական խախտում և հանգեցնում համապատասխան դատավարական սանկցիայի կիրառման, այն է՝ վարույթին մասնակցությունից հարկադիր հեռացնելուն: Այս առումով, կարծում ենք՝ վարույթին փաստաբանի մասնակցությունը բացառող հանգամանքների առկայու-

<sup>2</sup> Уголовный процесс. Учебник для вузов. Под ред. **В.П. Божьева**. 2-е изд., испр. и доп. М.: Спарк, 2000. С. 41, **Столмаков А.И.** Понятие и классификация санкций норм уголовно-процессуального права. Правоведение. 1977. N 3. С. 40-46, **Ампенов С. С.** Обстоятельства, исключающие участие в уголовном судопроизводстве. Дисс. ... канд. юрид. наук. Тюмень, 2010. С. 109. **Таран А.С.** Отвод адвоката как юридическая ответственность. Вектор науки ТГУ. N 3 (3). 2010. С. 199.

<sup>3</sup> **Таран А.С.** Отвод адвоката как юридическая ответственность. Вектор науки ТГУ. N 3(3). 2010. С. 199.

թյան դեպքում իրեն վարույթին մասնակցելուց ազատելու վերաբերյալ միջնորդություն **չարամտորեն** չներկայացնելը պետք է դիտել ոչ թե որպես վարույթից ազատելու հիմք, այլ Նախագծի 148-րդ հոդվածով նախատեսված՝ փաստաբանին վարույթից հեռացնելու դատավարական սանկցիայի կիրառման հիմք<sup>4</sup>:

**Մինչդատական վարույթում դատախազին վարույթից հեռացնելը:** Նախագծի 37-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ վերադաս դատախազն իր որոշմամբ հսկող դատախազին հեռացնում է վարույթից և նախաքննության ու հետաքննության օրինականության նկատմամբ հսկողության իրականացումը հանձնարարում այլ դատախազի կամ այն իրականացնում է անձամբ՝ օգտվելով սույն օրենսգրքով մինչդատական վարույթում հսկող դատախազի լիազորություններից: 33 քր. դատ. օր-ի 148-րդ հոդվածով որպես դատավարական սանկցիա՝ նախատեսված է վարույթից հեռացնելը, սակայն նշված հոդվածի բովանդակությունից հստակ երևում է, որ մինչդատական վարույթի ընթացքում նշված սանկցիան կիրառվում է բացառապես փաստաբանի և օրինական ներկայացուցչի նկատմամբ, իսկ դատարանում՝ նաև հանրային մեղադրողի նկատմամբ, ուստի 33 քր. դատ. օր-ի 148-րդ հոդվածի իմաստով հսկողություն իրականացնող դատախազին վարույթից հեռացնելը չի դիտվում որպես դատավարական սանկցիա, սակայն իր էությանը այն հանդիսանում է դատավարական պատասխանատվության միջոց: 33 քր. դատ. օր-ը չի նախատեսում վերադաս դատախազի կողմից հսկողություն իրականացնող դատախազին վարույթից հեռացնելու հիմքերը, սակայն այն կարող է կիրառվել բացասական հիմ-

քերով: Այսպես՝ վերադաս դատախազը հսկողություն իրականացնող դատախազին պատճառաբանված որոշմամբ հեռացնում է վարույթից նրա կողմից օրենքի և իրավական այլ ակտերի պահանջների էական խախտումներ թույլ տալու կամ իր պարտականությունները պատշաճ չկատարելու կամ տվյալ գործով իր մասնակցությունը բացառող հանգամանքների մասին իրազեկված լինելու պայմաններում ինքնաբացարկի միջնորդություն չներկայացնելու դեպքում:

Նախագծի 37-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ վերադաս դատախազն իրավասու է իր որոշմամբ փոխել հսկողություն իրականացնող դատախազին: Հսկող դատախազին փոխելը, ի տարբերություն հսկողություն իրականացնող դատախազին վարույթից հեռացնելու իմաստիտուտի, չի հանդիսանում պատասխանատվության միջոց և կիրառվում է դրական հիմքերով: Այսպես՝ վերադաս դատախազը պատճառաբանված որոշմամբ փոխում է հսկող դատախազին՝ ստորադաս դատախազի նկատմամբ հայտնված բացարկը կամ ինքնաբացարկը բավարարելու, հսկող դատախազի արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվելու, հսկող դատախազի լիազորությունները դադարեցնելու կամ կասեցնելու կամ այլ դեպքերում, որոնք անհնարին են դարձնում հսկող դատախազի կողմից իր լիազորությունների իրականացումը:

Հսկող դատախազին փոխելու և հսկողությունն այլ դատախազի հանձնարարելու դեպքում վերադաս դատախազն այդ մասին տեղեկացնում է քննչական մարմնի ղեկավարին, իսկ վերջինս էլ տեղեկացնում է քննիչին, ով պարտավոր է վարույթի մասնավոր մասնակիցներին և վարույթին

<sup>4</sup> 33 Նախագահի 2012 թ.-ի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի» 7.1.2. կետի կատարման նպատակով 33 գլխավոր դատախազության կողմից նախապատրաստված «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերի 31.1 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վերադաս դատախազը ստորադաս դատախազին պատճառաբանված որոշմամբ հեռացնում է վարույթից տվյալ գործով իր մասնակցությունը բացառող հանգամանքների մասին իրազեկված լինելու պայմաններում ինքնաբացարկի միջնորդություն չներկայացնելու դեպքում: Վարույթից հեռացված դատախազի նկատմամբ սույն օրենքով սահմանված կարգով կարող է հարուցվել կարգապահական վարույթ:

օժանդակող անձանց հայտնել տվյալ վարույթով նոր դատախազի անունը, ազգանունը և աշխատանքային հասցեն: Բանն այն է, որ 37 քր. դատ. օր-ի 149-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քննիչը վարույթի մասնավոր մասնակիցներին և վարույթին օժանդակող անձանց պարտավոր է հայտնել տվյալ վարույթով հսկող դատախազի անունը, ազգանունը և աշխատանքային հասցեն: Քննիչն այս պարտականությունը կարող է կատարել, եթե նախաքննություն կատարելու մասին քննչական մարմնի ղեկավարի հանձնարարության հետ միասին ծանոթանում է հսկողություն իրականացնող դատախազի տվյալներին:

**Փաստաբանին վարույթից հեռացնելը՝ որպես դատավարական սանկցիա:** Ըստ Նախագծի՝ փաստաբանի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ սանկցիաները՝ նախազուլաացում, իրավունքի իրականացման սահմանափակում, դատական նիստի դահլիճից հեռացնելը, վարույթից հեռացնելը, ընդ որում՝ վերջինիս կիրառմամբ սուբյեկտը տվյալ քրեական վարույթում զրկվում է իր դատավարական կարգավիճակից:

Նախագծի 148-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է փաստաբանին վարույթից հեռացնելու հիմքերը, որի համաձայն՝ վարույթին մասնակցող փաստաբանը<sup>5</sup> վարույթն իրականացնող մարմնի հիմնավոր որոշմամբ կարող է հեռացվել վարույթից, եթե՝

1) երկու անգամ առանց հարգելի պատճառի չի ներկայացել դատական նիստին կամ իր համար պարտադիր վարույթային գործողության կատարմանը,

2) սույն գլխով սահմանված կարգով երեք անգամ դատավարական սանկցիայի ենթարկվելուց հետո շարունակում է չարանտորեն չկատարել իր պարտականությունները:

**1. Փաստաբանը երկու անգամ առանց հարգելի պատճառի չի ներկա-**

**յացել դատական նիստին կամ իր համար պարտադիր վարույթային գործողության կատարմանը:** Փաստաբանին վարույթից հեռացնելու նշված հիմքը մեկնաբանելիս անհրաժեշտ է բացահայտել «առանց հարգելի պատճառի» հասկացության բովանդակությունը, դատական նիստին փաստաբանի պարտադիր մասնակցության դեպքերը, փաստաբանի համար պարտադիր վարույթային գործողությունների շրջանակը:

Քննարկվող հիմքով փաստաբանին վարույթից հեռացնելու դեպքում առանձնակի նշանակություն ունի «**առանց հարգելի պատճառի**» հասկացության բովանդակության բացահայտումը: Դատավարագիտության մեջ «հարգելի պատճառ» եզրույթը բնորոշվում է որպես գնահատողական հասկացություն, որն օբյեկտիվ հանգամանքների առկայության պայմաններում դատավարության սուբյեկտին զրկում է իր դատավարական պարտականությունների կատարման հնարավորությունից<sup>6</sup>: Օրենսդրությամբ հնարավոր չէ նախատեսել բոլոր այն հանգամանքները, որոնց պայմաններում սուբյեկտի կողմից իր դատավարական պարտականությունների կատարումը կարող է որակվել իբրև «հարգելի», ուստի յուրաքանչյուր դեպքում իրավակիրառը, ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից, որոշում է դատական նիստին կամ վարույթային գործողությանը չներկայանալու պատճառը հարգելի է, թե ոչ<sup>7</sup>: Կարծում ենք՝ հարգելի կարող է համարվել այն պատճառը, որն ի հայտ է եկել անկախ անձի կամքից և օբյեկտիվորեն հնարավորություն չի ընձեռել վերջինիս մասնակցել դատական նիստին կամ իր համար պարտադիր վարույթային գործողության կատարմանը, օրինակ՝ հիվանդությունը, բնական աղետները, արձակուրդում, գործուղման մեջ գտնվելը, ինչպես նաև պատշաճ կերպով ծանուցված չլինելը և այլն:

Նշված սանկցիայի կիրառման կարևոր

<sup>5</sup> Մեկնաբանվող հոդվածը կարգավորում է օրինական ներկայացուցչին և հանրային մեղադրողին վարույթից հեռացնելու հիմքերն ու դատավարական կարգը:

<sup>6</sup> **Новиков А. Г.** Гражданская процессуальная ответственность. Автореф. дис. ... канд. юрид. наук. Саратов. 2002. С. 9.

<sup>7</sup> **Безруков С. С.** Оценочные понятия и термины в уголовно-процессуальном законодательстве. Автореф. дис. .... канд. юрид. наук М., 2001. С. 12.

պայման է դատական նիստի և պարտադիր վարութային գործողության մասին փաստաբանի պատշաճ ծանուցումը, որի կատարման պարտականությունը դրված է վարույթն իրականացող մարմնի վրա (Նախագծի 150-րդ հոդված): Նախագծի 154-րդ հոդվածի համաձայն՝ ծանուցումը պատշաճ է, եթե՝ 1) թղթային ծանուցագիրը ստացել է անձամբ ծանուցվողը: 2) թղթային ծանուցագիրը ստացվել է ծանուցվողի նշած հասցեով: 3) թղթային ծանուցագիրը ստացողը գրավոր հաստատել է այն ծանուցվողին հանձնելու փաստը: 4) թղթային ծանուցագիրը վերադարձվել է վարույթն իրականացնող մարմնին՝ ծանուցվողի կողմից այն ընդունելուց հրաժարվելու մասին նշումով, եթե ծանուցագիրը հանձնողը վարույթով չչափազրգռված անձ է: 5) առկա է ծանուցվող անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկված էլեկտրոնային ծանուցագիրը ստանալու մասին էլեկտրոնային հավաստում, 6) ծանուցվողը վարութային գործողության արձանագրության մեջ ստորագրությամբ հաստատել է ծանուցումը ստանալու փաստը: 7) դատական նիստում ձայնային արձանագրմամբ ամրագրվել է ծանուցման փաստը: 8) ծանուցումն ուղարկվել է ծանուցվողի կողմից գրավոր և հստակ առաջարկված եղանակով:

Նախագծի 280-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **«դատական նիստին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ: Դատական նիստին պաշտպանի չներկայանալու և տվյալ նիստում նրան այլ պաշտպանով փոխարինելու անհնարինության դեպքում դատական նիստը հետաձգվում է»:**

Տուժողի, զույքային պատասխանողի, լիազոր ներկայացուցիչների մասնակցությունը դատական նիստին պարտադիր է (Նախագծի 281-րդ հոդված), բացառությամբ այն դեպքերի, երբ՝ 1) դատարանը համապատասխան անձին նախապես թույլատրել է չմասնակցել տվյալ դատական նիստին, 2) դատարանը, լսելով կողմերի կարծիքը, գտնում է, որ համապատասխան անձի բացակայությունը խոչընդոտ չէ տվյալ դատական նիստն անցկացնելու համար:

Այսպիսով, այն դեպքում, երբ փաստաբանը վարույթին մասնակցում է պաշտպանի կարգավիճակով, դատական նիստին նրա մասնակցությունը ցանկացած պարագայում պարտադիր է, հակառակ դեպքում նիստը հետաձգվում է, իսկ տուժողի, զույքային պատասխանողի, վկայի, փաստաբանի կարգավիճակով հանդես գալու դեպքում նախատեսվում են վերոգրյալ բացառությունները:

Մինչդատական վարույթի ընթացքում փաստաբանը որպես պաշտպան պարտավոր է մասնակցել վարութային գործողություններին, եթե առկա են Նախագծի 46-րդ հոդվածով նախատեսված պաշտպանի **վարույթին պարտադիր մասնակցության հիմքերը:** Տուժողի, զույքային պատասխանողի կամ վկայի՝ փաստաբանի կարգավիճակով հանդես գալու պարագայում Նախագծով բացակայում են փաստաբանի **համար վարութային գործողության կատարմանը պարտադիր մասնակցելու դեպքերը:**

Նախագծում տվյալ սանկցիայի կիրառման համար նախատեսված չէ **անընդմեջ**, առանց հարգելի պատճառի դատական նիստին կամ իր համար պարտադիր վարութային գործողության կատարմանը չներկայանալու նախապայմանը: Ստացվում է, որ եթե փաստաբանը մեկ անգամ առանց հարգելի պատճառի չի մասնակցում դատական նիստին կամ իր համար պարտադիր վարութային գործողության կատարմանը, սակայն մասնակցում է հաջորդ դատական նիստին կամ վարութային գործողությանը, իսկ երրորդին կրկին առանց հարգելի պատճառի չի մասնակցում, ապա վարույթն իրականացնող մարմինն իրավասու է կիրառել նշված սանկցիան: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով քննարկվող դատավարական սանկցիայի խստությունը, կարծում ենք, որ եթե փաստաբանը մեկ անգամ առանց հարգելի պատճառի չի ներկայացել դատական նիստին կամ իր համար պարտադիր վարութային գործողության կատարմանը, վարույթն իրականացնող մարմինը պետք է գրավոր նախազգուշացնի տվյալ փաստաբանին, իսկ երկրորդ անգամ առանց հարգելի պատճառի դատական նիստին կամ իր համար պարտադիր վարութային գործողության կատարմանը չներկայանալու դեպքում որոշում կայացնի փաստաբանին վարութից հեռացնելու մասին:

Նախագծում տվյալ սանկցիայի կիրառման համար նախատեսված չէ **անընդմեջ**, առանց հարգելի պատճառի դատական նիստին կամ իր համար պարտադիր վարութային գործողության կատարմանը չներկայանալու նախապայմանը: Ստացվում է, որ եթե փաստաբանը մեկ անգամ առանց հարգելի պատճառի չի ներկայացել դատական նիստին կամ իր համար պարտադիր վարութային գործողության կատարմանը, սակայն մասնակցում է հաջորդ դատական նիստին կամ վարութային գործողությանը, իսկ երրորդին կրկին առանց հարգելի պատճառի չի մասնակցում, ապա վարույթն իրականացնող մարմինն իրավասու է կիրառել նշված սանկցիան: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով քննարկվող դատավարական սանկցիայի խստությունը, կարծում ենք, որ եթե փաստաբանը մեկ անգամ առանց հարգելի պատճառի չի ներկայացել դատական նիստին կամ իր համար պարտադիր վարութային գործողության կատարմանը, վարույթն իրականացնող մարմինը պետք է գրավոր նախազգուշացնի տվյալ փաստաբանին, իսկ երկրորդ անգամ առանց հարգելի պատճառի դատական նիստին կամ իր համար պարտադիր վարութային գործողության կատարմանը չներկայանալու դեպքում որոշում կայացնի փաստաբանին վարութից հեռացնելու մասին:

**2. Երեք անգամ դատավարական սանկցիայի ենթարկվելուց հետո փաստաբանը կարգավիճակով հետաձգվում է:**

**տարանը շարունակում է չարամտորեն չկատարել իր պարտականությունները:** Մեկնաբանվող հիմքով փաստաբանին վարույթից հեռացնելու իրավաչափության պայմաններն են.

1. Փաստաբանի նկատմամբ երեք անգամ կիրառվել են դատավարական սանկցիաներ: Փաստաբանի նկատմամբ կարող է կիրառվել նախազգուշացումը (հոդված 142), իրավունքի իրականացման սահմանափակումը (հոդված 143), դատական նիստի դահլիճից հեռացնելը (հոդված 144):

2. Փաստաբանը շարունակում է չարամտորեն չկատարել իր պարտականությունները: Սույն պայմանի համար անհրաժեշտ է հստակեցնել փաստաբանի (սույն հոդվածում կներկայացվի միայն պաշտպանի պարտականությունները), պարտականությունների շրջանակը, որը սահմանված է Նախագծի 49-րդ հոդվածով: Վերջինս սահմանում է պաշտպանի ակտիվ և պասիվ պարտականությունների շրջանակ: Ակտիվ պարտականությունը պահանջում է փաստաբանից կատարել որոշակի գործողություններ, իսկ պասիվ պարտականությունները՝ ձեռնպահ մնալ որոշակի գործողությունների կատարումից: Այսպես, Նախագծի 49-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պաշտպանը պարտավոր է՝ 1) պաշտպանությունը ստանձնելուց անմիջապես հետո այդ մասին տեղյակ պահել վարույթն իրականացնող մարմնին. 2) մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի հրավերով<sup>8</sup>. 3) ենթարկվել վարույթն իրականացնող մարմնի կարգադրություններին և դատական նիստի կարգին. 4) վարույթին մասնակցելուց իրեն ազատելու խնդրանքով դիմել վարույթն իրականացնող մարմնին, եթե դա չանելն անխուսափելիորեն կվնասի պաշտպանյալի իրավաչափ շահերին (**ակտիվ պարտականություններ**): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պաշտպանն իրավունք չունի՝ 1) կատարել պաշտպանյալի շահերին հակասող որևէ

գործողություն. 2) հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ ընդունել նրա առնչությունը ենթադրյալ հանցանքին կամ մեղավորությունը դրա կատարման մեջ. 3) հրապարակել պաշտպանությունն իրականացնելու ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի. 4) սեփական նախաձեռնությամբ դադարեցնել իր լիազորությունները՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի. 5) խոչընդոտել այլ պաշտպան հրավիրելուն, նշանակելուն կամ վարույթին վերջինիս մասնակցելուն. 6) վարույթին մասնակցելու իր լիազորությունները վերափոխել այլ անձի. 7) առանց պաշտպանյալի հատուկ հանձնարարության՝ հայտարարել տուժողի հետ պաշտպանյալի հաշտվելու մասին. 8) ընդունել մեղադրյալի դեմ ներկայացված քրեական հայցը կամ գույքային հայցը. 9) հետ վերցնել պաշտպանյալի ներկայացրած բողոքը (**պասիվ պարտականություններ**):

Պաշտպանի **ակտիվ և պասիվ** պարտականությունների տարանջատումն ունի գործնական նշանակություն: Այսպես, եթե պաշտպանը չի կատարում որևէ ակտիվ պարտականություն, ապա բոլոր դեպքերում դրանով խաթարվում է դատավարության ընթացքը, ուստի նման անգործությունը դատավարական պատասխանատվության միջոց կիրառելու հիմք է: Մինչդեռ պասիվ պարտականությունների խախտման դեպքում վարույթից հեռացնելու ձևով սանկցիա կիրառելու հարցը քննարկելիս, պետք է գնահատել, թե արդյոք պաշտպանի կողմից արգելված գործողություն կատարելը խաթարում է դատավարության բնականոն ընթացքը: Եթե պաշտպանի կողմից կատարվել է այնպիսի արգելված գործողություն, որը գտնվում է բացառապես փաստաբան-վստահորդ փոխհարաբերությունների շրջանակում և դրանով չի վնասվում դատավարության բնականոն ընթացքը և արդյունավետությունը, ուստի նման խախտումը պաշտպանին վարույթից

<sup>8</sup> Մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար վարույթ իրականացնող մարմնին ներկայանալու պարտականությունը չկատարելը դիտվում է վարույթից հեռացնելու 1-ին հիմքը այն է՝ երկու անգամ առանց հարգելի պատճառի չի ներկայացվել դատական նիստին կամ իր համար պարտադիր վարութային գործողության կատարմանը:



հեռացնելու հիմք չէ: Օրինակ, պաշտպանը կատարել է պաշտպանյալի շահերին հակասող որևէ գործողություն կամ հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ ընդունել նրա առնչությունը ենթադրյալ հանցանքին կամ մեղավորությունը դրա կատարման մեջ: Նման գործողությունները գտնվում են փաստաբան-վստահորդ հարաբերությունների շրջանակներում, ուստի այս խախտումների դեպքում պետք է կիրառվեն ոչ թե դատավարական սանկցիաներ, այլ կարգապահական, քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցներ: Մյուս կողմից, օրինակ, պաշտպանի կողմից պաշտպանությունն իրականացնելու ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները հրապարակելը, թեև օրենսդրությամբ ձևակերպված է որպես պասիվ պարտականություն, սակայն այս արգելքը խախտելու դեպքում վնասվում են դատավարական նշանակության արժեքներ, օրինակ՝ նախաքննության գաղտնիքը: Նման բնույթի խախտումները դիտվում են որպես դատավարական պատասխանատվության միջոց կիրառելու հիմք:

Խնդրո առարկա հարցի շրջանակներում պետք է մեկնաբանել «**չարամտորեն**» հասկացությունը: Բացատրական բառարաններում այս հասկացությունը սահմանվում է որպես «չարամիտ կերպով, այն է՝ չար դիտավորությամբ կատարված, նենգաբար, չարամենզ»<sup>9</sup>: Այսինքն՝ տվյալ համատեքստում փաստաբանը դիտավորությամբ և պարբերաբար չի կատարում իր դատավարական պարտականությունները: Փաստաբանի նկատմամբ երեք դատավարական սանկցիաներ կիրառելը վկայում է վերջինիս կողմից իր դատավարական պարտականությունները պարբերաբար չկատարելու մասին: Այսպես, փաստաբանը դատական նիստի ժամանակ դրսևորում է ոչ պատշաճ վարքագիծ (օրինակ՝ աղմկում կամ վիրավորում է վարույթի մասնակիցներին), որի համար սահմանված կարգով նախազգուշացվում է, սակայն պաշտպանը շարունակում է խանգարել, որի պատճառով կրկին նախազգուշացվում է, որից հետո կրկին աղմկում է և վիրավորում մասնակիցներին, որի համար

հեռացվում է դատական նիստից, սակայն հաջորդ դատական նիստին շարունակում է նույնաբնույթ գործողություններ կատարել, որի դեպքում կիրառվում է վարույթից հեռացնելու ծայրահեղ, խիստ պատասխանատվության միջոցը: Այլ կերպ ասած՝ վարույթից հեռացնելու ծայրահեղ պատասխանատվության միջոցը կիրառվում է, եթե նախկինում փաստաբանը կատարել է նույնաբնույթ դատավարական խախտումներ, որոնց համար երեք անգամ ենթարկվել է դատավարական պատասխանատվության, սակայն այդ միջոցները չեն կանխել փաստաբանի ոչ իրավաչափ գործողությունները:

Եթե փաստաբանը կատարել է մի քանի տարաբնույթ դատավարական խախտումներ և երեք անգամ նրա նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ, ապա այլ բնույթի չորրորդ դատավարական խախտում կատարելը նրան վարույթից հեռացնելու հիմք չէ: Օրինակ՝ մի դեպքում պաշտպանը մասնակիցներին վիրավորելու ձևով խախտում է դատաստումների բնականոն ընթացքը, որի համար նախազգուշացվում է, այնուհետև պարբերաբար չարաշահում է միջնորդություններ հարուցելու իրավունքը, որի համար նրա նկատմամբ կիրառվում է իրավունքի իրականացման սահմանափակումը, որից հետո պարբերաբար չարաշահում է բացարկ ներկայացնելու իրավունքը, որի համար կրկին կիրառվում է դատավարական սանկցիա: Քանի որ պաշտպանի կողմից իրականացվել են տարաբնույթ խախտումներ, իսկ դրանց համար կիրառված պատասխանատվության միջոցները կանխել են նույնաբնույթ խախտումները, ուստի չորրորդ խախտումը հիմք չէ նրան վարույթից հեռացնելու համար: Բանն այն է, որ յուրաքանչյուր առանձին խախտման համար նշանակված պատասխանատվության միջոցն ինքնին եղել է արդյունավետ, քանի որ պաշտպանը չի շարունակել նույնաբնույթ գործողություններ կատարել, այլ կատարել է այլ բնույթի դատավարական խախտում, որը հիմք է եղել այլ բնույթի պատասխանատվության միջոց կիրառելու համար:

<sup>9</sup> Աղայան Է. Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան-1976թ., էջ 1156-1157:

Նախագծի 148-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են փաստաբանին վարույթից հեռացնելը՝ որպես դատավարական սանկցիա կիրառելու դատավարական կարգը և տվյալ որոշման բողոքարկման իրավական կառուցակարգերը: Մեկնաբանվող հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ փաստաբանը վարույթից հեռացվում է վարույթն իրականացնող մարմնի հիմնավոր որոշմամբ: Նախագծի 148-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչդատական վարույթում վարույթից հեռացնելու մասին քննիչի որոշումը ենթակա է հաստատման հսկող դատախազի կողմից: Հսկող դատախազը նշված որոշումը հաստատելիս, պետք է ստուգի ստորև նշված հանգամանքները: Եթե սանկցիան կիրառվել է Նախագծի 148-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ապա հսկող դատախազը ստուգում է՝

- թե արդյոք փաստաբանի համար վարույթային գործողությունը պարտադիր է,

- թե արդյոք փաստաբանը՝ իր համար պարտադիր վարույթային գործողությանը չի մասնակցել անհարգելի պատճառով,

- թե արդյոք ծանուցումը պատշաճ է եղել,

- թե արդյոք փաստաբանի՝ իր համար պարտադիր վարույթային գործողության կատարմանը չմասնակցելու հաճախականությունը երկու անգամից ավել է եղել:

Եթե սանկցիան կիրառվել է Նախագծի 148-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով, ապա հսկող դատախազը ստուգում է՝

- թե արդյոք փաստաբանը համապատասխան սանկցիաների ենթարկվել է առնվազն երեք անգամ, թե արդյոք դրանք նույնաբնույթ խախտումներ են եղել,

- թե արդյոք առկա են փաստաբանի՝ սահմանված կարգով դատավարական սանկցիաների կիրառումը հավաստող և չվերացված որոշումներ,

- թե արդյոք փաստաբանը կատարել է այնպիսի գործողություն կամ հանդես է բերել անգործություն, որը վնասում է վերջինիս կողմից իր պարտականությունները չարամտորեն չկատարելու հանգամանքը, մասնավորապես՝ իր պարտականությունները չկատարելու իրավաչափ շարժառիթների և օբյեկտիվ հանգամանքների բացակայությունը:

Նախագծի 148-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարույթից հեռացնելու մասին քննիչի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին, իսկ նրա կողմից բողոքը չբավարարելու դեպքում՝ դատարան: Վարույթից հեռացնելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել հատուկ վերանայման կարգով (Նախագծի գլուխ 49):

**Մեղադրյալի պաշտպանության իրավունքի համատեքստում պաշտպանին վարույթից հեռացնելու ինստիտուտի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը:** ՄիԵԴ-ն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման հիմնախնդիրներին՝ կարևորելով ներպետական օրենսդրությամբ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքների երաշխավորման համար արդյունավետ մեխանիզմների ապահովումը: Անժխտելի իրողություն է, որ պաշտպանին վարույթից հեռացնելու ինստիտուտի կիրառումը չպետք է խախտի մեղադրյալի իրավունքները: **Էնսլին, Բադերը և Ռեսսին ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության** (Ensslin, Baader & Raspe v. Federal Republic of Germany) գործով ՄիԵԴ-ն ընդգծել է. «...Անձի կողմից պաշտպան ընտրելու իրավունքը չի հանդիսանում բացարձակ իրավունք, այն սահմանափակված է դատարանում պաշտպանի մասնակցության հարցերը կարգավորելու պետության իրավունքով և պաշտպանի՝ մասնագիտական էթիկայի որոշ սկզբունքներ չխախտելու պարտականությամբ»:<sup>10</sup>

<sup>10</sup> **Սաքբրայդ Ջերեմի**, Մարդու իրավունքները և քրեական դատավարությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան. - Եր.: Անտարես, 2009, էջ 305-306:

**Յետևապես, տվյալ հիմնավորմամբ մի-անգամայն տրամաբանական է պաշտպանին օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում վարույթից հեռացնելը, եթե անգամ դա չի համընկնում մեղադրյալի դիրքորոշման հետ:** Բացի այդ, **Իքսն ընդդեմ Միացյալ Թագավորության** (X v. United Kingdom) գործով ՄԻԵԴ-ը նշել է՝ «...Քննարկելով դիմողի պաշտպանությունը՝ Յանձնաժողովը գտել է, որ նրան տրվել է իր գործով բավարար ներկայացուցչության հնարավորություն: Դիմողի կողմից ներկայացուցիչներ ընտրելու սահմանափակումները կապված են եղել նրա որդուն վարույթից հեռացնելու հետ՝ հիմք ընդունելով մասնագիտական էթիկայի պահանջները: Դիմողը կարող էր ընտրել ցանկացած այլ փաստաբան, սակայն չի ցանկացել այդ անել: Նիստի արձանագրության ուսումնասիրության արդյունքում չի հայտնաբերվել պաշտպանության հետ կապված որևէ անբարենպաստ վիճակ կամ անարդարություն: Յետևաբար, Յանձնաժողովը գտել է, որ դիմողի որդուն որպես նրա պաշտպանի հեռացումը գործով վարույթից չի հանգեցրել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետի խախտման»<sup>11</sup>: **Այսինքն՝ մեղադրյալի պաշտպանության իրավունքը կարող է ոտնահարվել միայն այն դեպքում, եթե նրան օբյեկտիվ հնարավորություն չի ընձեռվել այլ պաշտպան ունենալ, կամ ստեղծվել է նրա պաշտպանության հետ կապված այլ անբարենպաստ վիճակ:**

**Բալիուն ընդդեմ Ալբանիայի** (Balliu v. Albania), 16.06.2005թ. գործով ՄԻԵԴ-ը նշել է. «Քանի որ դիմողը չի ցանկացել ինքն իրեն պաշտպանել, իսկ նրա ընտրած փաստաբանը չի կատարել իր պարտականությունները՝ չմասնակցելով դատական նիստին, Ալբանիայի իշխանությունները տարբեր կերպ գործելու հնարավորություն են ունեցել: Նրանք կարող էին դիմողի ընտրած փաստաբանին՝ պրն Լելիին հարկադրել կատարելու իր պարտականությունը, կամ նրանք կարող էին փաստաբանին փոխարինել պաշտոնապես նշանակված այլ փաստաբանով: Սակայն, Փաստաբանների միության անկախությունը հաշվի առ-

նելով, անհնարին էր դիմողի փաստաբանին հարկադրել գործել: Բացի դրանից, դիմողը հրաժարվել էր պաշտոնապես նշանակված փաստաբանից: Այսպիսով, ներպետական դատարանն ընտրել էր երրորդ ուղին, այն է՝ հետաձգել դատական նիստը, ապա վարույթը շարունակել դիմողի փաստաբանի բացակայությամբ, սակայն դիմողի ներկայությամբ: «Նկատի ունենալով նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իշխանությունների՝ ողջամիտ ժամկետում վարույթ իրականացնելու պարտականությունը, վարույթի ընթացքում դիմողի ներկայացուցչության հանգամանքները չեն վկայում այն մասին, որ վերջինս հանգեցրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետով նախատեսված իրավական օգնություն տրամադրելու իրավունքի խախտման կամ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ արդար դատական քննության պահանջի մերժման...»: Ներկայացված գործով ՄԻԵԴ-ը, փաստորեն, սահմանել է վարույթն իրականացնող մարմնի գործողությունների որոշակի մոդել, այն է՝

- **իր պարտականությունները չկատարող փաստաբանին հարկադրել կատարելու դրանք, որը հնարավոր է ներպետական օրենսդրությամբ նախատեսված համապատասխան դատավարական սանկցիաների կիրառմամբ (տվյալ գործով Ալբանիայի ներպետական օրենսդրությունը չէր նախատեսում փաստաբանին՝ իր պարտականությունները կատարելուն հարկադրելու հնարավորություն՝ «Փաստաբանների միության անկախությունը» հաշվի առնելով),**

- **փաստաբանին փոխարինել այլ փաստաբանով, որը ենթադրում է վերջինիս նկատմամբ կիրառել վարույթից հեռացնելու ինստիտուտը:**

**Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել.**

ՅՅ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը «վարույթից հեռացնելու» ինստիտուտը դիտում է որպես դատավարական սանկցիա և տարբերակում վարույթից ազատելու ինստիտուտից,

<sup>11</sup> Նշված աշխ., էջ 306:

որը կիրառվում է փաստաբանի վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության դեպքում: Նկատի ունենալով, որ փաստաբանի մասնակցությունը բացառող հանգամանքների հայտնաբերման դեպքում նա պարտավոր է վարույթից ազատելու միջնորդություն ներկայացնել, ուստի նման միջնորդություն չներկայացնելը պետք է դիտել որպես վարույթից հեռացնելու հիմք: Ուստի, առաջարկում ենք Նախագծի 148-րդ հոդվածով նախատեսել փաստաբանին վարույթից հեռացնելու դատավարական սանկցիայի կիրառումը նախագծի 68-րդ հոդվածով ամրագրված վարույթին փաստաբանի մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության դեպքում իրեն վարույթին մասնակցելուց ազատելու միջնորդություն չարամտորեն չներկայացնելու հիմքով:

ՀՀ քրեական դատավարության նոր

օրենսգրքի նախագիծը, նախատեսելով վարույթից հեռացնելու դատավարական սանկցիան, ստեղծում է արդյունավետ իրավական մեխանիզմներ՝ կանխելու վարույթի մասնակցի կողմից պարբերաբար կատարվող նույնաբնույթ ոչ իրավաչափ գործողությունները: Նախագիծը հստակորեն սահմանում է քննարկվող սանկցիայի կիրառման հիմքերը և իրականացման դատավարական կարգը:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ պաշտպանին վարույթից հեռացնելը չի կարող դիտվել իբրև մեղադրյալի պաշտպանության իրավունքի սահմանափակում, եթե նրան օբյեկտիվ հնարավորություն է ընձեռվել այլ պաշտպան ունենալ կամ չի ստեղծվել նրա պաշտպանության հետ կապված այլ անբարենպաստ վիճակ:

## THE EXCLUSION OF THE PROSECUTOR AND THE ADVOCATE FROM THE CRIMINAL PROCEEDINGS AS THE MEANS OF PROCEDURAL RESPONSIBILITY

**Ghambaryan A.**

PhD of Law

**Tadevosyan A.**

The assistant of a judge in the Court of General Jurisdiction of Shengavit Administrative District of Yerevan

**ABSTRACT:** The present article is dedicated to the institute of the exclusion of an advocate and a prosecutor from criminal proceedings. In the article the authors touch upon the grounds of use and procedural order of the researching institute. One of the key points of the article is the analysis of the legislative grounds of the institute of the exclusion of a prosecutor in pretrial proceedings. The authors also analyse the content and the correlation of two legal categories: “the exclusion from proceedings” and “the release from proceedings” underlining the fact that though an advocate loses his procedural status as a consequence of application of these two institutes, but unlike the institute of releasing from proceedings, which is applied in a case of existing the circumstances excluding the participation of the advocate in proceedings, the draft of new Criminal Procedure Code of RA considers ‘the exclusion from proceedings’ as a procedural sanction, because the latter is used only in a case of not performing his procedural duties by an advocate. The authors note that in a case of existing circumstances excluding his participation in proceedings the advocate and the prosecutor has are obliged to declare on this to the interested participants of the trial, to the body, conducting the criminal trial, and in the cases, when they suspect the possibility of normal consideration of the case with their participation; to declare the rejection of their nomination make a motion on their alienation from the proceedings of the case, thus the authors suggest to provide the use of excluding participation in a ground of not making a motion maliciously in a case of exist-

ing the circumstances excluding his participation. So, as a result of the research the author come to conclusion that the draft of the new Criminal Procedure Code of RA provides effective legal mechanisms for excluding from proceedings the advocates who do not properly perform their procedural duties and undermine the normal process of criminal proceedings. As a conclusion the authors present the legal position of European Court of Human Rights which states that the exclusion of the defense attorney could not be considered as the restriction of the accused's rights if he had an opportunity to have another defense attorney or there's not any unfavorable state concerning to his defence.

## УСТРАНЕНИЕ ПРОКУРОРА И АДВОКАТА ИЗ РАЗБИРАТЕЛЬСТВА КАК СРЕДСТВО ПРОЦЕССУАЛЬНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

**Гамбарян А.**

Доктор юридических наук

**Тадевосян А.**

Помощник судьи суда общей юрисдикции административного  
района Шенгавит города Еревана

**Аннотация:** Данная статья посвящена институту устранения прокурора и защитника от производства по уголовному делу. В статье авторы затрагивают основы использования и процессуального порядка исследуемого института. Один из ключевых моментов данной статьи является анализ правовых оснований института устранения прокурора в досудебном производстве. Авторы также анализируют содержание и соотношение двух правовых категорий: “устранение из разбирательства” и “освобождение от разбирательства”, подчеркивая тот факт, что, хотя защитник теряет свой процессуальный статус в последствие применения этих двух институтов, но в отличие от института освобождения от разбирательства, который применяется в случае наличия обстоятельств, исключающих участие защитника в судебном разбирательстве, проект нового Уголовно–процессуального кодекса РА рассматривает “устранение из разбирательства” как процессуальную санкцию, так как оно используется только в случае невыполнения адвокатом своих процессуальных обязанностей. Авторы отмечают, что в случае обстоятельств, исключающих его участие в уголовном судопроизводстве, адвокат имеет процессуальную обязанность заявить о них заинтересованным участникам процесса, органу, осуществляющему уголовное производство, а в случае, когда они сомневаются в возможности нормального рассмотрения дела при их участии — заявить самоотвод или ходатайство о своем устранении из производства по делу. Таким образом, авторы предлагают предусмотреть использование института устранения от уголовного судопроизводства как процессуальную санкцию в случае наличия обстоятельств, исключающих участие адвоката в уголовном судопроизводстве, если последний злоумышленно не заявляет ходатайство о своем устранении из производства по делу. Таким образом, в результате проведенного исследования автору пришли к выводу, что проект нового Уголовно–процессуального кодекса РА обеспечивает эффективный правовой механизм устранения из разбирательств адвокатов, которые не должным образом выполняют свои процессуальные обязанности и подрывают нормальный процесс уголовного судопроизводства. В заключение авторы представляют юридическую позицию Европейского суда по правам человека, которая гласит, что устранение адвоката не может рассматриваться как ограничение прав обвиняемого, если он имел возможность иметь другого адвоката или не создается другое неблагоприятное состояние в отношении его защиты.

# ՀՀ ԲՐԵԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

## Գևորգ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

Երևան քաղաքի դատախազության դատախազ, իրավաբանական գիտությունների թեկնածու

*Ցանկացած իրավական ակտի պատշաճ գործողության առաջնային գրավականներից մեկը այդ գործողության սահմանների հստակեցումն է: Ինչպես քրեական, այնպես էլ քրեական դատավարության օրենսգիրքը առանձին նորմեր են պարունակում, որոնք սահմանում են ժամանակի մեջ, տարածության վրա և ըստ անձանց շրջանակի դրանց գործողության սահմաններն ու այդ սահմանների առանձնահատկությունները: Գիտական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական դատավարության օրենսգրքի գործողության տարածքային սահմանների հիմնահարցերն առանձնապես գիտական հետաքրքրություն չեն հարուցել և դրանց հետազոտություններն առավելապես սահմանափակվել են դասագրքային մակարդակներում: Ասվածն, իհարկե ոչ հավասարապես, բայց վերաբերում է նաև քրեական օրենսգրքին: Եվ սա այն դեպքում, երբ դրանց հետ կապված հիմնահարցերն իրապես կարևոր գործնական նշանակություն ունեն:*

Դիվանագիտական անձեռնմխելիությունը դիվանագիտական արտոնությունների հետ մեկտեղ կազմում է առավելությունների որոշակի համակարգ, որը որոշակի առանձնահատկություններով վերապահվում է դիվանագիտական հարաբերությունների իրացմանը մասնակցող անձանց որոշակի շրջանակի: Դիվանագիտական առավելությունների հետ, ըստ էության, առավելապես շոշափում են քրեական և քրեադատավարական օրենքների գործողության սահմաններն ըստ անձանց շրջանակի, բայց, քանի որ այդ առավելությունները միայն անձնական չեն, հետևապես, դրանց առնչությամբ գիտագործնական խնդիրներ առաջանում են նաև մշված օրենքների գործողության տարածքային սահմանների հետ կապված:

Սույն հոդվածում քննարկման առարկա է հանդիսանում դիվանագիտական ներկայացուցչությունների զբաղեցրած և

առհասարակ դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող տարածքների և շինությունների (այսուհետ՝ նաև՝ դիվանագիտական օբյեկտներ) վրա դեսպանընկալ պետության քրեական և քրեադատավարական օրենքների գործողության հիմնահարցը, այսինքն այն, թե այդ տարածքների վրա տարածվում է դեսպանընկալ, թե հավատարմագրող պետության քրեական և քրեադատավարական իրավասությունը:

Նույնիսկ խիստ մասնավոր հետազոտությունների ու քննարկումների վկայակոչմամբ կարող ենք մշել, որ իրավաբանական հանրության շրջանակում գերակշռում է այն մոտեցումը, որ դիվանագիտական անձեռնմխելիությամբ օժտված տարածքներն և շինությունները գտնվում են դեսպանընկալ պետության քրեական իրավասությունից դուրս և այդ տարածքներում կատարված հանցագործությունները որակվում են ոչ թե դեսպա-

նրնկալ, այլ հավատարմագրող պետության քրեական օրենքով և համապատասխանաբար, այդ հանցագործությունների վերաբերյալ գործերը քննվում են հավատարմագրող պետության՝ քրեական վարույթի կարգը սահմանող օրենքներին համապատասխան<sup>1</sup>: Այս մոտեցման հիմքում որպես կանոն դրվում է երկու փաստարկ: Դրանցից առաջինը միջազգային իրավունքում հայտնի էքստերիտորիալության (արտերկրայնության) տեսությունն է, իսկ երկրորդը՝ վերջինիս հետ փոխկապակցված և դարձյալ միջազգային իրավական նորմերից բխող՝ «դիվանագիտական օբյեկտների», այսինքն՝ **դիվանագիտական ներկայացուցչությունների զբաղեցրած և նրանց ծառայող շինությունների ու տարածքների անձեռնմխելիությունը:**

**Էքստերիտորիալությունը մեկն է այն երեք հիմնական տեսություններից, որոնցով բացատրվում են դիվանագիտական անձեռնմխելիության էությունն ու դրա նշանակությունը:** Համաձայն այս տեսության՝ դիվանագիտական ներկայացուցչության և հյուպատոսական հիմնարկի զբաղեցրած տարածքը համարվում է հավատարմագրող պետության տարածք և դիվանագիտական ներկայացուցիչը դե յուրե համարվում է իր պետության տարածքում գտնվող: Հենց այս հանգամանքով էլ նշված տեսությունը բացատրում է և՛ անձնական և՛ շինությունների ու տարածքների դիվանագիտական անձեռնմխելիությունը: Այլ կերպ էթե տվյալ տարածքը համարվում է հավատարմագրող պետությանը պատկանող, հետևաբար դրա վրա դեսպանընկալ պետության իրավասությունը և օրենքները տարածվել չեն կարող: Էքստերիտորիալության տեսության այս գաղափարը ծառայում էր նաև բացատրելու համար

դիվանագիտական ներկայացուցչության զբաղեցրած շինությունում կամ նրա տարածքում ապաստան տրամադրելու՝ հավատարմագրող պետության իրավունքը<sup>2</sup>:

Հաջորդը **ներկայացուցչության տեսությունն է**, որը թեև գենետիկորեն ավելի հին է նախորդից, բայց ներկայում ավելի արդիական ու կիրառելի է: Այս տեսության շրջանակներում դիվանագիտական անձեռնմխելիությունը բացատրվում է նրանով, որ դիվանագիտական ներկայացուցիչը մարմնավորում է հավատարմագրող միապետին, իսկ քանի որ պետությունների, առավել ևս դրանց ղեկավարների միջև գործում է «հավասարը հավասարին ենթակա չէ» սկզբունքը, հետևաբար մի պետության միապետը, կամ նրան մարմնավորող սուբյեկտը չի կարող ենթարկվել մյուս պետության իրավասությանը:

Եվ վերջապես **դիվանագիտական գործառույթների կամ գործառութային անհրաժեշտության տեսությունը** դիվանագիտական անձեռնմխելիությունն ու արտոնությունները բացատրում է դիվանագիտական ներկայացուցչի կողմից իր առջև դրված խնդիրները հաջողությամբ լուծելու համար բավարար պայմաններ ստեղծելու անհրաժեշտությամբ: Այս տեսությունն ունի նաև դիվանագիտական առավելությունները սահմանափակող բավանդակություն, քանզի ենթադրում է, որ դիվանագիտական ներկայացուցչին տրվող առավելությունները չեն կարող լինել ավելին, քան անհրաժեշտ է նրանց կողմից իրենց առջև դրված խնդիրներն արդյունավետ իրականացնելու համար<sup>3</sup>:

Դիվանագիտական անձեռնմխելիության վերաբերյալ տարբեր տեսությունները, դրանց պատմական հաջորդականությունը հստակ արտահայտում են դիվանագիտական իրավունքի և հատկա-

<sup>1</sup> В. М. Степашин, О. Н. Бибик. Действие уголовного закона в пространстве. Вестник омского университета. Серия “Право”. 2009. N 1(18). с. 77.

<sup>2</sup> Н. Акрамова Основные теоретические подходы к сути и назначению дипломатических привилегий и иммунитетов. Юрист.- 2005, N 2.

<sup>3</sup> Н. Акрамова Основные теоретические подходы к сути и назначению дипломатических привилегий и иммунитетов. Юрист.- 2005, N 2.

պես դիվանագիտական անձեռնմխելիության ինստիտուտի շարունակական զարգացման որակական առանձնահատկությունները: Դրանցից յուրաքանչյուրը համապատասխանել է իր ժամանակի ոգուն, այն հիմնարար գաղափարներին, որի վրա կառուցվել են հարաբերությունները պետությունների միջև և դրանով արտահայտել այդ հարաբերությունների իրավաբանական բնույթը: Օրինակ, էքստերիտորիալության տեսության դիրքերի թուլացումը և գործառույթային անհրաժեշտության տեսության դիրքերի ամրապնդումը պայմանավորված էր համընդհանուր իրավական զարգացման հիմքում արմատացած՝ մարդու իրավունքների պաշտպանության, իրավահավասարության ամրապնդման, հետևաբար նաև առանձին անձանց, խավերին վերապահված արտոնությունների ողջամիտ սահմանափակման գաղափարով:

Թեև էքստերիտորիալության տեսությունը գեներտիկորեն կապված է դիվանագիտական իրավունքի հետ և կոչված է յուրովի բացատրելու հենց դիվանագիտական օբյեկտների բացառումը դեսպանընկալ պետության իրավասությունից, այնուամենայնիվ էքստերիտորիալությունն ավելի լայն գաղափար է: Այն առհասարակ ենթադրում է, որ տվյալ պետության փաստացի սահմաններից դուրս և համապատասխանաբար այլ պետության փաստացի սահմաններում գտնվող որոշ օբյեկտներ (ոչ միայն դիվանագիտական), դե յուրե շարունակում են գտնվել իր պետության տարածքում և դրանց նկատմամբ հյուրընկալ պետության իրավասությունը բացառվում է: Այս տեսությունը դիվանագիտական օբյեկտներին վերաբերող մասով պայմանականորեն անվանենք **«դիվանագիտական էքստերիտորիալություն»:**

Դիվանագիտական էքստերիտորիա-

լությունը, որը սույն հոդվածում քննարկվող մոտեցման տեսական հիմքերից մեկն է, ներկայում ընդունված չէ ո՛չ միջազգային իրավունքի գիտության և ո՛չ էլ պրակտիկայի շրջանակներում, թեև որոշ պետություններում (օրինակ Էկվադոր, Կուբա) այն պետական ճանաչում ունի: Մասնագիտական գրականության մեջ էքստերիտորիալության տեսությունը դիտարկվում է որպես զուտ իրավաբանական ֆիկցիա<sup>4</sup>:

ՀՀ մասնակցությամբ դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունների իրավական հիմքը կազմող հիմնական միջազգային իրավական փաստաթղթերը՝ **«Դիվանագիտական հարաբերությունների մասին»** Վիեննայի կոնվենցիան (1961թ) և **«Հյուպատոսական հարաբերությունների մասին»** Վիաննայի կոնվենցիան (1963թ.) հիմնվում են առավելապես գործառույթային անհրաժեշտության տեսության վրա: Այսպես, **«Դիվանագիտական հարաբերությունների մասին»** կոնվենցիայի նախաբանում նշվում է, որ արտոնություններն ու անձեռնմխելիությունը տրամադրվում են ոչ թե առանձին անձանց շահերի, այլ դիվանագիտական ներկայացուցչությունների, որպես պետությունը ներկայացնող մարմինների առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացման համար: Կամ, նույն կոնվենցիայի նախագծի մեկնաբանություններում միջազգային հարաբերությունների հանձնաժողովն ուղղակիորեն նշում է, որ դեկլարվել է գործառույթային անհրաժեշտության տեսության դրույթներով՝ ի նկատի ունենալով նաև ներկայացուցչության տեսությունը<sup>5</sup>:

Այսինքն՝ դիվանագիտական էքստերիտորիալության տեսությունը, չնայած որ, ինչպես իրավագիտորեն նշվում է գրականության մեջ, նշանակալի հետք է թողել

<sup>4</sup> Л. Оппенгейм, Международное право. Т. 1 Под ред С.Б. Крылова., 1949г. с 330., Акрамова Н. Основные теоретические подходы к сути и назначению дипломатических привилегий и иммунитетов. Юрист.- 2005, N 2.

<sup>5</sup> Yearbook of International Law Commission. Summary records of the ninth session. V 1. 23 april-29 june, 1957.



միջազգային իրավունքի տեսության մեջ ու նաև պրակտիկայում<sup>6</sup>, բայց այժմ պետությունների մեծամասնության մասնակցությամբ դիվանագիտական հարաբերություններում չունի իրավական արտահայտություն, ինչը նշանակում է, որ միջազգային իրավունքը ներկայում դիվանագիտական անձեռնմխելիությունը չի պայմանավորում դիվանագիտական էքստերիտորիալության տեսությամբ<sup>7</sup>:

Այսպիսով, ՀՀ կողմից վավերացված միջազգային իրավունքի նորմերը չեն ճանաչում և արտահայտում այն մոտեցումը, որ ՀՀ-ում այլ պետությունների դիվանագիտական օբյեկտները համարվում են ՀՀ տարածքից դուրս գտնվող և դրանց վրա ՀՀ իրավասությունը չի տարածվում: Նույն կերպ, դրանցում չի ճանաչվում նաև այլ պետություններում ՀՀ դիվանագիտական օբյեկտների վրա ՀՀ իրավասությունը:

**Այժմ դիտարկենք, թե որքանով է դիվանագիտական էքստերիտորիալությունը, թեկուզև դրա պատմական ճանաչումից և արժեքից բխող իներցիայով, արտահայտվել ՀՀ քրեական և քրեադատավարական օրենսգրքերում:**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում, անկախ հանցանքի կատարման վայրից, քրեական գործերով վարույթն իրականացվում է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս՝ Հայաստանի Հանրապետության դրոշի տակ օրինական կարգով գտնվող կամ Հայաստանի Հանրապետության տարբերանշանը կրող, Հայաստանի Հանրապետության օդանավակայանում կամ նավահանգստում գրանցված օդային, ծովային կամ գետային նա-

վի վրա կատարված հանցանքների վարույթը տարվում է սույն օրենսգրքի նորմերով:

Այլ պետության դատարանների կամ քրեական հետապնդման մարմինների միջնորդությամբ առանձին քննչական կամ դատական գործողություններ կատարելիս կարող է կիրառվել օտարերկրյա պետության քրեական դատավարական օրենսդրությունը, եթե դա նախատեսված է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ քրեական օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած անձը ենթակա է պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով:

Փաստորեն, ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերով որպես հիմնական կանոն նախատեսված է դրանց տերիտորիալ, այսինքն՝ ՀՀ տարածքում դրանց գործողության մասին դրույթը: ՀՀ տարածք է համարվում ՀՀ պետական սահմանի ներսում ընկած ցամաքային, ջրային, օդային տարածքը՝ համաձայն միջազգային իրավունքի նորմերի (օրինակ՝ օդային սահմանի բարձրությունը 100-ից 110 կմ և այլն):

**ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը նախատեսում է քրեադատավարական նորմերի էքստերիտորիալ գործողության երեք հնարավոր դեպք, որոնցից վերջինը նախատեսվում է նաև քրեական օրենսգրքով.**

**1.Միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքում,**

**2.Այլ պետության իրավասու մարմնի միջնորդությամբ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելիս:**

**3. Հայաստանի Հանրապետության դրոշի տակ օրինական կարգով գտնվող կամ Հայաստանի Հանրապետության տարբերանշանը կրող, Հայաս-**

<sup>6</sup> Միջազգային իրավունք, Վ. Քոչարյան, Երևան, ԵՊՀ հրատ, 2002թ. էջ 164.

<sup>7</sup> В. М. Степашин, О. Н. Библик. Действие уголовного закона в пространстве. Вестник омского университета. Серия “Право”. 2009. N 1(18). с. 77

**տանի Հանրապետության օդանավակայանում կամ նավահանգստում գրանցված օդային, ծովային կամ գետային նավի վրա կատարված հանցագործությունների վերաբերյալ գործեր քննելիս:**

ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերը, ինչպես նշվեց, չեն արտացոլում դիվանագիտական էքստերիտորիալության տեսությունը և չեն սահմանում այլ պետություններում ՀՀ դիվանագիտական շինությունների ու տարածքների վրա ՀՀ քրեական կամ քրեադատավարական օրենսգրքերի գործողությունը:

Երկրորդ դեպքը, որը ենթադրում է համագործակցող պետությունների միջև փոխադարձության կարգով համապատասխան խնդրանքի հիման վրա այդ խնդրանքի կատարում հենց հայցող պետության օրենքով սահմանված կարգով, առհասարակ կապված չէ էքստերիտորիալության գաղափարի կամ դիվանագիտական օբյեկտների վրա քրեադատավարական իրավասության տարածման հետ և նպատակ է հետապնդում ապահովել հայցվող պետության կողմից կատարված քննչական գործողության և դրա արդյունքում ձեռք բերված ապացույցների համապատասխանությունը հայցող պետության օրենքին, հետևաբար և այդ ապացույցների թույլատրելիությունը:

Էքստերիտորիալ գործողության վերջին դեպքը, որն ինչպես նշվեց վերաբերում է նաև քրեական իրավունքի նորմերին, հիմնվում է էքստերիտորիալության ընդհանուր տեսության վրա, քանի որ ենթադրում է, որ ՀՀ փաստացի տարածքից դուրս գտնվող որոշակի օբյեկտների վրա տարածում է ՀՀ քրեական իրավասությունը: Այսինքն՝ այդ օբյեկտները անկախ գտնվելու վայրից, որոշակի կարգավիճակում (օրինակ թռիչքի համար շարժիչը միացված) դե յուրե համարվում են ՀՀ տարածքում գտնվող: Նույնն է նաև ՀՀ-ում գտնվող՝ այլ պետություններին պատկանող նշված օբյեկտների կարգավիճակը: Օբյեկտները, որոնց վրա տարածվում է ՀՀ քրեադատավարական իրավասությունը, Հայաստանի Հանրապետության դրոշի տակ օրինական կարգով գտնվող կամ Հայաստանի Հանրապետության

տարբերանշանը կրող, Հայաստանի Հանրապետության օդանավակայանում կամ նավահանգստում գրանցված օդային, ծովային կամ գետային նավերն են: ՀՀ քրեական օրենսգրքը նշվածներին ավելացնում է ևս մեկը՝ ՀՀ ռազմական նավերը անկախ դրանց գտնվելու վայրից: **Հատկապես ընդգծենք, որ այլ պետությունում ՀՀ դիվանագիտական օբյեկտները դրանց մեջ ներառված չեն:**

Այսինքն՝ օտարերկրյա պետությունում գտնվող ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության տարածքում կատարված հանցագործությունների կապակցությամբ ՀՀ քրեական և քրեադատավարական օրենսգրքերի գործողությունը սահմանող դրույթներ չկան: Եվ համապատասխանաբար, չկան նաև ՀՀ-ում այլ պետությունների դիվանագիտական օբյեկտների վրա ՀՀ քրեական և քրեադատավարական օրենքների գործողությունը սահմանափակող կանոններ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենսգրքի և քրեական դատավարության նորմեր պարունակող այլ օրենքների գործողությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով դիվանագիտական արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին կամ նույն օրենսգրքի 445-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական ընդդատությունից ազատված այլ անձանց վրա, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

ՀՀ քրեական օրենսգրքի 14-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցիչների և դիվանագիտական իմունիտետից օգտվող այլ անձանց քրեական պատասխանատվության հարցը՝ նրանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարելու դեպքում լուծվում է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

Փաստորեն, դիվանագիտական հա-

րաբերությունների առնչությամբ ՀՀ քրեական և քրեադատավարական օրենսգրքերի գործողության բացառումը վերաբերում է անձանց, և համապատասխանաբար, դիվանագիտական անձեռնմխելիությանը պայմանավորված՝ այն սահմանափակում է այդ իրավական ակտերի գործողությունը **ըստ անձանց շրջանակի**, բայց ոչ տարածության վրա: Այս առումով նույնիսկ զարմանալի է **Վ. Ս. Ստեպաշինի և Օ. Ն. Բիբիկի** մոտեցումը, ովքեր խոսելով քրեական օրենքի տարածքային գործողության մասին, վկայակոչում են ՌԴ քրեական օրենքի նույնաբովանդակ դրույթը դինագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձանց քրեական պատասխանատվության մասին և նշում, որ այս դրույթը ենթադրում է բացառություն քրեական օրենքի տարածքային գործողության սկզբունքից<sup>8</sup>: Չի կարելի չնկատել, որ տվյալ պարագայում քրեական իրավասությունից բացառումը ելնում է անձնային և ոչ թե տարածքային հատկանիշից և օրենքը չի կիրառվում ոչ թե որոշակի տարածքի, այլ անձանց որոշակի շրջանակի վրա:

Այսպիսով, ինչպես ՀՀ քրեական, այնպես էլ քրեադատավարական օրենսգրքերում, **էքստերիտորիալության ընդհանուր** տեսությունը արտահայտված է որոշ օբյեկտների (օդանավերի, նավերի և այլնի) կապակցությամբ, որոնց մեջ սակայն դիվանագիտական օբյեկտները ներառված չեն: Իսկ **դիվանագիտական էքստերիտորիալության տեսությունն** իր արտահայտությունը չունի նաև ՀՀ քրեական և քրեադատավարական օրենսգրքերում: Ոչ նյութական և ոչ էլ դատավարական իրավունքի որևէ նորմ չի սահմանում, որ ՀՀ-ում այլ պետությունների դիվանագիտական օբյեկտների վրա ՀՀ քրեական կամ քրեադատավարական իրավունքի նորմերը չեն տարածվում կամ, որ այդ տարածքների վրա տարածվում են հավատարմագրող պետությունների համապատասխան նորմե-

րը և հակառակը, որ այլ պետություններում ՀՀ դիվանագիտական օբյեկտների վրա տարածվում է ՀՀ քրեական և քրեադատավարական օրենքների գործողությունը:

Ավելի պարզ, և քրեական և քրեադատավարական օրենսգրքերի՝ դրանց գործողության առանձնահատկությունները սահմանող նորմերը նախատեսում են առհասարակ դիվանագիտական հարաբերությունների առնչությամբ դրանց գործողության բացառման միայն մեկ ուղղություն՝ **ըստ անձանց շրջանակի**: Իսկ տարածքի, շենքերի, շինությունների վրա դրանց գործողությունը բացառելու վերաբերյալ կանոններ դրանցում չկան:

Եվ վերջապես, քանի որ վիճարկվող մոտեցման հիմքում որպես կանոն դիվանագիտական էքստերիտորիալության տեսության շրջանակներում և դրա հետ փոխկապակցված դրվում են նաև դիվանագիտական անձեռնմխելիության ինստիտուտի վերաբերյալ փաստարկներ, քննարկենք նաև թե ինչքանով է դիվանագիտական անձեռնմխելիության ինստիտուտը ինքնին, որոշակի կարգավորումների ուժով, անկախ դրա հիմքում ընկած տեսությունից, բացառում ՀՀ քրեական և քրեադատավարական օրենսգրքերի գործողությունը ՀՀ ում այլ պետությունների դիվանագիտական օբյեկտների վրա:

Այսպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 449-րդ հոդվածը սահմանում է, որ դիվանագիտական ներկայացուցչության զբաղեցրած շենքը, դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի նստավայրը, դիվանագիտական անձնակազմի անդամների բնակելի շինությունները, նրանց գույքը և փոխադրամիջոցներն անձեռնմխելի են: Այդ շինություններ մուտք գործել, ինչպես նաև խուզարկություն, առգրավում, գույքի վրա կալանք դնել կարող է կատարվել միայն դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի կամ այդ պաշտոնը զբաղեցնող անձի համաձայնությամբ:

<sup>8</sup> В. М. Степашин, О. Н. Бибики. Действие уголовного закона в пространстве. Вестник омского университета. Серия “Право”. 2009. № 1(18). с. 76.

Նույն կանոնները փոխադարձության հիման վրա, տարածվում են դիվանագիտական ներկայացուցչության վարչական-տեխնիկական անձնակազմի աշխատակիցների և նրանց ընտանիքների համատեղ բնակվող անդամների զբաղեցրած բնակելի շինությունների վրա, եթե նշված անձինք և նրանց ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն և մշտապես չեն բնակվում Հայաստանի Հանրապետությունում:

Հյուպատոսական հիմնարկների զբաղեցրած շենքը և հյուպատոսական հիմնարկների ղեկավարների նստավայրը փոխադարձության հիման վրա, անձեռնմխելի են: Այդ շինություններ մուտք գործելը, ինչպես նաև խուզարկություն, առգրավում, գույքի վրա կալանք դնել կարող են կատարվել միայն դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկների ղեկավարների խնդրանքով կամ համաձայնությանմբ:

Դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների արխիվը, փաստաթղթերը, պաշտոնական գրությունները անձեռնմխելի են: Դիվանագիտական փոստը չի կարող բացվել և վերցվել:

Ինչպես տեսնում ենք, քրեական դատավարության օրենսգիրքը ուղղակիորեն, ընդ որում վերը հիշատակված կոնվենցիոն փաստաթղթերին համապատասխան, հռչակում է դիվանագիտական օբյեկտների, այդ թվում՝ գույքի և փոխադրամիջոցների անձեռնմխելիությունը՝ որոշակի դեպքերում (օրինակ հյուպատոսական ներկայացուցչությանը, դիվանագիտական անձնակազմի անդամներին պատկանելու և այլ դեպքերում) հստակ առանձնահատկություններով, որոնք սույն հետազոտության առարկան չեն հանդիսանում: Նշված օբյեկտների անձեռնմխելիությունն արտահայտվում է առանց որոշակի անձանց հստակ համաձայնության այդտեղ մուտք գործելու, խուզարկություն և առգրավում կատարելու, գույքի վրա կալանք դնելու անհնարինությունամբ: Նշված գործողությունները կարող են կատարվել ներկայացուցչության ղեկավարի համաձայնությամբ:

Այսինքն՝ դիվանագիտական անձեռնմխելիության դեպքում ևս գործ ունենք անձեռնմխելիության դասական դրսևորման հետ, ինչը ենթադրում է որոշակի գործողությունների կատարում՝ միայն լրացուցիչ երաշխիքներով և լրացուցիչ դատավարական խոչընդոտների հաղթահարման դեպքում, ինչպես առկա է անձեռնմխելիության մյուս դեպքերի պարագայում (դատավորներ, պատգամավորներ և այլն): Դիվանագիտական անձեռնմխելիության ինստիտուտը, ելնելով պետությունների փոխադարձ հարգման սկզբունքից, նախատեսում է որոշակի իրավունքներ և շահեր շոշափող գործողությունների կատարման կրացուցիչ պայմաններ, որոնք, սակայն, չեն ենթադրում և չեն կարող ենթադրել նշված օբյեկտների լրիվ բացառում ՀՀ քրեական և քրեադատավարական իրավասությունից:

Այսպիսով, այն մոտեցումը, որ դիվանագիտական օբյեկտների վրա տարածվում է ոչ թե դեսպանընկալ, այլ հավատարմագրող պետության քրեական և քրեադատավարական իրավասությունը, չի հիմնավորվում ինչպես ինքնին դրանց վրա տարածվող առանձնահատուկ ռեժիմի, այնպես էլ առհասարակ դիվանագիտական անձեռնմխելիության տեսական հիմքերի վերլուծությամբ: Այդ մոտեցումը դիվանագիտական իրավունքի զարգացման առանձին շրջափուլերում ի հայտ եկած դրսևորումների իներցիոն հետևանք է: Հետևաբար, ՀՀ-ում դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող տարածքներն ու շինությունները համարվում են ՀՀ տարածքի բաղկացուցիչ մաս և դրանց վրա տարածվում է ՀՀ քրեական և քրեադատավարական իրավասությունը: Այդ տարածքներում, շինություններում կատարված հանցագործությունները համարվում են ՀՀ տարածքում կատարված և դրանց համար քրեական պատասխանատվությունը պետք է առաջանա և դրանց վերաբերյալ քննությունը պետք է իրականացվի ՀՀ քրեական և քրեադատավարական օրենսգրքերին համապատասխան: Համապատասխանաբար, այդ տարածքների վրա այլ՝ հավատարմագրող պետությունների իրավասությունը չի տարածվում:

# ՊԱՏԻ ԴԵՐԸ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

## Արամ ՍԻՐԵԿԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»  
ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների  
գիտահետազոտական կենտրոնի քրեաբան

*Քրեական պատիժը հանցագործություն կատարած անձանց նկատմամբ ներգործության միջոց է: Այն կարևոր դեր է խաղում պետության տնտեսական-քաղաքական հիմքերը, մարդու իրավունքները, ազատությունները և օրինական շահերը ամեն տեսակ ոտնձգությունից պաշտպանելու գործում:*

ՀՀ քրեական օրենսգրքում պատժի հասկացությունը ձևակերպվում է հետևյալ կերպ.

«1. Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ:

2. Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները (ՀՀ Քր. օր. հոդվ. 48):

Պատժի նպատակներն այն փաստական արդյունքներն են, որոնց ձգտում է հասնել պետությունը՝ դատապարտելով հանցագործին և նրա նկատմամբ կիրառելով այս կամ այն քրեական պատժամիջոցը<sup>1</sup>:

Պատժի նպատակների ուսումնասիրությանը դիմել են բազմաթիվ քրեագետներ, սակայն մինչ օրս պատժի նպատակների խնդիրը բանավեճի առարկա է դառնում:

Եվրոպական քրեական իրավունքի ոլորտում հանցանքի դեպքում պատժի իրականացման նպատակի վերաբերյալ ևս չկա ձևավորված միասնական կարծիք: Որոշ քրեագետներ կարծում են, որ պատիժը նպատակ

ունի կանխարգելել հանցանքը, փոխհատուցել արդեն իսկ կատարված հանցանքը, ոմանք էլ կարծում են, որ պատիժը հանցագործի ուղղման միջոց է:<sup>2</sup> Ներկայումս գերակա է համարվում պատիժը որպես հանցագործի ուղղման միջոց կիրառելու գաղափար<sup>3</sup>:

Պատժի նպատակների ժամանակակից պատկերացումները հենվում են քրեա-իրավական գրականության մեջ գոյություն ունեցող տարբեր տեսությունների վրա<sup>4</sup>: Դրանք են. վախի, օգտակարության, ուղղման, հատուցման տեսությունները և այլն:

Համաձայն այս տեսության կողմակիցների՝ վախեցնելը դիտարկվում է որպես կատարած հանցանքի հատուցում: Ըստ ԱՄՆ քրեական իրավունքի տեսության, պատիժը պետք է վախ տարածի «վտանգավոր անձանց վրա՝ այդպես սատարելով սոցիալական կարգուկանոնին»: Տարբերակվում են վախի ընդհանուր և հատուկ տեսակները: Վերջինը նպատակ ունի անձին ցավ պատճառել այնպես, որ հանցագործը այլևս չկրկնի հանցանքը: Վախեցնելու տեսության կիրառումը հանգեցրել է մահապատժի լայն կիրառությանը, անդամահատմանը կամ մարմնական այլ պատիժների<sup>5</sup>:

Գրականության մեջ լայն տարածում է ստացել նաև պատժի օգտակարության տեսությունը: Իր հիմնական գծերով այն մշակ-

<sup>1</sup> Уголовное право. Общая часть. М., 2004. Стр.316

<sup>2</sup> Hall J., General Principles of Criminal Law, Lawbook Exchange, 2005.

<sup>3</sup> Norrie A., Punishment, Responsibility, and Justice: A Relational Critique, Oxford University Press, 2000, pp. 1-20.

<sup>4</sup> Larry A., Crime and Culpability: A Theory of Criminal Law., Cambridge University Press., 2009., pp. 51-55.

<sup>5</sup> Козочкин И.Д. Уголовное право США: успехи и проблемы реформирования. СПб., 2007., стр. 65-70

վել է անզլիացի իրավաբան և փիլիսոփա **Ջ. Բենթամի** կողմից: Ըստ Բենթամի պատժից ստացված օգուտը քաղաքացիների համար ավելի մեծ պետք է լինի, քան հանցագործին պատճառված վնասը<sup>6</sup>:

**Ուղղման տեսության ներկայացուցիչ Շտեյնը** նշում է, որ պատժի նպատակը միայն մեկն է՝ հանցագործի ուղղումը այնպես, որ նա իր սեփական պատճառներով դադարի հասարակության համար վտանգավոր լինել:

Կան նաև քրեագետներ, ովքեր պատժի առաջ դնում են **արդարադատության վերականգնման նպատակներ**<sup>7</sup>:

**Հատուցման տեսությունը** դարեր շարունակ ամենատարածվածն է եղել փիլիսոփայության մեջ: Այսպես, **Չ. Բեքքարիան**, մերժելով հատուցման գաղափարը, նրա հետ կապում էր օգտակար և կիրառական նպատակներ: Նա պատժի նպատակն էր համարում «հանցագործի համար խոչընդոտների ստեղծումը, որպեսզի նա, ինչպես նաև այլ անձինք, հասարակությանը նոր վնաս չպատճառեն: Այդ նպատակով պետք է կիրառել այնպիսի պատիժ, որը համապատասխանի հանցագործությանը, հանցագործի համար լինի նվազ տանջալից, բայց նրա հոգեկանի վրա ունենա մեծ ազդեցություն»<sup>8</sup>:

Սակայն հարկ է նշել, որ պատիժը հանցագործությունների դեմ տարվող պայքարում միակ հիմնական միջոցը չէ: Այսպես, պատիժը երկրորդական է հանցանքի, հանցավորության և դրանց պատճառների համատեքստում: Չնայած նրան, որ այն հիմնական միջոցը չէ, այնուամենայնիվ պատիժը հանդիսանում է ոչ միայն կարևոր, այլ նաև պայքարի անհրաժեշտ միջոց<sup>9</sup>: Հենց պատիժն է ընդհատում հանցանք գործած անձանց հանցավոր գործունեությունը: Այն ազդում է հասարակության բարոյապես անկայուն անդամների վրա՝ ստիպելով նրանց պատժի նկատմամբ վախի առկայության պայմաններում չկատարել քրեորեն պատժելի արարքներ: Սրա հետ կապված քրեական օրենքը տարբերակված կերպով է մոտենում պատժի իրագործմանը՝ որպես պետական հարկադրանքի ամենախիստ

միջոց:

Այստեղ հարկ է նկատել, որ պատիժը հանդիսանում է հանցագործությունները կանխելու (պրևենցիա) կարևոր միջոցներից մեկը<sup>10</sup>:

Քրեական օրենսգիրքը (ՀՀ ՔՕ 48-րդ հոդվածի երկրորդ կետ), ինչպես տեսանք, չի տարբերակում հանցագործությունները կանխելը մասնավորի և ընդհանուրի, սակայն քրեական իրավունքի տեսության մեջ այն շարունակում է տարանջատված մնալ:

Այսպես, հատուկ կանխումը հենց դատապարտյալի կողմից նոր հանցագործությունների կատարումը կանխելն է: Հատուկ պրևենցիան իրականացվում է ինչպես համապատասխան պատժատեսակի նշանակմամբ, այնպես էլ պատժի կրման ընթացքում դաստիարակչական և ուղղիչ ներգործության այլ միջոցների (օրինակ՝ խրախուսանք, տույժ և այլն) կիրառմամբ: Այն հիմնականում իրականացվում է այնպիսի պայմանների ստեղծմամբ, որոնց դեպքում բացառվում է նոր հանցանք գործելու հնարավորությունը: Օրինակ՝ բանտում եղած ժամանակահատվածում հանցագործը մեկուսացված է հասարակությունից և պրակտիկորեն ունակ չէ նոր հանցանք կատարել: Չնայած նա, իհարկե, կարող է նոր հանցանք գործել կալանավայրում, սակայն այնուամենայնիվ նրա՝ կալանավայրում գտնվելը թույլ չի տալիս որոշակի հանցանքներ կատարել, ինչպիսիք են օրինակ՝ դրամ կեղծելը, գրպանահատությունը և այլն: Այստեղ հարկ է նկատել, որ հատուկ կանխարգելման արդյունավետությունը արտահայտվում է **ընդհանուր և հատուկ** ռեցիդիվի հարաբերակցության մեջ<sup>11</sup>:

Ընդհանուր կանխման էությունն այն է, որ կանխվի հանցագործությունների կատարումը այլ անձանց կողմից: Պատժի ընդհանուր մեխանիզմը չափազանց բարդ է: Նախ, հոգեբանական որոշակի նշանակություն ունի քրեական օրենքի գոյության փաստը: Այդ ազդեցությունն ավելի է ուժեղանում, երբ զուգակցվում է պատժի կիրառման անխուսափելիության համոզմունքի հետ: Դրան նպաստում է հանցագործության մեջ մեղավոր անձի

<sup>6</sup> **Кармашев С. Б.** Восстановление справедливости как цель уголовного наказания, Красноярск, 2004., стр. 45-50.

<sup>7</sup> **Непомнящая Т.В.**, Назначение уголовного наказания: теория, практика, перспективы, Юридический центр Пресс, 2006, стр. 616-650.

<sup>8</sup> **Чезаре Беккария**, О преступлениях и наказаниях. М., 1995. Стр. 106

<sup>9</sup> **Мицкевич А.Ф.**, Уголовное наказание: понятие, цели и механизмы действия, СПб.: Юрид. центр Пресс, 2005, стр. 100-110

<sup>10</sup> **Խաչիկյան Խ. Մ.**, ՀՀ Քրեակատարողական իրավունք, ԵՊՀ, 2009, էջ՝ 92-95:

<sup>11</sup> **Андреева В.Н.** Теория и практика назначения наказания. Учебное пособие. Краснодар, 2003., стр. 45

նկատմամբ հրապարակավ պատիժ նշանակելը<sup>12</sup>:

Ինչպես տեսնում ենք, քրեական պատիժը օրենքին ենթարկվելու խթան է հանդիսանում: Դրա կիրառումը կոնկրետ անձանց հանդեպ, ովքեր հանցանք են գործել, նախագուշացնում է բոլորին, թե ինչպիսին են լինում քրեորեն պատժելի արարքի հետևանքները:

Հեղինակների մի մասի կարծիքով պատժի ընդհանուր պրևենցիան ուղղված է հասարակության փոքրաթիվ անկայուն հատվածին, իսկ մեկ այլ խումբ գտնում է, որ այն ներգործություն է ունենում ամբողջ հասարակության կամ ծայրահեղ դեպքում, նրա հիմնական մասի վրա: Կարծում ենք, որ երկրորդ կարծիքն ավելի ռեալ է, քանի որ ընդհանուր պրևենցիայի արդյունքում հասարակության ավելի ստվար հատված է զգոն դառնում, որի արդյունքում հասարակության հանցավորության ռիսկայնությունը նվազում է զգալիորեն:

Հարկ է փաստել նաև, որ քրեական օրենքով ամրագրված պատժի նպատակները, չնայած իրենց տարբեր բովանդակությանը, փոխադարձաբար կապված և փոխապայմանավորված են:

Այսպես, քրեական օրենքի ընդունումով օրենսդիրը սահմանում է որոշակի վարքագծի անթույլատրելիություն: Նախատեսվում են պատիժներ այդ արգելքը խախտողների համար, որի սպառնալիքն ուղղված է հասարակության անկայուն տարրերին: Ուստի և կարելի է ասել, որ ընդհանուր կանխումն իրականացվում է անկայուն տարրին ահաբեկելով, իսկ հասարակության մնացած զանգվածի մոտ հանցագործություններից խուսափելու ցանկության ամրապնդմամբ<sup>13</sup>: Պոտենցիալ հանցագործը, ով տեսնում է պատժի իրագործումը մեկ այլ հանցագործի դեպքում, բնականաբար հոգեբանական ներգործության է ենթարկվում: Նրա համար պարզ է դառնում, որ օրենքը գործում է, և հետևաբար նույն պատիժը իրեն է սպասում քրեորեն պատժելի արարքի կատարման դեպքում:

Ինչպես տեսանք, ժամանակակից աշխարհում պատիժը սկսել է առավել մեծ չափով դիտարկվել որպես հանցագործի ուղղման և հանցագործությունների կանխման միջոց: Պատահական չէ, որ այսօր բավականին մեծ չափերի են հասել այլընտրանքային պատիժները:

Ազատագրվման այլընտրանքային միջոց-

ների հարցը ներկայումս չափազանց արդիական է ամբողջ աշխարհում: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բազմաթիվ երկրներ արդեն լայնորեն կիրառում են այդպիսի պատժամիջոցներ: Այլընտրանքային պատժամիջոցները հնարավորություն են տալիս դատապարտյալին ուղղել՝ հասարակությունից նրան չմեկուսացնելով և հնարավորություն են տալիս չբաժանվել ընտանիքից: Մարդիկ համակերպվում են դատապարտյալների հետ ապրելուն և նրանց վերաբերվում են որպես հասարակության անդամի և ոչ՝ օտարի: Դրանք դատապարտյալին հեռու են պահում բանտի անառողջ միջավայրից:

Շարունակելով հանցագործությունների կանխարգելման հարցում պատժի դերի ուսումնասիրությունը՝ հարկ է նկատել նաև, որ քրեական իրավունքը քարացած երևույթ չէ, իսկ դրա առանձին հարցեր մշտապես գտնվում են բանավեճերի կիզակետում: Այդ «հավերժ» հարցերի շարքին կարելի է դասել նաև պատժի դերի, օգտակարության և այլ հարցերը:

Պատիժը, որպես ընդհանուր կանխման միջոցի կիրառում, առավել հեռանկարային է: Հասարակությունից մեկուսացնելու հետ կապ ունեցող պատիժը նպատակ ունի նվազեցնելու բացասական հետևանքները:

Այստեղ պետք է նշել նաև, որ կապված այն անձանց շրջանակի հետ, ում վրա պետք է տարածվի քրեական պատժի ազդեցությունը, տարբերակում ենք ընդհանուր կանխարգելման նպատակի երկու հասկացություն՝ **լայն և նեղ**:

**Լայն** հասկացությունը իր մեջ ներառում է բոլոր քաղաքացիներին, իսկ **նեղ** իմաստով այն իր մեջ ներառում է միայն հակահասարակական տրամադրվածություն ունեցող անձանց, որոնց քրեորեն պատժելի արարք կատարելու հավանականությունը շատ բարձր է:

Եթե համընդհանուր կանխարգելումը կայանում է քրեական պատժի մեջ, ապա հարց է ծագում. արդյո՞ք այդ սպառնալիքի ազդեցությունը տարածվում է այն անձանց վրա, ովքեր ենթարկվել են քրեական պատժի անատվության: **Վ. Դ. Ֆիլիմովը**, ուսումնասիրելով քրեական իրավունքի ֆունկցիաները, արտահայտել է հետևյալ կարծիքը. «**համընդհանուր կանխարգելումը ազդում է նաև այն անձանց վրա, ովքեր հանցանք են գործել, ովքեր հատուկ կանխման հետ մեկտեղ չա-**

<sup>12</sup> **Благов Е.В.** Применение специальных начал назначения уголовного наказания. М., 2007., стр. 33-40

<sup>13</sup> **Խաչիկյան Խ. Մ.**, ՀՀ Քրեակատարողական իրավունք, ԵՊՀ, 2009, էջ՝ 91:

րունակում են իրենց վրա զգալ քրեական պատժի համընդհանուր կանխման ազդեցությունը, այդ թվում՝ նաև այն քրեաիրավական նորմի, որը արդեն խախտել են»<sup>14</sup>:

Կարելի է եզրակացնել, որ ընդհանուր կանխման նպատակը կայանում է նրանում, որ այն հանցագործության կատարումից կարող է հետ պահել անձին, ով ունի հանցագործության սուբյեկտի անհրաժեշտ հատկանիշներ, և ով նախատեսել է կատարել քրեորեն պատժելի, հասարակության համար վտանգավոր գործողություն կամ հայտնվել է այնպիսի իրադրությունում, որ պահանջում է իրենից հատուկ զգոնություն, որպեսզի խուսափի հասարակության համար վտանգավոր հետևանքներից<sup>15</sup>:

Քրեական պատժելիության վտանգը օբյեկտիվորեն գոյություն ունի, այսինքն՝ անկախ նրանից, թե դա ինչպես է ընկալվում բնակչության տարբեր շերտերի կողմից: Չի կարելի ժխտել, որ անգամ քրեական պատժի առկայության փաստն իսկ հոգեբանորեն ազդեցություն է ունենում բոլոր քաղաքացիների վրա:

Քրեական պատժի կանխարգելիչ ազդեցությունը ծագում է միայն այն ժամանակ, երբ ի հայտ է գալիս քրեորեն պատժելի գործողության կատարում:

Այսպիսով, չի կարելի չզննահատել այն դերը, որ ունի պատիժը հանցագործությունների կանխման գործում: Առաջինը հերթին այն հանգամանքը, որ դատապարտյալների մեծ մասը կարելի է ասել «նորել» է, այսինքն՝ նրանց առաջին դատավճռությունն է, վկայում է քրեական պատժի համընդհանուր կանխման ազդեցության անհրաժեշտության մասին: Ապա հարկ է նշել նաև, որ առանց քրեական պատժի ընդհանուր կանխման ազդեցության

հնարավոր չէ քրեական պատժի կիրառումը պատժի հատուկ կանխարգելման գործողության մեջ՝ որպես հանցանքի կատարման հակադրապատճառ:

Պատիժն այն միջոցներից մեկն է, որի օգնությամբ պետությունը ազդելով հանցավորության վրա՝ պահում է այն որոշակի հարթության վրա:

Այնուամենայնիվ, հանցավորության դեմ պայքարի միջոցների համակարգում պատժի դերը կարելի է համարել ոչ հիմնական, քանի որ հանցավորության աճի միտումը կախված է ավելի հզոր երևույթներից, ինչպիսիք են բազմաթիվ սոցիալական, տնտեսական, իրավական, քաղաքական, կազմակերպական, մշակութային, սոցիալ-հոգեբանական և այլ գործոնները, քան պատժի հնարավոր ազդեցությունն է: Բացի այդ, ազատագրվման ձևով պատժի դեպքում կալանավայրերը, հանդիսանալով յուրատեսակ «հանցավորության դարբնոց», առավել նպաստում են անձի մոտ հանցածին գործոնների ձևավորմանը և հակասոցիալական դիրքորոշման ամրապնդմանը, փոխանակ նպաստելու դատապարտյալի ուղղմանը: Գաղտնիք չէ, որ ազատագրվման վայրերում տիրող հանցավոր բարքերը, հանցավոր աշխարհի ներկայացուցիչների և պրոֆեսիոնալ հանցագործների առկայությունը ոչ թե նպաստում են անձի ուղղմանը, այլ տալիս են հակառակ արդյունք: Ուստի պետությունը պետք է քայլեր ձեռնարկի պատժի համակարգի կատարելագործման, ազատագրվման վայրերի պայմանների բարելավման, դրանք համապատասխան մասնագետներով ապահովվելու ուղղությամբ, ինչը կնպաստի պատժի նպատակների ապահովմանը և դատապարտյալների ուղղմանը:

### Аннотация:

Наказание как средство предупреждения преступлений или средство для дальнейшего предотвращения преступлений распространена во всем мире. Роль последнего - влияние на широкий спектр сообщества, формируя негативное мнение о преступной деятельности людей, которые совершили преступления. Наказание является важным средством профилактики преступлений, с помощью которого возможный рост числа преступлений уменьшается.

### Abstract:

The punishment as a mean of prevention of crimes or a mean for further prevention is widespread all over the world. The role of latter is to influence on wide array of community by forming negative opinion about the criminal activity of people who have conducted crimes. The punishment is an important mean for prevention of crimes in honor to which the possible growth of the number of crimes is decreased.

<sup>14</sup> Филимонов В.Д., Охранительная функция уголовного права, Юрид. центр Пресс, 2003, с. 62.

<sup>15</sup> Мицкевич А.Ф., Уголовное наказание: понятие, цели и механизмы действия, СПб.: Юрид. центр Пресс, 2005, стр. 110.



# ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՆԱԽԱԴԱՅՄԱՆՆԵՐԸ

## ԱՃԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Դայ-ռուսական (սլավոնական) համալսարանի դասախոս

*Նախևառաջ հարկ է նշել, որ սահմանադրական արդարադատության արդյունավետության կարևոր երաշխիքներից և առանձնահատկություններից է սահմանադրական դատարաններ անձանց դիմելու մատչելիությունը, սակայն, միևնույն ժամանակ, պետությունների սահմանադրություններում և օրենքներում նախատեսվում են անհատական սահմանադրական գանգատների ընդունման կոնկրետ նախապայմաններ (այսպես կոչված՝ «զտիչներ»), որոնք պահպանելու դեպքում միայն անձանց գանգատները կարող են ընդունվել և քննության առնվել տվյալ մարմինների կողմից:*

*«Զտիչների» շրջանակի որոշման առնչությամբ տարբեր երկրների փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ մեխանիզմներն ապահովում են, մի կողմից, մարդկանց համար սահմանադրական դատարան դիմելու մատչելիությունը, մյուս կողմից, թույլ են տալիս դիմել միայն այնպիսի հարցերով, որոնք, իրավամբ, սահմանադրականության խնդիր են բովանդակում:*

Այդ նպատակով, մասնավորապես, ամրագրվում են սահմանադրական դատարաններ դիմելու հետևյալ զտիչները.

- ընդհանուր իրավասության դատարանների հնարավորությունները, այսինքն՝ որպեսզի սահմանադրական դատարան դիմելու իրավունք ձեռք բերվի այլ հնարավորությունների սպառումից հետո,

- դատարան դիմելիս պետական տուրքի վճարման կարգը,

- վիճարկվող նորմատիվ ակտերի շրջանակի սահմանումը,

- մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը և այլն:

Այսպես, անհատական սահմանադրական դիմումի ընդունելիության հիմնական չափանիշները, ընդհանուր առմամբ, հետևյալն են՝ 1) վիճարկվող իրավական ակտի անվավեր ճանաչման հարցում բողոքաբերի անձնական հետաքրքրվածու-

թյան առկայության պահանջը, 2) բողոքարկման բոլոր միջոցների սպառումը կամ դրանց օգտագործման անհնարիությունը (չնայած սա տիպիկ պահանջ է կենտրոնացված վերահսկողության համակարգերով երկրներում՝ Ալբանիայում, Բրազիլիայում, Գերմանիայում, Լատվիայում, Չայաստանում, Չեխիայում և այլն, իսկ մյուս պետություններում այն, ըստ երևույթին, բացակայում է): Այս պահանջից հնարավոր են նաև որոշ բացառություններ, օրինակ, այն դեպքերում, երբ սահմանադրական դատարան ներկայացված բողոքն ունի միայն «սահմանադրական նշանակություն» (Չեխիա), կամ եթե այլ միջոցների օգտագործումն «անարդյունավետ» է ճանաչվել (Խորվաթիա, Սլովենիա), կամ գոյություն ունեն «առանձնահատուկ այլ մոտիվներ» (Սլովակիա), կամ եթե կոնկրետ իրավիճակում համապատասխան նորմի պահպանումն ու կիրառումը կարող

է անդառնալի վնաս հասցնել մարդուն (**Ադրբեջան, Շվեյցարիա, Սլովակիա**)<sup>1</sup>, **3)** մեկանգամյա բնույթի առկայությունը, այսինքն՝ սահմանադրական դատարանը զանգատը քննության չի ընդունում, եթե մեկ այլ գործի շրջանակներում այդ հարցի շուրջ արդեն իսկ ներկայացրել է իր տեսակետն ու դիրքորոշումը, **4)** անհատական սահմանադրական դիմումնի քննության ընթացակարգի միջոցով պաշտպանություն հայցող իրավունքները պետք է ունենան կոնկրետ բնույթ:

Ասվածից զատ, անհրաժեշտ ենք համարում նկատել, որ մեծապես կարևորվում է այն նորմատիվ իրավական ակտերի շրջանակի որոշումը, որոնց վրա տարածվում է սահմանադրական վերահսկողությունը: Հիմնականում դիմումների առարկա են հանդիսանում օրենքները, չնայած որոշ երկրներում կարող են վիճարկվել նաև նորմատիվ իրավական այլ ակտերը, գործադիր իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, նորմատիվ բնույթի վարչական ակտերը, դատական ատյանների որոշումները և այլն: Օրինակ՝ **Իսպանիայում և Իտալիայում** սահմանադրական դիմումնի առարկա կարող են լինել միայն օրենքները և օրենքի ուժ ունեցող նորմատիվ ակտերը, **Խորվաթիայում** վերահսկողությունը տարածվում է նաև գործադիր իշխանության կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերի վրա, իսկ **Ավստրիայում, Գերմանիայում** և մի շարք այլ երկրներում որևէ սահմանափակում չի դրվում, և ցանկացած նորմատիվ ակտ կարող է դառնալ սահմանադրական վերահսկողության օբյեկտ: Որոշ պետություններում (**Բելառուսում, Բելգիայում, Հունգարիայում** և այլ երկրներում) անհատական դիմումնի հիման վրա սահմանադրական դատարանը կարող է քննել այնպիսի խախտումների հետ կապված գործեր, որոնք առաջացել են օրենսդրական բացի հետևանքով<sup>2</sup>:

Բացի դրանից, բոլոր երկրների հիմնական օրենքներով կամ օրենսդրական համապատասխան ակտերով սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը պայմանավորվում է որոշակի ժամկետային (ժամանակային) սահմանափակումներով, այսինքն՝ անհատական դիմում ներկայացնելու համար նախատեսվում է կոնկրետ ժամկետ, որը կարող է լինել մի քանի օրից մինչև մի քանի ամիս և հաշվարկվում է սկսած կամ խախտման օրվանից, կամ վիճարկվող ակտը կայացնելու, կամ էլ դրա օրինական ուժի մեջ մտնելու օրվանից: Նման ժամկետի սահմանման հիմնական նպատակը իրավական որոշակիության և հստակության ապահովումն է, որպեսզի որոշակի ժամանակահատված անց իրավական ակտն անհնար լինի վիճարկել և դատավարության կողմերն ի վիճակի լինեն դրա հետ համատեղել իրենց վարքագիծը: Իհարկե, պարզ է, որ այս ժամկետը չպետք է չափազանց երկար լինի (քանզի այդ պարագայում կխաթարվի իրավական որոշակիությունը և կանխատեսելիությունը) և չպետք է ծայրահեղ կարճ լինի այն պատճառաբանությամբ, որ անձը (կամ նրա իրավաբանը) հնարավորություն ունենա պատրաստելու իր բողոքը հնարավորություն ունենա ծանոթանալու գործի նյութերին և կազմելու բողոքի տեքստը: Չնայած, հարկ է հիշեցնել նաև, որ օրենսդրական ակտերով մեծամասամբ նախատեսվում են բողոքարկման ժամկետը վերականգնելու հստակ և կիրառելի ընթացակարգեր, որոնք հիմնականում նպատակաուղղված են հարգելի պատճառներով (ոչ անձի կամ նրա փաստաբանի մեղքով, այլ անխուսափելի և անհաղթահարելի պատճառներով) բաց թողնված ժամկետը վերականգնելուն և անձի սահմանադրական իրավունքների իրացմանն ու երաշխավորմանը նպաստելուն:

Հավելենք նաև, որ սահմանադրական դիմումը պետք է լինի հիմնավորված և

<sup>1</sup> Հիշատակված և այլ պետությունների Սահմանադրությունները տես՝ [http://concourt.am/armenian/legal\\_resources/world\\_constitutions/constit/consts21.html](http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/consts21.html) կայքէջում:

<sup>2</sup> Սույն թեմային նվիրված է Եվրոպական սահմանադրական դատարանների XIV համաժողովի ընդհանուր Ձեկույցը, որը Վենետիկի հանձնաժողովի կողմից հրապարակվել է սահմանադրական նախադեպային իրավունքի հատուկ տեղեկագրում (2008): Այդ մասին հանգամանորեն տես՝ [http://www.lrkt.it/conference/Pranesimai/XIV%20Congress%20General%20Report\\_LT.doc](http://www.lrkt.it/conference/Pranesimai/XIV%20Congress%20General%20Report_LT.doc) կայքէջը:

չպետք է նախապես անհեռանկար լինի. պետք է ունենա բարենպաստ արդյունքի իրական ակնկալիքներ ու որոշ չափով կանխատեսելի հնարավորություններ: Անհատական դիմումներին ներկայացվում են նաև այլ պայմաններ ու պահանջներ, որոնք պայմանականորեն կարելի է անվանել «տեխնիկական»: Այդպիսիք են, օրինակ՝ հետևյալ պահանջները. դիմումի շարադրումը գրավոր տեսքով, տվյալ պետության պետական լեզվով, բողոքաբերի կողմից դիմումի ստորագրված լինելը, ինչպես նաև դիմումի ձևին ու բովանդակությանը ներկայացվող այլ պահանջներ:

Ինչ վերաբերում է սահմանադրական դատարաններում անձանց անհատական մատչելիության ապահովման հետ կապված ֆինանսական խնդիրներին, ապա նշենք, որ որպես կանոն, սահմանադրական արդարատությունն իրականացվում է անվճար հիմունքներով, սակայն քիչ չեն երկրները, որտեղ, փորձելով կանխել անհիմն դիմումների ներկայացումը և այս իրավունքի չարաշահման դեպքերը, սահմանադրական արդարադատություն հայցելու համար նախատեսվում է որոշակի վճար, որն այնքան էլ մեծ զումար չի կազմում և բացարձակապես նպատակ չի հետապնդում սահմանափակելու հետազոտության առարկա իրավունքի իրացումը: Օրինակ՝ **Ռուսաստանում** պետական տուրքը հավասարեցված է նվազագույն հաշվարկային աշխատավարձին, **ԱՄՆ-ում** 300 դոլար է, իսկ **Շվեյցարիայում**՝ 220 եվրո: Մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի չսահմանափակման փաստը կարող ենք միանշանակորեն հաստատել՝ հատկապես հաշվի

առնելով այն, որ սահմանադրական դատարանների պրակտիկայի համաձայն՝ անձի կողմից անվճարունակ լինելու կապակցությամբ սահմանված գումարի վճարումից ազատելու խնդրանքով հիմնավորված միջնորդություն ներկայացնելու դեպքում սահմանադրական դատարանները մեծամասամբ բավարարում են այդօրինակ խնդրանքները:

Անդրադառնալով մեր երկրում անհատական սահմանադրական դիմում ներկայացնելու իրավունքի իրացման նախապայմաններին՝ նշենք, որ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով<sup>3</sup> (այսուհետ նաև՝ Օրենք), որում, ի թիվս այլոց, սահմանվում են ՀՀ սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմնին դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ պայմանները:

Այսպես, հիշյալ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել Սահմանադրության 101-րդ հոդվածով նախատեսված մարմինները և անձինք, ընդ որում, Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետում նշված դեպքում սահմանադրական դատարան կարող են դիմել նաև իրավաբանական անձինք՝ Սահմանադրության 42.1-րդ հոդվածին համապատասխան<sup>4</sup>:

Ընդ որում, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ՀՀ Սահմանադրության մեջ, ինչպես նաև օրենսդրական ակտերում «**յուրաքանչյուր ոք**» եզրույթը չի նշանակում «քաղաքացիություն չունեցող անձ»: Այն միաժամանակ

<sup>3</sup> Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է 01.06.2006թ., ուժի մեջ է մտել 01.07.2006թ.:

Սահմանադրական դիմումի ընդունման կարգը մանրամասնորեն սահմանվում է ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգով, որն ընդունվել է ՀՀ սահմանադրական դատարանի 2012թ. փետրվարի 10-ի աշխատակարգային նիստում՝ ՍԴԱՌ-5 որոշմամբ:

<sup>4</sup> Հիշեցնենք, որ ըստ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված կարգավորման՝ Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը: Իսկ 42.1-րդ հոդվածի բառացի տեքստի համաձայն՝ «մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությանը կիրառելի են դրանց նկատմամբ»:

ենթադրում է թե՛ քաղաքացիներին և թե՛ քաղաքացիություն չունեցող անձանց<sup>5</sup>:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրության և Օրենքի համապատասխան նորմերում բովանդակված դրույթներն անհատական դիմումների առնչությամբ նախատեսում են մի շարք նորմատիվ հիմնական կանոններ, որոնցից է՝ անձի անհատական դիմումը սահմանադրական դատարանում քննության կա-

րող է ընդունվել, եթե **ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում** հանդիսացել է դատավարության մասնակից, **որի նկատմամբ** գործը լուծող (իրավական վեճը լուծող, իրավաբանական փաստին վերջնական զնահատական տվող) **վերջնական դատական ակտով**<sup>6</sup> կիրառվել է որևէ օրենքի դրույթ<sup>7</sup>:

Ինչ վերաբերում է դիմում ներկայացնե-

<sup>5</sup> ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մայիսի 8-ի ՍԴՈ-803 որոշման 11-րդ կետը:

Միևնույն ժամանակ նկատենք, որ անկախ նրանից, թե համապատասխան իրավական ակտում կիրառվում է «յուրաքանչյուր ոք», թե «քաղաքացի» եզրույթը, դրանց իրավական բովանդակությունը համընկնում է: Ինչպես «յուրաքանչյուր ոք», այնպես էլ «քաղաքացի» հասկացությունները մեկնաբանելիս՝ դրանց ներքո ներառում ենք և՛ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, և՛ օտարերկրյա պետությունների քաղաքացիներին, և՛ քաղաքացիություն չունեցող անձանց: «Քաղաքացի» բառի նմանօրինակ մեկնաբանության վերաբերյալ տես, օրինակ, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի կիրառման դատական պրակտիկայի մասին» 2013թ. հունվարի 29-ի No 130 որոշումը:

<sup>6</sup> ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ **2008թ. սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758** որոշման 11-րդ կետում նշել է, որ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն անհատական դիմումի շրջանակներում սահմանադրական դատարանում կարող են վիճարկել **դատարանի վերջնական ակտով կիրառված** օրենքի դրույթները: Որպես վերջնական դատական ակտ առանձին դեպքերում կարող են հանդես գալ տարբեր ատյանի՝ առաջին ատյանի, վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի դատական ակտերը: Առավել հաճախ վերջնական դատական ակտը վճռաբեկ դատարանի ակտն է, որը կայացվել է ի սպառումն պաշտպանության բոլոր միջոցների: Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ սահմանադրական նշված դրույթը որպես անհատական դիմումի ընդունելիության պայման ամրագրում է վիճարկվող օրենքի դրույթի **վերջնական դատական ակտով կիրառված լինելու պահանջը**, ինչը չի նշանակում, որ վերջնական դատական ակտով կիրառված դրույթը պետք է պարտադիր կերպով կիրառված լինի նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում, օրենքի դրույթի սահմանադրականությունը սահմանադրական դատարանում վիճարկելու համար բավական է միայն այդ դրույթի կիրառումը վերջնական դատական ակտով: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրության համապատասխան կետը հնարավոր է համարում սահմանադրական դատարանում այնպիսի օրենքի դրույթի սահմանադրականության վիճարկում, որը կիրառվել է որպես վերջնական դատական ակտ հանդիսացող՝ վճռաբեկ դատարանի կամ վերաքննիչ դատարանի ակտով, սակայն չի կիրառվել առաջին ատյանի դատարանի ակտով:

Միևնույն ժամանակ, «վերջնական դատական ակտ» հասկացության անհրաժեշտ հստակեցմանը ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև **ՍԴՈ-1114** որոշմամբ, ըստ որի՝ այն հաճախ շփոթում են վերադաս դատարանի կողմից կայացված ակտի հետ: Եթե քաղաքացին դիմել է վճռաբեկ դատարան և վերջինս մերժել է նրա դիմումը քննության ընդունել, դա չի նշանակում, որ այդ որոշումն է վերջնական դատական ակտ: Ընդ որում, սահմանադրական համապատասխան նորմը վերաբերում է վերջնական դատական ակտին, այլ ոչ թե բողոքարկման ընթացքում վերջին ատյանի դատարանի կողմից ընդունված ցանկացած ակտի: Սահմանադրաիրավական բովանդակությամբ դատարանի վերջնական ակտն այն ակտն է, որը գործն ըստ էության լուծել է, օրինական ձևով ուժի մեջ է մտել և անձի համար առաջացրել է համարժեք իրավական հետևանք: Նման մոտեցումից է բխում նաև ՀՀ քաղ. դատ. օր.-ի 241.11-րդ հոդվածի 2-րդ մասի իրավական բովանդակությունը, համաձայն որի. «Սույն օրենսգրքի իմաստով՝ **վերջնական** դատական ակտ է համարվում սույն օրենսգրքով սահմանված կարգով առաջին ատյանի դատարանի կայացրած և ուժի մեջ մտած, բողոքարկման ոչ ենթակա, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած և ուժի մեջ մտած, գործի քննությունը սկսելը և շարունակելը բացառող, ինչպես նաև գործն ըստ էության լուծող դատական ակտը»:

<sup>7</sup> Առհասարակ անցման շրջանում գտնվող երկրների համար, քանի դեռ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հստակ ու գործուն համակարգ չի ձևավորված, իսկ օրենսդրական դաշտն ունի ներքին բազմաթիվ անհամաձայնություններ ու հակասություններ, նախապատվությունը պետք է տրվի նորմատիվ ակտերի շրջանակը որքան հնարավոր է քիչ սահմանափակելուն: Այդ մասին, տես, օրինակ, Համատեղ սեմինարների նյութերի ժողովածու (1997թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին կայացած «Մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքները» ծրագրով սեմինարի նյութերը) /խմբ.՝ **Վ. Հովհաննիսյան**. - Եր.: Տիգրան Մեծ, 1997. - էջ 11: Չնայած դրան ՀՀ Սահմանադրությամբ ֆիզիկական և իրավաբանական անձինք իրավասու են վիճարկելու միայն **օրենքի դրույթի** սահմանադրականությունը, ինչի հետ կապված հիմնախնդիրներին, սակայն, սույն հոդվածի շրջանակներում չենք անդրադառնում, քանզի դա առանձին քննարկման թեմա է:

լու ժամկետային սահմանափակումներին, ապա հարկ է նկատի ունենալ, որ այն կարող է սահմանադրական դատարան ներկայացվել իր հանդեպ կիրառված դատական ակտի վիճարկման առկա հնարավորություններն սպառելու պահից ոչ ուշ, քան վեց ամիս հետո: Միաժամանակ դիմողը պարտավոր է սահմանադրական դատարան ներկայացնել օրենքով սահմանված չափով պետական տուրք վճարելու փաստը հավաստող փաստաթուղթը՝ անդորրագիրը, կամ միջնորդություն՝ պետական տուրքի վճարումից ազատելու մասին: Այս կապակցությամբ նկատենք, որ ֆիզիկական անձանց կողմից սահմանադրական դատարան դիմելու համար պետական տուրքը սահմանված է բազային պետական տուրքի հնգապատիկի չափով (5.000 դրամ), իսկ իրավաբանական անձանց համար՝ քսանապատիկի չափով (20.000 դրամ):

Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009թ. մարտի 17-ի ՍԳԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ հաստատել է այն փաստը, որ ի տարբերություն իրավանորմների սահմանադրականության վերացական վերահսկողության, անհատական դիմումի դեպքում անձի կողմից սահմանադրական դատարանում իր գործողությունների ու դրանց հնարավոր հետևանքների հստակ գիտակցման և դատարանն անհիմն դիմումներով չձանրաբեռնելու պահանջներով է պայմանավորված դիմում ներկայացնելու օրենքով սեղմ ժամկետ և պետական տուրք վճարելու պարտականություն նախատեսելը:

Անշուշտ, անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի օրենքի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և Սահմանադրության այն դրույթներին, որոնց, դիմողի զնահատմամբ, հակասում են տվյալ օրենքի դրույթները, ինչպես նաև պետք է պա-

րունակի Սահմանադրությանը հակասելու անհրաժեշտ և բավարար հիմնավորումներ: Հատկանշական է, որ անհատական դիմումը քննության ընդունելիս օրենքի դրույթը կիրառված լինելու և որոշ այլ հանգամանքների որոշման համար հիմք են ընդունվում տվյալ հարցի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Ըստ այդմ, անհատական դիմումների ընդունելիության կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների ուսումնասիրության արդյունքում հարկ է նշել, որ այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, նկատել է, որ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը չի ենթադրում անձի՝ իր հայեցողությամբ այդպիսի պաշտպանության ցանկացած միջոցի կամ ընթացակարգի ընտրության հնարավորություն: Այդ միջոցներն ու ընթացակարգերը սահմանված լինելով օրենքներով՝ իրավաբանական մշանակություն ունեցող համապատասխան դեպքերի, փաստերի առկայության պարագայում նախատեսում են անձի խախտված իրավունքների դատական պաշտպանության կոնկրետ ձևեր ու եղանակներ<sup>8</sup>:

Այսպիսով, անձի՝ անհատական դիմումով սահմանադրական դատարան դիմելու իրավունքի բովանդակությունն ու իրացման վերոհիշյալ շրջանակները պայմանավորված են սահմանադրական կոնկրետ վերահսկողության այն հիմնական տրամաբանությամբ, նպատակներով<sup>9</sup> ու առանձնահատկություններով, որոնք ձևավորվել են սահմանադրական-արդարադատական պրակտիկայում (այդ թվում միջազգային) և ամրագրվել համապատասխան օրենքով: Մասնավորապես, սահմանադրական դատարանը փաստել է, որ անհատական դիմում ներկա-

<sup>8</sup> Անհատական սահմանադրական դիմումների ընդունելիության չափանիշների վերաբերյալ առավելագույնս մանրամասն տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԳԱՌ-21 աշխատակարգային որոշումը, որի բովանդակությունը որոշ չափով ներկայացված է սույն հոդվածում:

<sup>9</sup> Մասնավորապես, սահմանադրական «կոնկրետ վերահսկողության» նպատակն է ապահովել սահմանադրական արդարադատություն իրականացնելու իրավազորությամբ չօժտված՝ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների կողմից կոնկրետ գործերի լուծումը Սահմանադրությանը համապատասխանող օրենքների հիման վրա և իրականացնել անձի սահմանադրական իրավունքների պաշտպանությունը, երբ նրա իրավունքները խախտվել են արդարադատության իրականացման գործընթացում հակասահմանադրական օրենսդրական նորմի կիրառման արդյունքում:

յացնելիս, ի թիվս ըստ ձևի ներկայացվող պահանջների կատարման, անձը.

- **պետք է հստակ պատկերացնի իր նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված օրենքի նորմի բովանդակությունը և փորձի գնահատել ու նախատեսել սահմանադրական դատարանում իր իրավունքների պաշտպանությանն ուղղված և Սահմանադրությամբ ու օրենքով թույլատրելի հետագա գործողությունները,**

- **փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել և ի՞նչ է ակնկալում սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում,**

- **պետք է ձեռնպահ մնա դիմումում քաղաքական կամ ոչ իրավական բնույթի հարցադրումներից, արտահայտություններից, դատարանի նկատմամբ ծնշում գործադրելու փորձերից,**

- **դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր, իրավաբանորեն հիմնավորի իր միջնորդությունները,**

- **անհրաժեշտության և հնարավորության դեպքում (իր ընտրությամբ) ապահովի իր իրավունքները և շահերը սահմանադրական դատարանում մասնագիտական բավարար կարողությամբ ներկայացնելու ընդունակ օրինական ներկայացուցչի (փաստաբան, իրավաբանական բարձրագույն կրթություն ունեցող կամ սահմանադրական իրավունքի բնագավառում գիտական աստիճան ունեցող անձ):**

Ֆիզիկական և իրավաբանական ան-

ձանց համար սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը ծագում է քաղաքացիաիրավական, վարչաիրավական վեճերի կարգավորման, ինչպես նաև քրեական մեղադրանքի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտի և համապատասխանաբար՝ նշված վեճերի և քրեական մեղադրանքի հարցի լուծման իրավազորությամբ օժտված դատական մարմիններում պաշտպանության միջոցներն սպառելու արդյունքում<sup>10</sup>:

Հիմք ընդունելով այն փաստը, որ 2010թ. հոկտեմբերի 19-ին կայացրած իր ՍԴՈ-921 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ կոնկրետ վերահսկողության շրջանակներում նորմի սահմանադրականության գնահատումն իմաստ ու նշանակություն է ստանում տվյալ կոնկրետ գործով սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով, ակնհայտ է, որ ցանկացած պարագայում՝ որպես անհատական դիմումը քննության ընդունելու որոշակի նախապայման, գնահատման է ենթակա նաև այն հանգամանքը, թե արդյոք կոնկրետ իրավիճակում խախտվել է անձի սուբյեկտիվ որևէ իրավունք, թե ոչ: Սուբյեկտիվ իրավունքների խախտման փաստի բացակայության պարագայում ՀՀ սահմանադրական դատարանը կարող է, մասնավորապես, մատնանշել, որ խնդրո առարկա դրույթի վիճարկումը չի բխում սահմանադրական կոնկրետ վերահսկողության էությունից, որտեղ էականն անձի սահմանադրական սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն է, որոնք **խախտվել են արդարադատության իրականացման գործընթացում ենթադրյալ հակասահմանադրա-**

<sup>10</sup> Հարկ է նշել, որ պարտադիր չէ, որպեսզի անձը դիմած լինի եռաստիճան դատական համակարգի բոլոր ատյաններ (առաջին ատյանի դատարանից մինչ վճռաբեկ դատարան), այլ պարզապես անհրաժեշտ է, որպեսզի նա **սպառած լինի օրենքով տվյալ դատական ակտի բողոքարկման համար նախատեսված իրավական բոլոր հնարավոր միջոցները:** Որպես օրինակ նշենք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերջնական են, վերանայման ենթակա չեն և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, հետևաբար տվյալ դեպքերում միայն վարչական դատարանի համապատասխան դատական ակտի կայացումը ճանաչվում է որպես վերջնական դատական ակտ և բավարար է սահմանադրական դատարան դիմելու համար (իհարկե, եթե դիմումը բավարարում է մյուս պահանջները):

**Կան նորմի կիրառման արդյունքում<sup>11</sup>:**

Այսպիսով, անհատական սահմանադրական դիմումի ընդունման պայմանների համակարգային վերլուծությունը հիմք է տալիս նկատելու, որ այն կարելի է թույլատրելի համարել, եթե դիմումատուն ներկայացնում է իր իրավունքի խախտման շոշափելի հնարավորությունը (ինչը ենթադրում է ոչ միայն խախտման վերաբերյալ դիմումատուի սուբյեկտիվ ընկալում, այլև խախտման իրական հավանականություն), դրա վերաբերելիությունը (այսինքն՝ դիմողը պետք է ցույց տա դիմումի առարկայի ազդեցությունն իր վրա), իրավունքի խախտման այժմեականությունը (դիմումատուի իրավունքները պետք է արդեն և դեռ խախտված լինեն, խախտումը պետք է լինի այժմեական և ոչ թե դրա հնարավորությունը տեսանելի լինի ապագայում):

Վերը շարադրվածի հիման վրա հարկ է արձանագրել, որ անհատական սահմանադրական դիմումների գտման լծակներն ու մեխանիզմները, մի կողմից, չպետք է «ոչ լուրջ» կամ «չափազանց մեղմ» լինեն՝ համապատասխան մարմիններին անհիմն չժանրաբեռնելու նկատառումներից ելնելով, իսկ, մյուս կողմից, ակնհայտ է, որ դիմումների գտման նպատակ հետապնդող պայմանների խստացման պարագայում կարող է տուժել մարդու սահմանադրական արդարադատության իրավունքը: Կարող ենք փաստել ԶԳ սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու համար նախատեսված իրավական (ինչպես սահմանադրական և օրենսդրական, այնպես էլ սահմանադրական դատարանի պրակտիկայում ձևավորված) պայմանները բավականաչափ հստակ և պարզորոշ են, չհիմնավորված կերպով չեն սահմանափակում անձանց արդարադատության (մասնավորապես, սահմանադրական արդարադատության) իրավունքը, ամբողջապես ծառայում են իրենց առջև դրված նպատակներին:

Այս առնչությամբ նկատենք, որ ԶԳ սահմանադրական դատարանը ևս արձանագրել է, որ անհատական դիմումների ընդունման վավերապայմանների սահմանումն ինքնանպատակ չէ: **Այդ վավերապայմանների նպատակն է ապահովել սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատություն իրականացնելու իր գործառույթի պատշաճ և արդյունավետ իրացումը՝ դատարանին ձերբազատելով ինչպես անհիմն դիմումներից և դրանց հետևանքով սահմանադրական դատարանն անհիմն ծանրաբեռնելուց, այնպես էլ այն դիմումներից, որոնք չեն ծառայելու կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակին, այն է՝ ընդհանուր արդարադատության իրականացումը Սահմանադրությանը համապատասխանող օրենքների հիման վրա ապահովելու<sup>12</sup>** (ընդգծումը մերն է):

Իհարկե, անհերքելի է այն իրողությունը, որ անձի՝ սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու իրավունքի առկա սահմանափակումներն ու գործող գոտիչ մեխանիզմներն իրականում գործողության մեջ դնելու կարիք չի լինի, եթե սահմանադրական դատարան դիմելու իրավագործությամբ օժտված մյուս բոլոր սուբյեկտները գործեն առավելագույնս արդյունավետորեն և լիարժեքորեն՝ իրացնելով Սահմանադրությամբ և օրենքներով իրենց վերապահված լիազորությունները, ինչպես նաև եթե առավելապես գործադրվեն սահմանադրորեն և օրենսդրորեն նախատեսված բոլոր լծակները՝ մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի լիարժեք իրացման համար, ինչը ենթադրում է առկա հնարավորությունների շրջանակներում Սահմանադրությամբ անմիջական գործող ճանաչված իրավունքների ամբողջական երաշխավորում, ապահովում ու պաշտպանություն:

<sup>11</sup> Այսօրինակ մոտեցում տես ԶԳ սահմանադրական դատարանի 2013թ. հունվարի 25-ի ՍԴԱՌ-8 աշխատակարգային որոշման մեջ, որտեղ նշվում է, որ դիմողները վիճարկվող դրույթին, ըստ էության, անդրադարձել են համակարգային վերլուծության արդյունքում և չեն հիմնավորել իրենց սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

<sup>12</sup> Տես ԶԳ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի արդեն իսկ վկայակոչված՝ ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշումը:

# ՊԵՏԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԻՎԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

## Արթուր ԻԿԻԼԻԿՅԱՆ

ՀՀ ՉԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտ

*Ինքնիշխանությունը իր տարածքում պետության լիիշխանության և այլ պետություններից նրա անկախության վիճակն է: Ինքնիշխանությունը ենթադրում է, որ պետության ձևով կազմակերպված տվյալ հասարակության մեջ պետության անունից հանդես եկող հանրային իշխանությունը իր մեջ ներառում է հետևյալ անհրաժեշտ հատկանիշները.*

1. Իշխանության միասնություն, որն արտահայտված է բարձրագույն պետական իշխանություն կազմող միասնական բարձրագույն մարմնի կամ մարմինների համակարգի առկայությամբ: Այս համախմբի՝ որպես միասնական իշխանության մարմինների համակարգի բնույթը պայմանավորված է դասակարգային հիմքի միակությամբ: Նրա իրավաբանական հատկատիչներն այն են, որ.

ա) այդ մարմինների համախմբը իրավասությունը ներառում է պետության գործառնությունների կատարման համար անհրաժեշտ բոլոր լիազորությունները,

բ) այդ համակարգին պատկանող տարբեր մարմիններ չեն կարող միևնույն հանգամանքներում միևնույն սուբյեկտներին միաժամանակ պարտադրել վարքի միմյանց բացառող կանոններ:

2. Իշխանական պարտադրանքի մենաշնորհի պատկանելություն պետությանը՝ հանձինս նրա մարմինների, կամ դրա կենտրոնացում նրա ձեռքում: Հասարակության անդամների նկատմամբ կիրառվող իշխանական պարտադրանքը կարող է իրականացվել միայն պետության կողմից կամ պետական նպատակներով պետության կողմից համապատասխան իրավունքի շնորհման հե-

տևանքով: Վերջին դեպքում բավարար չէ, որ պետությունը պարզապես թույլ տա կամ հավանություն տա, որ որևէ ոչ պետական կազմակերպություն իրականացնի այդ պարտադրանքը: Անհրաժեշտ է, որ տեղի ունենա անմիջական շնորհում, որի դեպքում ցանկացած իշխանական պարտադրանք դառնում է այնպիսի պարտադրանք, որը բխում է հենց պետական իշխանությունից, որն իր հայեցողությամբ կարող է տվյալ կազմակերպությանը զրկել նրա իշխանական գործառնություններից: Հակառակ դեպքում պետության իշխանությունը կլիներ սահմանափակ, քանի որ գոյություն կունենային այնպիսի կազմակերպություններ, որոնք իշխանական գործառնությունները կիրականացնեին իրենց իսկ կողմից մի կողմ թողած պետությունը, և այդ դեպքում պետական ինքնիշխանության մասին խոսք անգամ լինել չի կարող:

Իշխանական պարտադրանքի մենաշնորհի կամ կենտրոնացման սկզբունքն ուղղված է ընդդեմ սոցիալ-քաղաքական հոգնակիության սկզբունքի, որը կարող է հանգեցնել ինքնիշխանության ժխտմանը:

Ընդամին, իշխանական պարտադրանքը ներառում է ոչ միայն հրամանի արձակում, այլև ենթակա սուբյեկտների



կողմից տվյալ հրամանի կատարման ապահովում սեփական ուժերով<sup>1</sup>:

3. Պետական իշխանության գերակայությունն իր տարածքի նկատմամբ, այսպես կոչված տարածքային գերակայություն:

4. Պետության իշխանության արտաքին անկախություն: Ինքնիշխանության բովանդակության առումով դա նշանակում է, որ պետությունն իր խնդիրները և շահերը իրականացնում է արտաքին միջամտությունից ազատ, իսկ իրավաբանական ձևի առումով դա արտահայտում է այն փաստը, որ նման ազատության համար չկան արտաքին իրավաբանական սահմանափակումներ, բացի միջազգային իրավունքի այն նորմերից, որոնք համապարտադիր են բոլոր պետությունների համար:

Պետական իշխանության այդ բոլոր հատկանիշների հանրագումարը, առանց որի չի կարող լինել ինքնիշխանություն<sup>2</sup>:

Որոշ հեղինակներ ինքնիշխանությունը դիտում են որպես զուտ իրավաբանական կատեգորիա: Այսպես. **Յ.Քելզենը** հնարավոր է համարում ինքնիշխանության գոյությունը միայն իրավաբանական հարթության մեջ: **Յ.Քելզենի** կարծիքով փաստացի ինքնիշխանություն չի կարող լինել, այն բացառվում է արդեն այն պատճառով, որ գործում է պատճառականության ռեալ սկզբունքի ոլորտում: Ինքնիշխանության այդպիսի զուտ ձևական հայեցակարգը հատուկ է նաև **Ա. Պալենկոյին**, որը պնդում է, թե «**ինքնիշխանությունը միայն զուտ ձևական իրավաբանական հասկացություն է, որը մատնանշում է պետության իրա-**

**վաբանորեն անվերապահ ու անկախ տիրապետությունը... Ինքնիշխանության հասկացությունը ամենևին էլ չի մատնանշում այն փաստացի հզորությունը և նյութական միջոցներն ու ուժը, որոնք գտնվում են տվյալ պետության տնօրինության տակ իր ինքնիշխանությունը պահպանելու համար: Դա փաստացի հարց է, որը հույժ կարևոր է քաղաքական տեսակետից, սակայն չի վերաբերում ինքնիշխանության իրավաբանական բնույթին»:** Այդ նույն տեսության մեկ այլ կողմն են, որով իրավաբանականը կտրվում է փաստացիից ու քաղաքականից, **Աֆոլտերի, Յերցֆելդի** և այլոց տեսությունները, որոնցով շեշտվում է ինքնիշխանության ամենևին էլ ոչ իրավաբանական, այլ զուտ քաղաքական բնույթը:

Մեր կարծիքով իրավաբանականի ու փաստացիի հակադրումը միանգամայն սխալ է (թեև դրանք անհրաժեշտ է տարբերակել):

Իրավաբանականը միշտ էլ որպես իր բաղադրատարր ներառում է փաստացին: Իրականության վրա չհիմնվող իրավունքը իրավունք չէ: Իրավասուբյեկտությունը որպես իր գոյության նախադրյալ միշտ ունի իրավունքի սուբյեկտի առկայության կամ գոյության փաստը: Միջազգային իրավունքի ոլորտում այդ նախադրյալն արտահայտվում է արդյունավետության սկզբունքի միջոցով, ըստ որի ինքնիշխանության անհրաժեշտ հատկանիշն է պետության կողմից իր տարածքում սեփական գործառնությունների արդյունավետ կատարումը: Ե՛լ ավելի մեծ չափով դա վերաբերում է պետական

<sup>1</sup> Պետության կողմից իշխանական պարտադրանքի մենաշնորհն իր ձեռքը վերցնելու հարցի նշանակությունը շեշտել է դեռ **Կորկունովը** (Русское государственное право. 1914. т.1. с. 27-29): Սակայն Կորկունովը թույլ է տալիս անհետևողականություն, իշխանական պարտադրանքի մենաշնորհը դիտելով որպես պետության անհրաժեշտ հատկանիշ, որն իսկ մտած է պետության սահմանման մեջ, նա միևնույն ժամանակ նշում է, թե պետության կողմից պարտադրանքի մենաշնորհացումը տեղի է ունենում լոկ երկարատև պետական զարգացման հետևանքով: Իրականում իշխանական պարտադրանքի մենաշնորհացումը ոչ թե ընդհանրապես պետության անհրաժեշտ հատկանիշն է, այլ ինքնիշխան պետության:

<sup>2</sup> Տե՛ս **Грaчeв Н.И.** Государственное устройство и суверенитет в современном мире: вопросы теории практики. Дисс.... док. наук. Волгоград. 2009, с. 92-93.

իրավունքին, որովհետև այս դեպքում որոշակի փաստը արդյունավետ պետական կազմակերպության առկայությունը, պայման է ոչ միայն պետության որպես իրավունքի սուբյեկտի սուբյեկտիվ իրավունքի համար, այլև տվյալ պետության մեջ գոյություն ունեցող օբյեկտիվ իրավունքի համար, քանի որ միայն պետական պարտադրանքի արդյունավետության շնորհիվ է այդ իրավունքը իրավունք դառնում: Պետության գործառույթների իրականացման արտաքին չափանիշն է հանրային իշխանության գործող մեխանիզմի առկայությունը:

Իշխանության կառուցակարգի առկայությունը պետության ինքնիշխանության տարրական հատկանիշն է:

Անկախությունն ու լիիշխանությունը գոյություն ունեն միայն այն դեպքում, երբ տվյալ պետության մարմինները պարտավոր չեն այդ կամ մեկ այլ պետության պետական իրավունքի պատճառով կամ այլ պետության հետ անիրավահավասար պայմանագրի հետևանքով ենթարկվել այլ պետության մարմինների կարգադրություններին:

Լիիշխանությունն ու անկախությունը նշանակում են, որ պետության մարմիններն իրականացնում են հենց տվյալ հասարակության մեջ իշխող դասակարգի կամքն ու շահերը, բայց ոչ մեկ այլ հասարակության նույն կամ այլ դասակարգի (ինչը կսահմանափակեր անկախությունը) կամ այդ նույն հասարակության մեկ այլ դասակարգի կամքն ու շահերը (ինչը կսահմանափակեր լիիշխանությունը):

Ակնհայտ է, որ այս դրույթը հնարավոր չէ պատկերացնել բացարձակ, մետաֆիզիկական իմաստով: Լիովին անկախ պետությունը փաստորեն չի կարող իր հարաբերություններում հաշվի չառնել այլ պետության շահերը, չի կարող այս կամ այն չափով չզոհաբերել իր շահերը հանուն բարիդրացիական հարաբերությունների կամ անբարենպաստ հետևանքներից խուսափելու համար: Եթե պետությունը համաձայն է կնքելու ստրկացուցիչ պայմանագիր խուսափելով լրիվ կործանումից, ապա այս դեպքում ևս կարելի է խոսել կամքի ու շահի

մասին, այն է՝ վատթարագույնից խուսափելու կամքի ու համապատասխան շահի մասին:

Միջազգային իրավունքում ինքնիշխանությունը նշանակում է պետության լիարժեք իրավունակություն և գործունակություն: Միջազգային-իրավական գրականության մեջ բավական լայն տարածում ստացած «կիսահինքնիշխան պետություններ» տերմինը դժվար թե կարելի է հասկանալի համարել: Իր ծագման պահին այդ տերմինը վերաբերել է Գերմանական կայսրության կազմի մեջ մտնող պետություններին: Պատերազմից հետո այն կիրառվում էր սահմանափակ իրավունակությամբ ու գործունակությամբ պետությունների նկատմամբ: Այդպիսիք էին այն երկրները, որոնք գտնվում էին գաղութային կախման մեջ, օրինակ պրոտեկտորատները, վասալական պետությունները, անիրավահավասար պայմանագրերով կամ մանդատներով կապված պետությունները: Այստեղ հանդիպում ենք միջազգային իրավունքում գաղութատիրական վարչակարգերի սրբագործման և օրինականացման փորձերի: Իհարկե, քանի դեռ գոյություն ունի գաղութատիրական համակարգ, գործող միջազգային իրավունքը չի կարող գերծմնալ տվյալ պետական կազմավորումների իրավաբանական կարգավիճակի սահմանումից, սակայն կարիք չկա, որ մենք առանց որևէ անհրաժեշտության ընդունենք մի տերմին, որը տրամաբանական առումով չի դիմանում որևէ քննադատության և միևնույն ժամանակ ունի որոշակի քաղաքական միտում՝ այդ կախյալ, անինքնիշխան տարածքները ինքնիշխանության մի «մասնիկով» իբր օժտելու միջոցով շղարշելու գործերի իրական դրվածքը, դրան տալու քիչ թե շատ գրավիչ տեսք:

Պետության լիիշխանությունն ու անկախությունը դրսևորվում են պետության կողմից իր գործառույթների կատարման ժամանակ և այդ պատճառով ենթադրում են տվյալ գործառույթների իրականացումը իրավաբանորեն ապահովող համապատասխան ինքնիշխանական իրավունքների առկայություն: Դրանց թվին են դասվում այնպիսի իրավունքները,

ինչպիսիք են իշխանության մարմինների ստեղծման իրավունքը, արտաքին հարաբերությունների վարման իրավունքը, պատերազմող կողմ համարվելու իրավունքը, օրենսդրությամբ զբաղվելու իրավունքը, դատելու իրավունքը, իր տարածքում կարգուկանոն պահպանելու իրավունքը և այլն: Սակայն այդ իրավունքների առկայությունը, լինելով ինքնիշխանության անհրաժեշտ պայման, ինքնին դեռ բավարար չէ ինքնիշխանության ստեղծման համար: Ինքնիշխան պետություններին առանձնահատուկ է առաջին հերթին այդ իրավունքների լրիվությունը: Ոչ ինքնիշխան պետությունները, որպես կանոն, օժտված չեն լինում բոլոր պետական իրավունքներով և զրկված են լինում դրանց մի մասից, օրինակ արտաքին հարաբերությունների իրավունքից կամ ինքնուրույն պատերազմող կողմ դիտվելու իրավունքից: Սակայն ինքնիշխանության հիմնական էական բնութագիրն են լիիշխանությունը և այդ իրավունքների իրացման անկախությունը, այսինքն պետության մեջ այդ իրավունքների իշխող դասակարգի տեսակետից առավել լիարժեք տնօրինումը: Այսպիսով ինքնիշխանությունը բնութագրվում է ոչ միայն իրավունքների ծավալով, այլև, ինչն առավել էական է, այդ իրավունքների տնօրինության յուրահատուկ բնույթով կամ որակով: Ընդսմին պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ այդ իրավունքների կոնկրետ շարքը ոչ թե մշտական է, մեկ անգամ ընդմիշտ տրված, այլ որոշվում է հասարակության զարգացման տվյալ պատմական ժամանակաշրջանում պետության ունեցած գործառույթներով փոփոխվելով պետության գործառույթների կազմի փոփոխման համեմատ: Կարող է փոփոխվել նաև առանձին գործառույթների բնույթը: Այսպես, ցանկացած կողմից ազդեսիայի կոլեկտիվ ճնշման ապահովմանն ուղղված միջազգային-իրավական հաստատությունների զարգացմանը զուգընթաց պետության ռազմական գործառույթը կարող է սահմանափակվել իր տարածքի պաշտպանությամբ ու ազդեսորի դեմ կազմակերպված կոլեկտիվ գործողությունների

մասնակցելու պարտավորությամբ:

Սահմանադրական իրավունքի բովանդակության փոփոխությունը անմիջականորեն կապված է հետևյալ փոփոխությունների հետ.

**1) պետության գործառույթների փոփոխություն,**

**2) պետության գործունեության ձևերի փոփոխություն,**

**3) միջազգային հարաբերությունների բնույթի փոփոխություն:**

Այդ բոլոր փոփոխություններն անմիջականորեն անդրադառնում են պետության իրավունքների ծավալի վրա: Որոշ իրավունքներ կարող են պետության իրավունքների թվից բացառված լինել, այլ իրավունքներ, որոնք վերաբերում են ինչպես միջազգային, այնպես էլ ազգային իրավունքի ոլորտներին, կարող են դառնալ անառարկայական կամ, հակառակը, առաջին անգամ դառնալ իրացվելի: Պետության իրավունքների կազմում տեղի ունեցող փոփոխություններն իրենց հերթին անդրադառնում են ինքնիշխանության կոնկրետ իրականացման վրա:

Եվ այսպես, ինքնիշխան պետությունը ոչ ինքնիշխան պետություններից տարբերվում է պետական իրավունքներին տիրապետության լրիվությամբ ու բնույթով:

Այս կապակցությամբ ծագում են մի շարք բարդ հիմնահարցեր: Չէ որ ցանկացած պայմանագիր պետության վրա դնում է այնպիսի պարտավորություններ, որոնցից նա չի կարող ազատվել իր միակողմանի ակտով: Այս փաստարկը հաճախ է օգտագործվում ինքնիշխանության և միջազգային իրավունքի անհամատեղելիության դրույթի հիմնավորման համար: Պետության ցանկացած պարտավորություն որոշակիորեն սահմանափակում է այդ իսկ պետության կողմից իր գործառույթների իրականացման ազատությունը: Յետևաբար, ցանկացած պայմանագիր կարելի է դիտարկել որպես ինքնիշխանության սահմանափակում: Եվ հենց դրանից էլ ընկելով **Օպենհեյմն** ստիպված է ընդունելու, որ **«անկախությունը աստիճանի հարց է, և նույն ձևով աստիճանի հարց է նաև**

**այն, թե վերացվում է արդյոք պետության անկախությունը որոշակի սահմանափակումներով, թե ոչ»<sup>3</sup>:** Հարաբերական անկախության այս տեսությունը շատ ավելի վաղ զարգացրել էր Ռոզենը, որը պնդում էր, թե միջազգային պայմանագիր կնքած ամեն մի պետություն բառիս բուն իմաստով արդեն անկախ է:

Այդ «տեսությունը» որդեգրեցին նաև ինքնիշխանությունը քննադատող քաղաքական գործիչները, որոնցից է, օրինակ, **Մակ-Նեյլը**, որը ՄԱԿ-ի 2-րդ Գլխավոր ասամբլեայում հայտարարեց, թե ցանկացած պայմանագիր նշանակում է պետության հրաժարում իր ինքնիշխանության որոշակի գործառույթներից: Բայց նման փաստարկի ընդունման դեպքում վերանում է այս կամ այն պայմանագրի քաղաքական հետևանքների մասշտաբը: Ըստ էության, նման պնդումը հանգեցնում է ինքնիշխանության ցանկացած խախտումների, ընդհուպ մինչև դրա վերացումը, արդարացմանը, եթե դրանք ձևակերպված են այնպիսի պայմանագրով, որը երկու կողմն էլ ստորագրել են «կամավոր»:

Մեր կարծիքով, էական է միջազգային պայմանագրերում պետության իրավունքների սահմանափակման փոխադարձությունը: Միևնույն ժամանակ պետության գործառույթների հետ կապված հիմնական պետական իրավունքների օգտագործման լիիշխանությունն ու անկախությունը այն կարևոր չափանիշն է, որը թույլ է տալիս պետության ինքնիշխանությունը սահմանափակող կամ խախտող և նույնիսկ վերացնող պայմանագրերը տարբերել այն պայմանագրերից, որոնք թեև պետության վրա դնում են այնպիսի պարտավորություններ, որոնցից նա չի կարող ազատվել միակողմանի ակտի միջոցով (ինչը բխում է պայմանագրի բուն էությունից), սակայն այնուամենայնիվ չեն սահմանափակվում նրա ինքնիշխանությունը: Ինքնիշխանությունը չի բացառում միջազգային

պարտավորությունները, սակայն ստեղծում է պետական իրավունքների լրիվության, պետության լիիշխանության և անկախության պրեզումցիա (ճշմարտընկալություն):

Ընդսմին, պայմանագրի կնքման և միջազգային պարտավորությունների ստանձման բուն իրավունքն ինքնիշխանության առավել էական դրսևորումներից մեկն է:

Ինքնիշխանության սահմանափակման մասին կարելի է խոսել մի քանի իմաստով: Մի դեպքում խոսքը ինքնիշխանության ընդհանուր հասկացության բովանդակության մեջ է, կամ ինքնիշխանությունից բխող իրավունքների կազմում տեղի ունեցող այն փոփոխությունների մասին է, որոնք ծագում են միջազգային իրավունքի զարգացման հետևանքով:

Նման դեպքում ավելի ճիշտ կլիներ խոսել ինքնիշխանության իրականացման սահմանափակության մասին: Ինքնիշխանության իրականացման սահմանափակումները կարող են այնքան հեռու գնալ, որ ինքնիշխանությունից մնա լոկ նրա ուրվականը, սովորը, «jus nudum»-ը (մերկ իրավունքը): Այս դեպքերում չկա ինքնիշխանության «սահմանափակում», որովհետև ինքնիշխանությունն իսկ վերացած է լինում, թեկուզ և շարունակել պահպանվել պաշտոնական ակտերի բառագործածություններում: Այլ դեպքում կարող է տեղի ունենալ ինքնիշխանության քիչ թե շատ լուրջ խախտում, բայց եթե պայմանագրային պարտավորությունները չեն դիպչում ինքնիշխանության սուբստանցիային, եթե դրանք էապես չեն դիպչում պետության որպես անկախ ու լիիշխան կազմակերպության կողմից իր գործառույթների իրականացման նրա իրավունքին, պետության լիիշխանությունն ու անկախությունը հարցականի տակ չեն դրվում, ապա, իհարկե, ինքնիշխանությունը պահպանվում է, թեև նրա իրականացման համար գոյու-

<sup>3</sup> Oppenheim. International Law 1937. էջ 236.

թյուն ունեն որոշակի սահմանափակումներ, որոնք անշուշտ տհաճ են ինքնիշխան պետությանը: Տվյալ հարցում չափանիշը ինքն իսկ ռեալությունն է, որը չի կարող ներկայացված լինել պարզագույն սխեմաների տեսքով:

Ինքնիշխանության հատկություններին մեկն է դեռ **Բողենի և Յոբսի** կողմից նշված նրա անբաժանելիությունը: «Մասնակի ինքնիշխանություն» հասկացությունը դիտվում է որպես մի ներքուստ հակասական հասկացություն, տրամաբանական անհեթեթություն, որովհետև ինքնիշխանությունը կան լիարժեք է, կան էլ գոյություն չունի: Ինքնիշխանությունն իր մեջ պարունակում է և՛ բանասիրական, և՛ տրամաբանական առումով գերադրական աստիճան: Այսպիսով ինքնիշխանության բաժանումը հակասում է նրա բուն իմաստին:

Ըստ էության, ինքնիշխանության անբաժանելիության տեսության հեղինակները ելնում էին այն մեկնակետից, որ ինքնիշխանությունը պատկանում է ոչ թե պետությանը, այլ նրա մի որևէ մարմնի: Այսպիսով ինքնիշխանության անբաժանելիության տեսությունը պնդում էր, որ պետության մեջ բացարձակ ու անսահմանափակ իշխանությունը պատկանում է ինչ-որ մեկ մարմնի: Ինքնիշխանության անբաժանելիության նման տեսությունը ներկա պայմաններում պետք է մերժված լինի որպես անկիրառելի տեսություն:

Իսկ որն է ինքնիշխանության անբաժանելիության, կամ միասնականության սկզբունքի իմաստը ինքնիշխանության մեր ըմբռման դեպքում: Կարելի է արդյոք լիովին հրաժարվել ինքնիշխանության միասնականության սկզբունքից: Նման եզրակացությունը միանգամայն սխալ կլիներ:

Ինքնիշխանության միասնականության սկզբունքն ունի ամուր ռացիոնալ միջուկ, որն անհրաժեշտ է պահպանել: Միասնականությունը ինքնիշխանության անհրաժեշտ հատկությունն է: «Երկու ինքնիշխան իշխանություն չեն կարող միաժամանակ, կողք կողքի գործել նույն պետության մեջ»: Այս սկզբունքն իր կիրառությունն է գտնում ինչպես ինքնիշխանության դասակարգային էության ուսումնասիրության, այնպես էլ նրա իրավաբանական ձևի վերլուծության ժամանակ:

Ինքնիշխանության միասնականությունն, առաջին հերթին, արտահայտում է քաղաքական ինքնիշխանության հատկությունը:

Քաղաքական ինքնիշխանության միասնականությունը ամենևին էլ չի նշանակում, թե իրավաբանական ինքնիշխանության կրող կարող է լինել լոկ մեկ մարմին, չի նշանակում, թե ինքնիշխանություն ունի և իրականացնում է մեկ մարմին: Քաղաքական ինքնիշխանությունն անբաժանելի է, սակայն իրավաբանական ինքնիշխանության իրականացումը կարող է ձևականորեն բաշխված լինել մի քանի մարմնի միջև:

Իրավաբանական ինքնիշխանության նկատմամբ այս կամ այն մարմնի հարաբերությունը կարող է ունենալ հետևյալ ձևը.

- 1) ինքնիշխանության տիրապետում,
- 2) ինքնիշխանությանը մասնակի տիրապետում,
- 3) ինքնիշխանական իրավունքների վերահսկելի իրականացում:

Ինքնիշխանության տիրապետումը նշանակում է բոլոր ինքնիշխանական իրավունքների իրականացում կամ ինքնիշխանական իրավունքների մի մասի իրականացում ու մնացած մասի իրականացման վերահսկում: Իրավաբանական ինքնիշխանության տիրապետումը իր իրավաբանական բնույթի հետևանքով ենթարկվում է պետության մեջ տիրող ընդհանուր իրավական կարգերի ազդեցությանը: Այդ ինքնիշխանությանը տիրապետողը այն իրականացնում է սահմանադրական կարգով, սակայն կարող է պատասխանատու լինել իր գործողությունների ոչ թե բովանդակության, այլ միայն կարգի համար: Յետևողականորեն ժողովրդավարական պետությունում ինքնիշխանությանը տիրապետումը կենտրոնացված է հենց ժողովրդի ձեռքում:

# ԻՐԱՎԱԿԱՆ ԳՆՈՐԱԼԻԶԱՑԻԱՆ ՈՐՊԵՍ ԱՐԴԻ ԴԱՐԱՆՐԶԱՆԻ ՕԲՅԵԿՏԻՎ ԵՐԵՎՈՒՅԹ

Ալֆրեդ ՍԱՐԴՅԱՆ  
ասպիրանտ

*Գլոբալիզացիան հասարակական գիտություններում արդեն մեծ տարածում գտած հասկացություն է<sup>1</sup>: Լայն տարածում են գտել նաև այն պնդումները, ըստ որոնց մարդկությունն ապրում է մի ժամանակաշրջանում, երբ հասարակական կյանքի երևույթները մեծամասամբ պայմանավորված են գլոբալ գործընթացներով, որտեղ աստիճանաբար վերանում են ազգային մշակույթը, ազգային տնտեսությունը և ազգային այլ սոցիալ-տնտեսական երևույթները<sup>2</sup>: Այս և նման ընկալումների գազաթնակետը վերջերս մեծ թափ ստացած տնտեսական և իրավական գլոբալիզացիայի գործընթացն է: Կարելի է պնդել, որ արդեն իսկ ձևավորվել կամ ձևավորվում է իսկապես գլոբալ տնտեսություն: Միջազգայնացվել է համաշխարհային տնտեսության շարժիչ ուժը, որն այժմ պայմանավորված է անկառավարելի շուկայական ուժերով, որտեղ արդեն կարևորագույն դերակատարներն ու փոփոխությունների հիմնական կողմնակիցները, հիրավի, անդրազգային ընկերակցություններն են, որոնք կախված չեն որևէ պետությունից և տեղակայված են այնտեղ, որտեղ նշանակալի են գլոբալ շուկայի առավելությունները:*

Տեսական գրականության մեջ «գլոբալիզացիա» ենթադրում է որպես բազմաշերտ, լայնածավալ գործընթաց, որը միջազգային ասպարեզում ներառում է քաղաքական, տնտեսական և իրավական համակարգերը<sup>3</sup>: Գլոբալիզացիայի գործընթացն, ըստ էության, օբյեկտիվ օրինաչափություն է, որը բխում է արդի

ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումներից<sup>4</sup>: Ինչպես նշում է Գ. Հարությունյանը. «Նոր հազարամյակ մարդկությունը թևակոխեց վերաիմաստավորման անհրաժեշտությամբ և հասարակական տեսության կանոնակարգման ու կայուն զարգացում երաշխավորելու

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Paul Hirst and Grahame Thompson, 2<sup>nd</sup> Globalization in question. 1999.  
<sup>2</sup> Տե՛ս. Dicken P. Global Shift: The internationalization of Economic Activiti 2<sup>nd</sup> and. London. 1992, Paul Chapman.  
<sup>3</sup> Տե՛ս. **Поленика С.В., Гаврилов О.А.; Колдаева Н.П., Лукьянова Е.Г., Скурко Е.В.** Воздействие глобализации на правовую систему России. “Государство и право”, 2004, N 3, с. 5; **Дахин В.** Глобализация — взгляд историка. — “Свободная Мысль” — XXI, 2001, N5, с. 26:  
<sup>4</sup> Մանրամասն տե՛ս. **Некипелов А.Д.** Процесс глобализации и выбор странами СНГ сценариев социально-экономического развития. “Глобализация экономики, региональная интеграция, влияние этих процессов на положение трудящихся государств-участников СНГ”. М., 2002.

լուրջ փնտրտույններով... Շրջանառության մեջ դրված «գլոբալիզացիա», «ունիվերսալիզմ», «միջազգային ժողովրդավարություն», «համաշխարհային համակարգ», «վերպետական Սահմանադրություն» և բազում այլ հասկացություններ պահանջում են ոչ միայն իմացական, այլև իրավագիտական ու քաղաքագիտական խոր իմաստավորում, ժողովրդավարական պետության հիմնական սկզբունքների հետ այնպիսի բաղդատում, որպեսզի որոշակիացվեն կայուն և քաղաքակիրթ զարգացման չափանիշներն ու այդ ոլորտում միջազգային արդյունավետ գործակցության շրջանակները»<sup>5</sup>:

*«... Մարդկությունն ապրում է մի ժամանակաշրջանում, երբ հասարակական կյանքի երևույթները հիմնականում պայմանավորված են գլոբալ գործընթացներով...»*

Գլոբալիզացիայի գործընթացի արդյունքները իրավական բնագավառում ներկայումս շոշափելի են հատկապես Եվրամիության շրջանակներում, որտեղ ընդունվել է միասնական Սահմանադրության նախագիծը և մշակվում է ընդհանուր քաղաքացիական օրենսգրքի նախագիծը<sup>6</sup>: Եվրոպայի խորհրդի շրջանակներում իրավական գլոբալիզացիան հետամուտ է հետևյալ նպատակների իրականացմանը. անդամ պետությունների (հատկապես հետսոցիալիստական) քաղաքական համակարգերի ժողովրդավարացում, իրավունքի գերակայության հաստատում և մարդու իրավունքիների պաշտպանության իրական երաշխիքների ապահովում: Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ գլոբալիզացիայի գործընթացները սոցիալ-տնտես-

ական և իրավաքաղաքական ոլորտներում առայժմ ոչ բոլոր դեպքերում են դրական արդյունք տալիս, քանի որ ազգային համակարգերը գտնվելով զարգացման տարբեր աստիճանների վրա,

դժվարությամբ են հարմարվում որակական նոր տնտեսական, սոցիալական և քաղաքական իրողություններին: Այս փաստը անհանգստացրել է նաև Միավորված Ազգերի Կազմակերպությանը, որն ընդունել է հատուկ ծրագիր «Գլոբալիզացիան մարդկային դեմքով», որտեղ մասնավորապես նշված է. «Նոր դարաշրջանում գլոբալիզացիայի մարտահրավերը նրանում չէ, որ կասեցնի գլոբալ շփումների զարգացումը: Մարտահրավերը նրանում է, որ մշակվի կանոններ և ինստիտուտներ տեղական, ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում առավել արդյունավետ կառավարման համար, որպեսզի պահպանվի գլոբալ շուկաների առաջնայնությունը և, միաժամանակ, ստեղծվի անհրաժեշտ տարածություն, որտեղ մարդկային, համայնքային և բնական պաշարները ծառայեն ոչ միայն շահույթ ստանալու, այլև մարդկանց համար»<sup>7</sup>:

Պետությունների և ժողովուրդների

<sup>5</sup> Տես. **Գագիկ Հարությունյան**, Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները: Երևան, 2003. էջ 5:

<sup>6</sup> Եվրոպայի Միության Սահմանադրության մասին տե՛ս. Europa: Draft Treaty establishing a Constitution for Europe.-<http://europa.eu.int/@/futurum/costituti'on/index -en.htm>. **Peter Norman**. The Accidental Constitution. The story of the European Convention. Euro Comment. Brussels. 2003; **Ульрика Геро**. Конституция для Европы. Новые правила для старого континента. <http://deutchebotschaft-moskau>.

<sup>7</sup> Տե՛ս. Globalization with a human face. Human Development Report. UNO, 1999, 1. 4

տնտեսական, քաղաքական, իրավական և սոցիալական կյանքի վրա գլոբալիզացիայի ներգործության միջոցներն ու եղանակները տարբեր են և բազմազան: Մասնավորապես, իրավական ոլորտում առավել տարածված է միջազգային և տարածաշրջանային իրավական ակտերի փոխակերպումը ազգային օրենսդրությունում, ինչպես նաև ազգային իրավական համակարգում միջազգային իրավունքի գերապատվության ճանա-

գային իրավական ակտերի անմիջական գործադրման շրջանակները Հայաստանի Հանրապետությունում: Ըստ այդ օրենքի 21 հոդվածի 2-րդ կետի. **«Միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներն ու նորմերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:**

**Հայաստանի Հանրապետության օրենքներն ու իրավական այլ ակտերը պետք է համապատասխանեն միջազգային իրավունքի համընդհանուր նորմերին ու սկզբունքներին»:**

**«... Գլաբալիզացիայի գործընթացի արդյունքները իրավական ոլորտում ներկայումս շոշափելի են հատկապես Եվրամիության շրջանակներում...»**

չումը: Հայաստանի Հանրապետությունում դա արտահայտվել է ինչպես սահմանադրական, այնպես էլ օրենսդրական, մակարդակներում: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածում նշված է. **«Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերը կիրառվում են միայն վավերացնելուց հետո: Վավերացված միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը:**

**Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց հետո»:**

Իսկ «իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքն առավել ընդլայնել է միջազ-

գային իրավական գլոբալիզացիան, ամենից առաջ, ազդում է պետության իրավաստեղծ (օրինաստեղծ) գործունեության վրա բազմազան ձևերով ու եղանակներով, որոնք արտահայտվում են ազգային իրավունքի աղբյուրներում: Այդ գործընթացը առանձնահատուկ դրսևորումներ է ստանում հետսոցիալիստական իրավական համակարգերում: Քաղաքական և տնտեսական արմատական վերափոխումների հետևանքով իրավունքի համակարգում տեղի է ունենում ոչ միայն օրենսդրության փոփոխություն, այլև, ըստ էության, ձևավորվում է որակապես նոր իրավական համակարգ<sup>8</sup>: Ազգային իրավունքի համակարգում այդ որակական փոփոխությունները հիմնված են միջազգային իրավունքի և արտասահմանյան երկրների փորձի վրա: Չնայած ազգային իրավական համակարգի որակական փոփոխությունները ոչ միշտ են հետևողական և նպատակաուղղված, այդուհանդերձ, դրանք հիմք հանդիսացան

<sup>8</sup> Այդ մասին մանրամասն տես՝ **Գագիկ Հարությունյան**, Դատական իշխանություն, Համակարգային գործակցության եվրոպական զարգացումների փորձից: Երևան, 2002, Лебедев В. Совершенствование правосудия-цущественный фактор устойчивого развития России.- “Российская юстиция”, 2003, N 3 և այլն:



ժողովրդավարական հասարակության և շուկայական հարաբերությունների ձևավորման գործընթացի համար:

Այսպես, օրինակ, նոր շուկայական հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը, իր հակասություններով և անկատարությամբ հանդերձ, ճանապարհի հարթեց շուկայական հարաբերությունների կանոնակարգման և քաղաքացիական շրջանառության զարգացման համար:

Ազգային իրավական համակարգը գլոբալիզացիայի ազդեցության հետևանքով ձեռք է բերում մի շարք առանձնահատկություններ և նոր որակական հատկանիշներ, որոնք հանգում են հետևյալին.

1. օրենսդրական գործունեությունը հիմնվում է ժողովրդավարական սկզբունքների վրա,

2. ազգային օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան (ոչ միշտ հետևողական) աստիճանաբար համապատասխանեցվում են միջազգային և տարածաշրջանային իրավական չափանիշներին,

3. իրավական հիմք է ստեղծվում սեփականության բոլոր ձևերի հավասարության և ազատ զարգացման, ինչպես նաև քաղաքակիրթ շուկայական հարաբերությունների ձևավորման համար,

4. իրավական երաշխիքների որոշակի համակարգ է ստեղծվում (օրինակ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների Եվրոպական կոնվենցիան վավերացնելը և դրա

դրույթների փոխակերպումը ազգային օրենսդրության մեջ և այլն) անձի իրավական դրության բարելավման և նրա իրավունքների պաշտպանության ոլորտում: Այստեղ առանձնահատուկ նշանակություն ունի, մարդու

*«... Պետությունների և ժողովուրդների տնտեսական, քաղաքական, իրավական և սոցիալական կյանքի վրա գլոբալիզացիայի ներգործության միջոցներն ու եղանակները տարբեր են և բազմազան...»*

իրավունքների դատական պաշտպանության ինստիտուտը, որը, հնարավոր է միայն անկախ դատական իշխանության առկայության պայմաններում<sup>9</sup>:

Իրավական գլոբալիզացիան հզոր խթանիչ ուժ է տարբեր իրավական համակարգերի ինտեգրման համար: Սոցիալական ինտեգրացիան, իր դրսևորման բոլոր ձևերով ու տեսակներով, հասարակության զարգացման կարևոր նախապայման է: Ինտեգրացիայի շնորհիվ հասարակական պրակտիկան ձեռք է բերում նոր որակներ, հասարակական կառուցակարգերում երևան են գալիս նոր միավորումներ (պետությունների միության կամ համագործակցություն, պառլամենտական վեհաժողովներ, քաղաքական կուսակցությունների բլոկներ, մոդելային օրենսդրություն և այլն), որոնք խթան են հանդիսանում սոցիալական առաջընթացի համար:

<sup>9</sup> Տե՛ս. Егоров А.В. Правовая интеграция и ее содержание.- “Государство и право”, 2004, №6, 74.

# ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻԶՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արսեն ԱՅՎԱԶՅԱՆ  
Դայրոդ

*Քրեական-դատավարական օրենսդրության զարգացումը ժամանակակից փուլում բնութագրվում է առաջին հերթին քրեական գործընթացի մասնակիցների, նրանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի, ինչպես նաև իրավապահ մարմինների գործունեությունում այդ իրավունքների ապահովման երաշխիքների նկատմամբ ուշադրության ուժեղացմամբ:*

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության բարձրագույն արժեք և կարևոր բաղկացուցիչ: Նշվածը հռչակվում է ՀՀ Սահմանադրությամբ և ընդգծվածում, որ «Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան» (հոդվ.3):

Մարդու բնական և անօտարելի իրավունքների համակարգում ազատությունը և անձնական անձեռնմխելիությունը գրավում են հատուկ տեղ՝ եթե պաշտպանված չեն ազատությունը և անձնական անձեռնմխելիությունը, ապա պաշտպանված չեն նաև այլ իրավունքները: Անձի անձեռնմխելիության ապահովումը հանդիսանում է իրավական պետության հասունության և զարգացման ցուցանիշ:

ՀՀ Սահմանադրությունում և միջազգային իրավունքի համընդանուր ճանաչում գտած սկզբունքներում և նորմերում, որոնք նվիրված են քրեական վարույթ ներառվող անձի կարգավիճակին, հայտարարվում է կամայական գործողությունների իրականացման արգելք, որոնք սահմանափակում են անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը:

Միևնույն ժամանակ ՀՀ Սահմանադրության 43 և 44 հոդվածներով բացառիկ դեպքերում նախատեսվում է մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հնարավորություն օրենքով՝ այն չափով, որով դա. «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար» (հոդվ. 43):

Անձի անձեռնմխելիության և ազատության նման սահմանափակումները նախաքննության ժամանակ առկա են մեղադրյալների և կասկածյալների նկատմամբ, կրում են հարկադրական բնույթ և ուղղված են քրեական դատավարության հաջող իրականացման համար պայմանների ստեղծմանը: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսդրական խնդիրներն են՝

1) **Քրեական դատավարությունն իրականացվում է՝ ապահովելու համար՝ ա) անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից,**

բ) անձի և հասարակության պաշտպանությունը պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից՝ կապված իրական կամ ենթադրվող հանցավոր արարքի հետ:

2) Քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում՝

ա) քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և նշված օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի:

բ) ոչ մի անմեղ անձ հանցանքի մեջ չկասկածվի և չդատապարտվի:

գ) ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման (ՔԴՕ 2-րդ հոդվ.):

Մեծ հաշվով, կարելի է եզրակացնել, որ վերոնշված խնդիրները հանդիսանում են դատական վերահսկողության օբյեկտները:

Քրեական-դատավարական հարկադրանքը, հանդիսանալով պետական հարկադրանքի ձևերից մեկը, իրենից ներկայացնում է քրեական դատավարության մասնակիցների վարքագծի և գիտակցության վրա ազդեցության յուրօրինակ մեթոդ: Նման ազդեցությունը ապահովվում է հատուկ միջոցների օգնությամբ, որոնք արտահայտվում են քրեական-դատավարական իրավունքի նորմերով նախատեսված անձի իրավունքների և ազատությունների սահմանափակման մեջ: Այն

իրականացվում է իշխանական լիազորություններով օժտված իրավասու մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ իրենց դատավարական պարտականությունների կատարմանը հարկադրման, կամ քրեական դատավարության խնդիրների լուծման ապահովման նպատակներով<sup>1</sup>:

Խափանման միջոցների կիրառությունը հետապնդում է իր ինքնուրույն անմիջական նպատակը, որը տարբերվում է դատավարական հարկադրանքի այլ միջոցների նպատակներից:

Ինչպես ճիշտ նկատել է **Վ. Ա. Միխայլկովը**. «Խափանման միջոցների օգնությամբ ապահովվում է մեղադրյալի անձնական մասնակցությունը քրեական դատավարությունում, նրա չխուսափումը քրեական հետապնդումից, նրա նկատմամբ քրեական պատժի միջոցների կիրառությունը և նրանից նյութական հատուցման ապահովումը հասցված նյութական վնասի համար»<sup>2</sup>: Միժամանակ խափանման միջոցները հանդես են գալիս նաև որպես անվտանգության միջոցներ, որոնք պաշտպանում են քրեական դատավարության այլ մասնակիցներին կասկածյալի կամ մեղադրյալի կողմից հնարավոր կամ իրական անօրինական ազդեցությունից<sup>3</sup>:

ՀՀ ՔԴՕ 135 հոդվածում նշված է պաշտոնատար անձանց և պետական մարմինների սպառնիչ ցանկը, ովքեր լիազորված են կիրառել խափանման այս կամ այն միջոցը: Դրանք են՝ դատարանը, դատախազը, քննիչը և հետաքննության մարմինը:

Դատավարական հարկադրանքի միջոցները, հանդիսանալով քրեադատա-

<sup>1</sup> См.: Якубович Н. А. Предварительно расследования. Методологические, уголовно процессуальные и криминалистические проблемы: Дис. ...докт. юрид. наук. - М., 1977. - А. 314.

<sup>2</sup> Михайлов В. А. Уголовно-процессуальные меры пресечения в судопроизводстве РФ. - М., 1997. - С. 17.

<sup>3</sup> См.: Брусницын Л. В. Обеспечение безопасности лиц, содействующих уголовному правосудию: Метод, рекомендации. - М., 2002. - С. 11-13.

վարական գործընթացում հանրային և մասնավոր շահերի հարաբերակցության յուրօրինակ ծանրաչափ, հնարավորություն են տալիս որոշակի հետևություններ անել քրեադատավարական ձևի ժամանակակից հանրային-մրցակցային քրեական դատավարությունը հիմնված է հանրային և մասնավոր շահերի ներդաշնակ համադրման վրա: Անձի իրավունքները կարող են սահմանափակվել դատավարական հարկադրանքի միջոցներով, վերջիններս էլ, իրենց հերթին, կիրառվում են բացառապես այն դեպքում, երբ քրեական դատավարության նպատակների իրականացումն այլ միջոցներով ուղղակի անհնարին է: Դատավարական հարկադրանքի միջոցների նվազագույն, ամհրաժեշտ չափը սահմանելու համար օրենսդիրը ձգտում է սահմանափակել դրա առավելագույն սահմանները, ձգտում է հնարավորինս մանրամասն կանոնակարգել դրանց իրականացման հիմքերը, կարգն ու պայմանները: Դատավարական հարկադրանքի միջոցների օրենսդրական սահմանման ժամանակ նախապատվությունը տրվում է իրավական կարգավորման թույլատրական եղանակին՝ պաշտոնատար անձն իրավասու է կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք ուղղակիորեն նախատեսված են օրենքով: Դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման կարգի խախտումը հանգեցնում է ընդհուպ մինչև քրեական պատասխանատվության<sup>4</sup>:

Քրեական դատավարության ընթացքում կատարվող գործողությունը դատավարական հարկադրանքի միջոց դիտելու համար անհրաժեշտ է, որ այն օժտված լինի հետևյալ առանձնահատկություններով.

**1. Հարկադրանքի միջոցներն ուղղված են անձի ազատ կամաարտահայ-**

**տության սահմանափակմանը, դրանք իրականացվում են անձի կամքին հակառակ:** Այս կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ դատավարական հարկադրանքի միջոցները դատավարական այլ գործողություններից տարբերակելու հիմքում դրվում է հոգեբանական չափանիշը՝ սուբյեկտի վերաբերմունքն իր վրա դրված պարտականության իրականացման նկատմամբ: Եթե նա այդ պարտականությունն իրականացնում է ինքնակամ, առանց կողմնակի միջամտության, ապա ակնհայտ է, որ հարկադրանքի միջոցի մասին խոսք չի կարող<sup>5</sup>: Նման մոտեցումն ընդգծում է դատավարական հարկադրանքի միջոցների՝ միայն բացառիկ դեպքերում կիրառման անհրաժեշտությունը, երբ անձը հրաժարվում է իր վրա դրված պարտականություններն ինքնակամ իրականացնել կամ համոզման մեթոդի կիրառումն սպասված արդյունքի չի հանգեցրել: Այսպիսով, դատավարական հարկադրանքի միջոցների առանձնահատկություններից առաջինն այն է, որ դրանք ուղղված են սուբյեկտի կամքին հակառակ նրա վրա դրված որոշակի պարտականությունների իրականացմանը:

**2. Դատավարական հարկադրանքի միջոցները պետական հարկադրանքի տարատեսակ են հանդիսանում** և իրականացվում են կոնկրետ գործով վարույթ իրականացնող պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից: Քրեադատավարական այլ սուբյեկտների կողմից նշված գործողությունների իրականացումը չի թույլատրվում:

**3. Դատավարական հարկադրանքի միջոցները պետական հարկադրանքի այլ միջոցներից տարբերվում են նաև նրանով, որ դրանց իրականացման կարգն ու պայմանները սահմանված**

<sup>4</sup> Տե՛ս **Смирнов А. В., Калиновский К. Б.** Уголовный процесс. 2-е издание. М., 2006, ??? 232-233:

<sup>5</sup> Տե՛ս **Петрухин И. Л.** Свобода личности и уголовно-процессуальное принуждение. М., 1985, էջեր 53-55.

**են բացառապես քրեադատավարական օրենքով:** Նշված առանձնահատկությունը հենց հանդիսանում է այն քրեական պատժից, վարչական, կարգապահական, քաղաքացիաիրավական և հարկադրանքի այլ տեսակներից տարբերակման հիմք: Այլ կերպ ասած՝ քրեադատավարական հարկադրանքի միջոցները կարելի է բնորոշել որպես վարույթն իրականացնող մարմինների՝ քրեադատավարական իրավունքով նախատեսված գործողությունների և որոշումների ամբողջություն, որոնք ուղղված են քրեական դատավարության այլ մասնակիցների իրավունքների սահմանափակմանը:

**4. Դատավարական հարկադրանքի միջոցներն անհրաժեշտ է տարբերակել քրեադատավարական սանկցիայից և քրեադատավարական պատասխանատվությունից:** Սանկցիան հարկադրանքի՝ որպես նորմի դիսպոզիցիայի խախտման հետևանքի, նորմատիվ բնորոշումն է: Դատավարական հարկադրանքի միջոցները կարող են կիրառվել պրեկենտիվ (կանխարգելիչ) նպատակներով՝ առանց իրավունքի որևէ նորմի դիսպոզիցիայի խախտման: Օրինակ՝ քաղաքացիական հայցի ապահովումը գույքի վրա կալանք դնելու միջոցով: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ոչ բոլոր սանկցիաների իրականացումն է հարկադիր բնույթ կրում: Ընդհանուր առմամբ, սանկցիաները նախատեսում են քրեադատավարական պատասխանատվություն՝ ներգործություն դատավարական նորմերը խախտող անձի նկատմամբ, որը կապված է նրա գործողություններին տրված բացասական գնահատականի հետ, ուստի ակնհայտ է, որ նման պատասխանատվությունը չի կարող նույնանալ դատավարական հարկադրանքի միջոցների հետ<sup>6</sup>:

Դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման ընդհանուր կանոն և

սահման, կարելի է ասել, հանդիսանում է արդարադատության նպատակների իրականացումը, քրեական դատավարության սահմանված կարգի իրականացման, ինչպես նաև դատավճռի պատշաճ կատարման ապահովման անհրաժեշտությունը: Դատավարական հարկադրանքի միջոցները կիրառվում են բացառապես այն ժամանակ, երբ առկա է իրական խոչընդոտ քրեական գործի հետագա ընթացքի համար:

**Դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման ընդհանուր պայմանների թվին են դասվում՝**

- հարուցված քրեական գործի առկայությունը.

- դատավարական հարկադրանքի միջոցի կիրառման իրավասությամբ օժտված սուբյեկտի առկայությունը.

- այն անձի առկայությունը, որի նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցը պետք է կիրառվի<sup>7</sup>:

Դատավարական հարկադրանքի միջոցները կապված են այն իրավունքների բնույթի հետ, որոնց սահմանափակմանն ուղղված են: Սահմանափակող իրավունքի բնույթ է, որ հնարավորություն է տալիս դատավարական հարկադրանքի միջոցները դասակարգել ըստ խստության աստիճանի:

**ԳՅ քրեադատավարական օրենսդրության առումով՝ դատավարական հարկադրանքի միջոցները դասակարգվում են հետևյալ երեք խմբերի՝**

1. կասկածյալի ձերբակալում,
2. խափանման միջոցներ,
3. դատավարական հարկադրանքի այլ միջոցներ:

**Վերջինս իր հերթին դասակարգվում է երկու ենթախմբի՝**

- դատավարական հարկադրանքի միջոցներ, որոնք կիրառվում են մեղադրյալի նկատմամբ,
- դատավարական հարկադրանքի

<sup>6</sup> Տե՛ս **Смирнов А.В., Калиновский К.Б.** Уголовный процесс. 2-е издание. М., 2006, էջեր 232-233.

<sup>7</sup> Տե՛ս **Смирнов А.В. Калиновский К. Б.** Уголовный процесс. 2-с издание. М., 2006, էջ 233:

**քի միջոցներ, որոնք կիրառվում են տուժողի, վկայի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի, փորձագետի, մասնագետի, թարգմանչի, ընթերակայի նկատմամբ:**

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին և դատարանին խափանման միջոցի կիրառության տրամադրված իրավունքը անհրաժեշտ է հասկանալ որպես նրանց պարտականություն այն դեպքում, երբ առկա են քրեական-դատավարական օրենքով նախատեսված հիմքեր այդ միջոցների կիրառության համար:

Ինչպես արդարացի նշված է մի շարք հեղինակների կողմից, որպեսզի խափանման միջոցների կիրառությունը չհանգեցնի չարաշահումների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ոտնահարմանը, դրանք կարող են կիրառվել միայն համապատասխան հիմքերի առկայության դեպքում, իսկ կոնկրետ միջոցների ընտրությունը կախված են այդ ժամանակ հաշվի առնվող մի շարք հանգամանքներից՝ պայմաններից<sup>8</sup>: Նման պայմանների սահմանումը նշել **Մ. Վ. Սմիրնովը**, «**դատավարական հակադրանքի միջոցների ընտրության (կիրառության) պայմանները օրենքի պահանջներն են, որոնք պարտադրում են կոնկրետ գործողությունների իրականացումը և (կամ) որոնց առկայությունը ապահովում է պաշտոնատար անձին, ով օրենքով նախատեսված կարգով հաստատում է դատավարական հարկադրման միջոցների կիրառության հիմքերի առկայությունը, հարկադրման և համապատասխան միջոցների ընտրության իրավաչափությունը**»<sup>9</sup>: Մեր տեանկյու-

նով տվյալ սահմանումը արտացոլում է մեր դիրքորոշումը նրա վերաբերյալ, որ խափանման միջոցների կիրառությունը համապատասխան պետական մարմինների պարտականությունն է:

Ներկայումս գործող խափանման միջոցների համակարգը հիմնականում իրականացնում է իր առջև ծառայած խնդիրները, յուրաքանչյուր կասկածյալին և մեղադրյալին անհատական մոտեցման, քրեական դատավարության ընթացքում պատշաճ վարքագծի հաշվարկով:

Խափանման այնպիսի միջոցները, ինչպես՝ օրինակ՝ կալանավորումը, անկասկած, առավելագույն աստիճանով է սահմանափակում մարդու իրավունքները և ազատությունները, այդ իսկ պատճառով դրանց կիրառությունը հնարավոր է միայն դատական որոշմամբ:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է համաձայնվել **Վ. Ա. Միխայլովի** հետ այն հարցի վերաբերյալ, որ եթե խափանման միջոցի համար հիմքերը առկա են, այն պարտադիր պետք է կիրառվի: Քննչական մարմինների կողմից որևէ ընտրության իրավունքի վերաբերյալ ցուցված հիմքերի օբյեկտիվ հաստատման դեպքում խոսք գնալ չի կարող<sup>10</sup>:

Ինչպես արդարացի նշել են **Մ. Կարենը և Գ. Մ. Մինկովսկին**, խափանման միջոցի ընտրության վերաբերյալ որոշման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրա ընդունման համար բավարար է տվյալների առկայությունը, որոնք վկայում են քրեական-դատավարական օրենքում ցուցված որևէ հետևանքների վերաբերյալ: Սակայն այդ հավանականությունը պայմանավորող բոլոր փաստերը պետք է հավաստի հաստատվեն<sup>11</sup>:

<sup>8</sup> См.: Уголовный процесс. Учебник для студентов юридических вузов и факультетов // Под ред. **К. Ф. Гуценко**. Изд. 3-е. М. 1998. - С. 170.

<sup>9</sup> **Смирнов М. В.** Условия применения мер процессуального принуждения на предварительном следствии // Уголовный процесс. - 2003. - N 4. - 24.

<sup>10</sup> См. **Михайлов В. А.** Меры пресечения в российском уголовном процессе. М., 1996, С. 51.

<sup>11</sup> Петрухин И. Л. Неприкосновенность личности и принуждения в уголовном процессе. М., 1989, С. 107.

# ՀՈՈՄԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷՔԻ ԸՆԴՕՐԻՆԱԿՄԱՆ ՇՈՒՐԶ

## Գոռ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

*Հռոմեական իրավունքը համաշխարհային քաղաքակրթության մեծագույն նվաճումներից է<sup>1</sup>: Որպես կանոն, հռոմեական իրավունքի ռեցեպցիան բնութագրում են որպես ամբողջ մայրցամաքային եվրոպայի և Հնդկանդիայի համար բնորոշ երևույթ, որը կայանում է «հռոմեական իրավական ժառանգությունը որպես գործող իրավունք ընկալման և յուրացման մեջ»<sup>2</sup>:*

*Փորձենք ավելի մանրամասն բնութագրել հռոմեական իրավունքի ռեցեպցիան՝ որպես իրավական ֆենոմեն: Այստեղ պետք է նկատել, որ հռոմեագիտության մեջ ուշադրություն է դարձվել այս հասկացության տարբեր առումներին: Մասնավորապես ընդգծվել է, որ ավատատիրական և բուրժուական եվրոպայում հռոմեական իրավունքի դրույթի վերաբերյալ ռեցեպցիան իրենից ներկայացնում է գործողության վերա-կանգնում, ընտրություն, ձևափոխում, յուրացում<sup>3</sup>:*

Այս դեպքում մենք գործ ունենք ռեցեպցիայի բավականաչափ բազմակողմանի բնութագրման հետ, թեև չի կարելի չնշել, որ խոսքը հիմնականում, այնուհանդերձ, այն միջոցների և եղանակների մասին է, որոնց օգնությամբ կատարվում է ռեցեպցիան, և միայն «յուրացում» բառը ակնարկ է պարունակում ինչ-որ խորքային գործընթացների մասին, որոնք տեղի են ունենում կամ ռեցեպցիայից առաջ, կամ դրա ընթացքում, կամ հանդիսանում են վերջինիս արդյունքը: Դա զգալի չափով նվազեցնում է բերված բնութագրման արժեքը, քանզի այս թվարկումից հե-

տո էլ ռեցեպցիայի ելությունը մնում է չբացահայտված: Ռեցեպցիան բնութագրելիս առավել հաջող է թվում հիշատակությունն այն մասին, որ մենք գործ ունենք արդեն գոյություն չունեցող պետության իրավունքի հետ: Այդ իսկ պատճառով խոսքը պետք է գնա «նախկինում գոյություն ունեցող իրավունքի համակարգի մասին»<sup>4</sup>:

Կարծում ենք, հենց հռոմեական իրավունքի վերածննդի մասին պետք է խոսք գնա առաջին հերթին, քանզի այս պահին առանցքային է նրա ռեցեպցիայի հասկացության բնութագրման ժամանակ:

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս **Виноградов П.Г.** Очерки по теории права. Римское право в средневековой Европе. Под ред. **У.Э. Батлетра** и **В.А. Томсинова.** М., 2010, с. 186-261; **Марей А.В.** К осмыслению феномена рецепции римского права: формирование jus соттинe в Западной Европе в XII-XIV вв. // Государство и право, 2012, N 5, С. 96-102.

<sup>2</sup> **Дождев Д. В.** Римское частное право.- М., 1996, с. 4; Юридическая энциклопедия.- М., 1998, с. 392.

<sup>3</sup> **Косарев А. И.** Римское право,- М., 1986. с. ПО.

<sup>4</sup> **Хвостов В. М.** История римского права.- М., 1910, с. 426.

Այստեղ, անկասկած, «վերածնունդը» նկատի է առնվում ոչ որպես միայն «վերականգնում», այլև այս տերմինի փոխաբերական իմաստով, համաձայն որի ֆրանսիական «renais-sance» բառը մարմնավորվել է ժամանակակից արևմտյան բառապաշարում որպես մեռյալ մշակույթի կամ կենդանի մշակույթի չորացող ճյուղի հասկացություն:

Հիմնվելով քաղաքակրթության պարուրած կարգացման տեսության վրա և այն դիտարկելով իրավունքի ձևափոխումների քաղաքակրթական գործընթացների համատեքստում, մենք կարող ենք դիտել հռոմեական մասնավոր իրավունքի ղեկավարում որպես մի երևույթ, որը ներքուստ բնորոշ է նախորդ քաղաքակրթությունների մշակութային արժեքների «վերածննդին»՝ մարդկային պատմության զարգացման յուրաքանչյուր փուլում: Անհրաժեշտ է ընդգծել, որ ղեկավարող չի կարելի շփոթել «ռեստավրացիայի» (վերականգնման) կատեգորիայի հետ, քանզի վերջինս նշանակում է որևէ բանի, օրինակ, արվեստի ստեղծագործությունների, պատմական հուշարձանների վերականգնում նախաստեղծ վիճակում:

Արտաքուստ այս կատեգորիաները շատ մոտ են միմյանց, սակայն գոյություն ունեն և որոշակի տարբերություններ: Այսպես, ղեկավարողի նպատակն է (և, ըստ էության, վերջնական նպատակը) մշակույթի, իրավունքի ոլորտում հին հենքի վրա որևէ նոր բան ստեղծել: Եթե նույնիսկ դա կատարվում է, օրինակ, այս կամ այն գաղափարների, լուծումների, իրավական նորմերի ուղղակի փոխառման ձևով, որպես արդյունք հանդես է գալիս նոր որակի արգասիք, հասարակական զարգացման նոր պարույրի ընթացքում առաջացող, ձևավորվող մի ինչ-որ նոր բան:

Ինչ վերաբերում է ռեստավրացիային, ապա այն հետապնդում է, ինչ-որ բանի նախնական վիճակում վերականգնելու նպատակ, առանց որևէ փոփոխությունների կամ հավելումների, համեմայն դեպս, առանց այնպիսի հավելումների, որոնք կարող են խաթարել սկզբնական նյութի բնութագիրը կամ նախաստեղծ վիճակը:

Վերոհիշյալը հաշվի առնելով հռոմե-

ական մասնավոր իրավունքի ղեկավարողի կարելի է բնութագրել որպես հետագա քաղաքակրթությունների զարգացման ընթացքում նրա հիմնական սկզբունքների և դրույթների ու ոգու ընկալում և վերածնունդ:

Որպես հասարակական կյանքի խոշոր և բարդ երևույթ, որպես հին աշխարհի, միջնադարի և նոր ժամանակների իրավական զարգացման կապող օղակ, հռոմեական իրավունքի ղեկավարող միջոց գրավել է և դեռ երկար ժամանակ գրավելու է բոլոր նրանց ուշադրությունը, ովքեր հետաքրքրվում և՛ իրավունքով և՛ նրա պատմությամբ: Ուղեկցող կոնկրետ կենսական պահանջի արդյունք է հենց այդ պահանջի բավարարմանը նպատակաուղղված: Այն ոչ թե իրավական ինքնուրույն զարգացման հակաթեզ է, այլ նրա զարգացումը խրախուսող և արագացնող գործոն:

Ուղեկցող բացատրվում է որպես հռոմեական իրավունքի նորմատիվային, գաղափարատեսական այն բովանդակության գործողության վերականգնում (ընտրություն, փոխառում, վերամշակում և յուրացում), որը պիտանի եղավ հասարակական զարգացման ավելի բարձր աստիճանի՝ նոր հարաբերությունների կարգավորման համար: Հռոմեական իրավունքի ղեկավարող ոչ թե առանձնակի, միանվագ իրադարձություն էր, այլ բարդ և բազմաստիճան գործընթաց: Նրա առաջին քայլերն էին հռոմեական իրավունքի ուսումնասիրումը, հիմնական բովանդակությունը անցյալի փորձի օգտագործումը նոր իրավունքի ստեղծման գործում:

**Ընդհանրապես իրավունքի ընդօրինակումը հասարակության իրավական պահանջումներին արդյունք է: Այն կարևոր գործոն և խթանիչ է ազգային ինքնավար իրավական համակարգերի զարգացման համար:**

**Հռոմեական իրավունքի ընդօրինակումը միանգամայն իրադարձություն չէ, այլ իրենից ներկայացնում է բարդ և բազմաստիճան գործընթաց:**

Հռոմեական իրավունքի ընդօրինակման բարդ գործընթացն անցել է երկարատև ժամանակաշրջան և մի շարք փուլերով: Հռոմեական իրավունքի ընդօրին-



նակման փուլերը միմյանցից սահմանազատվում են ոչ միայն ըստ ժամանակաշրջանների, այլև ընդօրինակման եղանակներով, նորովի մեկնաբանման և իմաստավորման, ինչպես նաև գործնական, կիրառական նպատակներով:

Ելնելով վերոնշյալ հանգամանքներից, մասնագիտական գրականության մեջ **հռոմեական իրավունքի ընդօրինակման գործընթացն ընդունված է ստորաբաժանել հետևյալ շրջանների. առաջին փուլ 11-15-րդ դարեր, երկրորդ փուլ 16-17-րդ դարեր և երրորդ փուլ 18-19-րդ դարեր:**

Հռոմեական իրավունքի ընդօրինակման **առաջին փուլին** բնութագրական է հռոմեական իրավունքի հետազոտությունը Իտալիայի քաղաքների ուսումնական կենտրոններում, որը կրում էր ճանաչողական բնույթ և գործնական նպատակներ չէր հետապնդում: **Երկրորդ փուլին** բնորոշ է հռոմեական իրավունքի տարածվելը արևմտաեվրոպական մի շարք երկրներում, որտեղ դրա հետազոտությունը զուգորդվում էր տվյալ պետությունների դատավոր-պրակտիկների կողմից այդ իրավունքի կիրառման հետ: **Վերջապես երրորդ փուլում** առավել խորությամբ և բազմակողմանի վերամշակվում է ողջ հռոմեական իրավունքի ժառանգությունը, որը հիմք է հանդիսանում նոր ժամանակների պահանջներին համարժեք քաղաքացիական օրենսդրության ձևավորման և դրանց համակարգման համար:

Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ հռոմեական մասնավոր իրավունքի ռեցեպցիան, անկախ իր տեսակներից և ձևերից, հանդիսացել է եվրոպական երկրների մեծ մասի մասնավոր իրավունքի ստեղծման հենք և ծառայում է որպես ժամանակակից եվրոպայի մասնավոր իրավունքի ստեղծման հիմք:

Սակայն չպետք է կարծել, թե հռոմեական իրավունքի ընդօրինակումը եվրոպայում ունեցել է միայն կողմնակիցներ, համախոհներ: Ընդհակառակը, այդ գործընթացն ընթանում էր ավատատիրական հասարակական կյանքի մի շարք կողմերի հետ խիստ հակասություններով: Այն իրավունքը, որ պարունակվում էր **Հուստինիանոսի** օրենքների ժողովածուի մեջ

(վերջինս հանդիսանում էր ընդօրինակման հիմնական աղբյուրը), չափազանց բարդ էր և, հետևաբար, գործնական տեսանկյունից նվազ կիրառելի, քանզի ֆեոդալական ոչ զարգացած բնատնտեսությունը կարգավորվում էր տեղական սովորութային իրավունքի նորմերով: Եթե հռոմեական զարգացած իրավական համակարգը խորթ էր ֆեոդալական հասարակության լայն շրջանակներին (գյուղացիությանը, արհեստավորներին, առևտրականներին և այլն), ապա իրենց տեղական սովորութային նորմերը, որոնք ձևավորվել էին դարերի ընթացքում, պարզունակ և մատչելի էին նրանց համար: Սրան էլ որ ավելացնենք այն հանգամանքը, որ հռոմեական իրավունքի իմացության մեծաշնորհը կենտրոնացված էր իրավաբանների նեղ շրջանակում և որոնք իրավակիրառ պրակտիկայում թույլ էին տալիս բազմաթիվ չարաշահումներ, ապա հանրության կողմից համակրանքը հռոմեական իրավունքի և այն գործադրողների նկատմամբ ավելի էր սրվում: Եվ պատահական չէ, որ այն ժամանակվա ժողովրդական բանահյուսությունը խոսում էր երեք կարգի թալանչիների մասին՝ ավագակների, վաճառականների և իրավաբանների:

Այս դիրքերից հռոմեական իրավունքը քննադատում էին նաև լուսավորության և ռեֆորմացիայի ներկայացուցիչները: Այսպես, գյուղացիական պատերազմների շրջանում, 1525 թվականին, ռեֆորմացիայի նախագծերից մեկում պահանջվում էր, որպեսզի **«իրավունքի դոկտորներին արգելեն դատարանում, որևէ իշխանական կամ այլ խորհուրդներում հանդես գալ: Այսուհետ իրավունքի դոկտորները,՝ նշված է այդ նախագծում,՝ երբեք չպետք է խոսեն դատարանի առաջ, չպետք է գրեն և խորհուրդներ տան դատական գործերի վերաբերյալ: Ժողովրդին պետք է վերադարձվի նրա հին՝ հայրենական իրավունքը»:**

Այսպիսով, վերոշարադրյալից կարելի է ենթադրել, որ հռոմեական իրավունքի ընդօրինակումը չի ընթացել հարթ ճանապարհով, այն ունեցել է ինչպես կողմնակիցներ, այնպես էլ հակառակողներ:



# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 81 2014

## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Դատախազության ուղենիշները քրեական քաղաքականության իրականացման գործընթացում.....2
- Հրամաններ.....3
- Միջազգային կապեր.....7
- Սարդու իրավունքների եվրոպական դատարանում.....8
- ՀՀ գլխավոր դատախազության հայտարարությունը.....10
- ՀՀ գլխավոր դատախազության պարզաբանումը.....13
- Նշանակումներ ՀՀ դատախազության համակարգում.....16

### ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

- Արթուր ՂԱՄԲԱՐՅԱՆ, Արդա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ – Դատախազին և փաստաբանին վարույթից հեռացնելը՝ որպես դատավարական պատասխանատվության միջոց.....17

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

- Գևորգ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ – ՀՀ քրեական իրավասության տարածքային սահմանները և դիվանագիտական անձեռնմխելիությունը.....28

### ՈՃԻՐ ԵՎ ՊԱՏԻԺ

- Արամ ՍԻՐԵԿԱՆՅԱՆ – Պատժի դերը հանցագործությունների կանխարգելման գործում.....35

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

- Անի ՍԱՐԳՍՅԱՆ – ՀՀ սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու իրավունքի իրացման նախապայմանները.....39

### ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

- Արթուր ԻԿԼԻԿՅԱՆ – Պետական ինքնիշխանության հատկանիշները.....46

### ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ

- Ալֆրեդ ՍԱԳՈՅԱՆ – Իրավական գլոբալիզացիան որպես արդի դարաշրջանի օբյեկտիվ երևույթ.....52

### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

- Արսեն ԱՅՎԱԶՅԱՆ - Դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման օրինակաճանաչման նկատմամբ դատական վերահսկողության էությունը և բովանդակությունը.....56

### ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

- Գոռ ԱՌԱՔԵԼՅԱՆ – Հռոմեական իրավունքի ընդօրինակման շուրջ.....61